

ՆԱԽՈԿՐԹՈՒՆՔ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ

ՅՈՐԻՆԵԱԾ

Ի ՊԵՏԱ ԱՋԴԱՑԻՆ ԴՊՐՈՑԱՑ

Ի ԳԱՐՐԻՎ ԱՐԵՎԱՐԱՎԱՐԱ
ԱՇԽԱՏԵ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՄ Դ.

Հ 67873

504.

Ի ՎԱՂԱՐՃԱՎԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ Էջմիածնի

Թ-ՑԻԶ - 1877

ԳՐԱԴԱՎՈՅԱՆ

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՐԵՎԱՏՅԱՆ

ՎԼՈՒԹՈՒՄ 485733 08404

ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ԳԵՂՋՐԴԱՅ Դ.

ՎԵՀԱՓՈԽ ԵՒ ՄՐԱՎՃԱԳՈՅՆ ԿԱՐՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՊԵՆ ՀԱՅՈՑ.

A 67875
Ա 11
ԱՌ ՎԵՐԺԱԿՊՆԵՑՍ

Դախակրթանաց երկրորդ մասը սովորիլ ոկտող աշակերտք արդէն վարժած կը լինին որ եւ իցէ պարզ բնագիր դիւրաւ հասկընալու եւ միար առնելու ուստի վարժապետը կրնայ ճամարձակ պահանջել որ այսունետեւ առաջին դասերուն բնագիրը թէ եւ երկոյնկիկ լինի՝ լաւ սերտեն ու յօդուած առ յօդուած աշխարհարառ:

Երկրորդ դասին մէջ ճարկ լինիր բնագրին մէջի բառերուն նշանակութիւնը մի առ մի սովորեցնելու, թէպէտ եւ միշտ օգուտ է անոնց մեկնութիւնները եւ բացատրութիւնները տալ. այլ աւելի եւս օգտակար կրթութիւն է՝ նոյն բնագրին ամբողջ ամբողջ խօսքերուն իմաստներն ընարանոք եւ զատ զատ բացարել, ու պահանջել որ տղայր իւրաքանչիւր խօսքը ճիշտ թարդմաննն զի արառէն աշխարհարառ, եւ աշխարհարառէն գրաբառ: Եւ որովհետեւ այս դասը միւսներէն աւելի դիւրին կուգայ աշակերտոց, պէտք է միանգամայն ուղղագրութեան կրթութիւն անեն նոյն խօսքերուն վերայ՝ սեւ տախտակին վրայ գրելով:

Երրորդ դասը, այսինքն գրուցատրութիւնը, մնծապէս օգտակար կրթութիւն է, եւ զարմանալի զիւրութեամբ կընտանեցընէ աշակերտաց մաքին նոցա սերտած բնագրին եւ ընդհանրապէս գրաբառ. լեզուին հասկցողութիւնը:

Իսկ չորրորդ դասով կսկսին աշակերտք սովորիլ Քերականութեան դիմուուր կանոնները:—Վարժապետներուն կմնայ՝ այս դասը սովորեցնելու ժամանակ՝ այն կանոններուն օրինակներ ո՛րբան կարելի է շատ դնել աշակերտաց առջեւը, ըստ կարի՝ նոցա արդէն առաջին մասին մէջ սերտած բնագիրներուն մէջէն քաղելով, յետոյ պահանջել որ տղայր եւս իրենց բովէն փնտուեն ու գտնեն այնպիսի օրինակներ՝ նոյնպէս իրենց գիտցած բնագիրներուն մէջ:

Վերջապէս, ինչպէս առողջն մասին՝ նոյնպէս եւ այս երկրորդին գործածութեանը ատեն պետք է վարժապետներն ընդհանրապէս հաստատուն պահեն այս անհրաժեշտ օրէնքը թէ տղայրոց բան սովորեցնելու ժամանակ անպատճառ հարկաւոր է՝ ծանօթէն անծանօթին երթալ, այսինքն առաջ այն բանը ծգել նոցա միտքը զոր արդէն սովորած ին կամ զիտեն, եւ յետոյ ցուցընել նոցա նոր սովորելիքը՝ իրեւ զիտցածներուն անմիջական հետեւանք ու նման:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԻՆԵԱԿ ՄԱՌԻՆ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Հրաման ետ Փարաւոն ժողովրդեան իւրում՝ զամենայն արու որ ծնանիցի նրբայեցւոց՝ ի գետ ընկենուլ, եւ զամենայն էգ ապրեցուցանել:

2. Իրբեւ ծնաւ Մովսէս, տեսանէին զնա ծնողքն նորա կայտառ, եւ թաքուցին զնա ամիսս երիս:

3. Եւ իբրեւ ոչ եւս կարէին թաքուցանել, առ մայրն նորատապանակ պըրտուեայ, եւ ծեփեաց զնա կպրաձիւթով. եղ ի նմա զմանուկն, եւ ընկեց զնա ի խաղ մի գետոյն: Եւ դիտէր

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Փարաւոն հրաման հանեց իւր ժողովրդին, որ Նբրայեցիք ո՛րքան մանչ զաւակ որ ունենան՝ գետը ձբգուին, եւ ո՛րքան էգ որ լինի՝ ողջ մնայ:

2. Երբոր Մովսէօր ծնաւ, ծնողքը տեսան որ ժիր ու գեղեցիկ է, երեք ամիս պահեցին զինքը:

3. Երբ այլ եւս չէին կըրնար պահել, մայրը եղէ գէհիւսած սնտուկ մի առաւ ու կպրաձիւթով (Կէֆնակ) ծեփեց զայն. մէջը դրաւ տղան, ու գետին ման եկած մէկ տեղը ձգեց: Խոկ տղուն

քոյրն նորա ի հեռաստանէ, տեսանելթէ դինչ անցք անցանիցեն ընդ նա:

4. Իջեալ դուստրն Փարաւոնի լուանալ ի գետն, եւ նաժիշտք նորա շրջէին առ գետովն: Եւ տեսեալ զտապանակն ի խաղի անդ՝ առաքեաց զնաժիշտ մի առնուլ դնա:

5. Երաց եւ ետես զմանուկն. եւ լայր մանուկն ի տապանակի անդ:

6. Խանդաղատեցաւ զնովաւ դուստրն Փարաւոնի եւ ասէ. ի մանկանց Երրայեցւոց է գա:

7. Ասէ քոյրն նորա ցըդուստրն Փարաւոնի. կամիս զի կոչեցից քեզ կին մի դայեակ ի յնբրայեցւոց անտի: Եւ մնուցանիցէ քեզ զմանուկդ: Ասէ Դուստրն Փարաւոնի. երթ:

8. Գնաց աղջիկն եւ կոչեաց զմայր մանկանն, եւ

քոյրն հեռաւանց կդիտէր որ տեսնէ թէ անոր վերջը ինչ պիտի լինի:

4. Փարաւոնի աղջիկը իշած լինելով որ գետին մէջ լուացուի: Երբոր նորա աղախինները գետին քովերը կպտըտէին, տեսաւ մնաւուկը խաղին մէջ, աղախիններէն մէկը յուղարկեց որ առնու:

5. Բացաւ, տեսաւ տղան, որ մնաւուկին մէջ կուլար:

6. Փարաւոնի աղջիկը գուրգուրաց տղան վերայ եւ ասաց. դա Երրայեցւոց ազացմէն է:

7. Տղան քոյրն ասաց Փարաւոնի աղջկանը. կկամենան որ դայեակ (ծծմար) մի կանչեմ Երրայեցիններէն, որ այդ տղան մեծցընէ: Փարաւոնի աղջիկն ասաց թէ գնա:

8. Գնաց աղջիկն ու տրգուն մայբը կանչեց. Փարա-

ասէ ցնա դուստրին Փարա-
ւոնի. առ զմանուկդ եւ սնո
ինձ զդա, եւ ես տաց քեզ
զվարձս քու.

9. Եւ առ կինն զմանուկն
եւ մնոյց զնա. եւ իբրեւ
հաստատեցաւ մանուկն, ած
զնա առ դուստրն Փարաւո-
նի, եւ եզեւ նմա յորդեգի-
րըս. եւ անուանեաց զա-
նուն նորա Մովսէս. ասէ,
ի ջրոյ անտի հանի զդա:

ւոնի աղջիկն ասաց անոր-
այդ տղան առ ու ինձի հա-
մար մեծցուր. ես քու վար-
ձըդ կվճարեմ:

9. Կնիկ մարդը առաւ
տղան ու մեծցուց. եւ երբ որ
տղան բաւական մեծցաւ,
տարաւ Փարաւոնի աղջկա-
նը, որոյ որդեգիրն եղաւ. եւ
նա անունը Մովսէս գրաւ-
ասաց թէ ջրէն հաներ եմ
զինքը:

ԳԱՅ Բ.

ՀԱՏԵՆՑԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Զամենայն արու որ ծնանիցի Եր-
րայեցւոց.

Զամենայն Էկ ապրեցուցանել.

Տեսանեին զնա կայտառ.

Ու ևս կարէին թաքուցանել.

Տապանակ պղտուեայ

Մեփեաց զնա կարածիւթով.

Ընկեց զնա ի իւաղ մի զետոյն.

Քոյրն նորա դիտէր ի չեռաստանէ.

Երբան մանչ որ ծնի Երրայեցւոց
մէջ.

Ամեն աղջիկ տղայ ողջ թոշուշ,
Տինձ ու զեղեցիկ կտեսնեմ զինքը,
Այլ ևս չէին կրնար ծածուկ պա-
հէլ.

Բարակ եղէզէ սնտուկ կամ սա-
պատ.

Կարածիւթով ծնփեց զոյն.

Գետին մէկ խաղը՝ պաշտած մեղը
ձգեց զինքը:

Քոյրն հեռուանց կդիտէր:

Զի՞նչ անցք անցանիցն ընդ նա.
Նտես զտապանակն ի խաղի անդ.

Առողեաց զնոմիշտ մի.

Երաց զտապանակն և ետես զմա-
նուկն.

Լայր մանուկն ի տապանակի անդ.

Դուռորն Փարաւոնի խանդադա-
տեցաւ զնովաւ.

Ի մանկանց Երրայեցւոց է դա.

Կամի՞ս զի կուլեցից քեզ կին մի
գայեակ.

Սնուցանիցէ զմանուկդ.

Կոշեաց զմայր մանկանն.

Ա՛ռ դմանուկդ և սնո բնձ զդա.

Ես տաց քեզ զվարձն քո.

Առ կինն զմանուկն և անոյց զնա.

Երրեւ հաստատեցաւ մանուկն.

Ած զնա առ դուռարն Փարաւոնի.

Եղեւ նմա յորդեզիրս.

Անուանեաց զանուն նորա Մով-
սէս.

Ի ջրս անտի հանի զդա.

Գլխին բնչեր պիտի անցնեն:

Տեսու տապանակը ոյն խաղին
մէջ :

Աղախին մի յուղարկեց.

Սնուուկը բացաւ, ու տղան տեսաւ.

Կուզար տղան մնառուկին մէջ :

Փարաւոնի աղջիկը գուրզուրաց
վերան:

Դա Հրեից տղոցմէն է:

Կուզե՞ս որ ծեմար մի կանչեմ
քեզի:

Այդ տղան մեծցընէ:

Կանչեց տղուն մաշրը:

Առ այդ տղան ու մեծցուր բնձէ
համար:

Ես կուտամ քեզի քու վարձդ:

Կինը զտղայն առաւ ու մեծցուց:

Երրօր տղան հաստատեցաւ, տա-
րիքը քիչ մը առաւ:

Տարաւ զինքը Փարաւոնի աղջկանը:

Նորա որդեզիր՝ հոգեզաւակ եղաւ:

Անունը Մովսէս զրաւ:

Այն ջրէն հանեցի այդ տղան:

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ՀՅՀԱՆ+.

Ո՞վ ետ հրաման ժողովրդեան իւ-
րում.

Զի՞նչ էր հրամանն.

Զ. հրամանն էր ապրեցուցանել.

Ո՞ւ ետես կայտառ զՄովմէս.

Զի՞նչ արարին ընդ նա.

Ո՞չափ ժամանակս թագուցին
զնա.

Զի՞նչ արարին յիտ երից ամսոց.

Զի՞նչ էառ մայրն նորա.

Ի՞ւ ծեփեաց զտապանակն.

Զի՞նչ եղ ի նմա.

Ո՞ւր ընկեց զնա.

Ո՞ զիտէր ի հեռաստանէ.

Զի՞նչ առնէր քոյրն.

Զի՞նչ կամէր տեսանել.

Ո՞վ եջ ի զետն.

Առ ի՞նչ էջ նա.

Զի՞նչ առնէրն նաժիշտք նորա.

Զի՞նչ ետես զուստը Փարաւոնի.

Զ. առաքեաց առնուլ զնա.

Զի՞նչ ետես ի տապանակի անդ.

Զի՞նչ առնէր անդ մանուկն.

Զի՞նչ զդաց զուստը Փարաւոնի.

Պ-Պ-Ի-Ն-Ե-

Փարաւոն.

Զամենայն արուս Երբայիցոց ի
զետ ընկենուլ.

Զամենայն եզ

Մնողք նորա տեսին.

Թաքուցին զնաւ

Զամիսս երիս.

Ոչ եւ կարէին թաքուցանել զնաւ
Տապանակ պրուելոյ:

Կարաձիթով.

Զանուին:

Ի խաղ մի զետշն:

Քոյրն նորա:

Դիտէր ի հեռաստանէ:

Թէ զի՞նչ անցք անցանիցեն ընդ
մանուկն:

Դուստրն Փարաւոնի:

Լուանալ ի զետն:

Շրջէին զգեստովն:

Զտապանակն ի խացի անդ:

Զնաժիշտ մի:

Զանուին:

Խանդադատեցաւ զնովաւ:

Եւ զի՞նչ ասաց.

Զա՞ ասաց քոյրն նորա կոչել.

Եւ ի՞նչ կամեր կոչել զգայհակն.

Զի՞նչ ասաց յնա դուստրն Փա-
րաւոնի.

Զա՞ կոչեաց աղջիկն.

Զի՞նչ ասաց դուստրն Փարաւոնի
ցմոյր մանկանն.

Երբ ած մայրն զմանուին առ
դուստրն Փարաւոնի.

Զի՞նչ եղեւ այնու հետև մանու կն.

Դուստրն Փարաւոնի զի՞նչ ա-
նուսնեաց զանուն նորա.

Ուստի՞ ասէր հանեալ զնա.

Ի մանկանց Երբայեցւոց է դա:

Կին մի դայեակ:

Զի սնուցանիցէ նմա զմանուին:
Ե՛րթ:

Զմոյր մանկանն:

Ա՛ռ զմանուիդ և անձ ինձ զդա-
և ես ասց քեզ զվարձս քո:

Երբեւ հաստատեցաւ մանուին:

Եղեւ դստերն Փարաւոնի յօրդեղիրս:

Մոխէտ:

Ի ջրոց անտի:

ԳԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԲԽՏ.

Հ. Ի՞նչ է բայը.

Պ. Բայը փոփոխելի բառ է՝ որ կնշանակէ լինել, անել,
կամ կրել. Ժամանակով՝ եղանակով՝ թուռվ՝ եւ դիմօք.
զոր օրինակ ինչէմ, ինչէմ, ինչո՞ւմ, եղայ, աինչո՞ւնի, աինչո՞ւ-
շանի, եւ այլն:

Հ. Բայերուն ժամանակը քանի՞ է.

Պ. Երեք. Ներիայ, Անցեալ, եւ Աղառնի. Ներկան կցուցընէ
թէ գործողութիւնը այժմ կլինի, կամ լինելու վերայ է.
զոր օրինակ՝ չնայ (ինչո՞ւմ), սիրեմ (ինչէմ): Անցեալը կցու-

յընէ թէ գործողութիւնը անցած է. զօր օրինակ Երևայի (Էրե-
նայի), Ապաս (Գնայի)։ Ապառնին կցուցընէ թէ գործողութիւ-
նը դեռ պիտի լինի. զօր օրինակ Երևայց (Էրեմ, կամ ոչոէ
Երևամ), ոչըցէց (Կոչեմ, կամ ոչոէ ոչեմ), եւ այլն։

Հ. Բայերուն եղանակները քանի՞ են.

Պ. Երեք. Առհմանական, Նշանայական և Արդարականական։
Հ. Բայերուն թիւը քանի՞ է.

Պ. Անուններուն պէս երկու Եղակնեւ յաջնակն. զօր օրի-
նակ Եղ. ոչեմ, Յոգնակի ոչը. Տ+:

Հ. Բայերուն դէմքը քանի՞ է.


Պ. Դերանուններուն պէս երեք. առաջին, Երեւեր եւ Եր-
ւեր. զօր օրինակ Ոչեմ, Ոչնիս, Ոչնէ։

Հ. Բայերն ընդհանրապէս քանի՞ տեսակ կամ ուր կը-
բաժնուին.

Պ. Չորս. Խական, որ է Եմ, “Երեւերական, ինչպէս, ոչըմ,
ունանէմ. — Ելք առաջ էան, ինչպէս, ոչըմ (Կոչեմակմ), տեսանիմ
(կտեսմուիմ). — Չէլու+, ինչպէս Քնամ, Թում, +աղցնում։

Հ. Բայերուն կերպ կերպ փոփոխութիւը ի՞նչ կասուի.

Պ. Խսնաբնամ, (ինչպէս որ անուններունը կասուի հոլո-
վամ.) եւ կլինի չորս տեսակ կանոնաւոր յարդունակութէ-
(ինչպէս որ անուններուն հոլովումը կլինի հոլովներով)։



ԵՐԹՆԵՐԿ ԵՐԿՐՈՒ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Եհար Տէր ի հասարակ գիշերի զամենայն անդրանիկ յերկրին Եգիպտացւոց. յանդրանկանէ անտի Փարաւոնի որ նստէր յաթոռ նորա, մինչեւ յանդրանիկ գերւոյն որ կայր ի վիրապի, եւ զամենայն անդրանիկ անսամնոց։

2. Յարեաւ Փարաւոն գիշերայն՝ ինքն եւ ամենայն ծառայք իւր. եւ եղեւ աղաղակ մեծ յերկրին Եգիպտացւոց. զի ոչ գոյր տուն յորում ոչ գոյր մեռեալ ի նմա։

3. Կոչեաց Փարաւոն ըզ-Սովոէս եւ զԱհարոն գիշերայն, եւ ասէ ցնոսա. Արկը եւ ելէք ի ժողովրդենէ իմմէ՛ եւ գուք եւ որդիքն իս-

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Աստուած կէս գիշերուն զարկաւ (մեռուց) Եգիպտացւոց երկրին բոլոր անդրանիկները. Փարաւոնի անդրանիկէն՝ որ նորա աթոռը կնստէր, մինչեւ այն գերիին անդրանիկը՝ որ գետնի տակ կկենար, անասուններուն եւս ամեն առջինեկը։

2. Փարաւոն գիշերանց ելաւ տեղէն, հետն ալ իւր բոլոր ծառաները, եւ մեծ գոռում գոյւում եղաւ Եգիպտացւոց երկրին մէջ. վասն զի տուն չկար որ մէջը մեռել լլինէր։

3. Կանչեց Փարաւոն Մովսէսն ու Ահարոնը, եւ ասաց անոնց. ելէք զնացէք իմ ժողովրդեանս մէջէն՝ թէ դուք եւ թէ Խորայէլի որ-

բայէլի, երթայք եւ պաշտեցէք զջէր Աստուած ձեր, եւ զարջառ եւ զոյխար ձեր առեալ զնացէք՝ որպէս եւ ասացէքն. բայց եւ զիսօրհնեցէք:

4. Եւ բռնադատէին Եգիպտացիքն զժողովուրդն՝ փութանակի ելանել յերկրէ անտի. քանզի ասէին՝ թէ ամենեքին իսկ մեռանիմք:

5. Եւ առ ժողովուրդն զհայսն իւրեանց մինչեւ խմորեալ էր, եւ զզանդուածըս իւրեանց ծրարեալ ի կտաւս՝ ի վերայ ուսոց իւրեանց:

6. Եւ խնդրեցին յնգիպտացւոցն անօթս ոսկեղէնս եւ արծաթեղէնս եւ հանդերձս, եւ կողոպտեցին զեգիպտացիսն.

Դիքը. գնացէք պաշտեցէք ձեր Տէր Աստուածը. ձեր տուարն ու ոյխարն եւս առէք գնացէք՝ ինչպէս որ ասկը. բայց եւ զիսօրհնեցէք:

4. Եգիպտացիքն ալ կըստիպէին ժողովուրդը որ շուտով ելլեն իրենց երկրէն. վասն զի կասէին թէ ամենքը ալ կմեռնիմք:

5. Ժողովուրդը առին իրենց խմորը՝ քանի որ գեռ խմորուած (մայան եկած) չէր, եւ իրենց զանդուածներն ալ կտաւներով զարկին իրենց ուսերը:

6. Խնդրեցին Եգիպտացիներէն նա եւ ոսկիէ ու արծաթէ զարդարանքներ ու հագուստներ, եւ կողոպտեցին նգիպտացիները:

ԴԱՍ

ՀԱՏԵՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

ԵՀՅՈՐ զամենայն անդրանիկ.

Ի հասարակ զիշերի.

Ի հասարակ աւուր.

Եերկրին Եղիպտաց: ոց.

Եերկրին Հայոց.

Անդրանիկն Փարաւոնի նատէր յառ
թռու նորա:

Գերին կոյր ի վիրապի.

Յարեւա Փարաւոն զիշերայն.

Յարեւան ծառայքն Փարաւոնի.

Եզե աղաղակ մած.

Ոչ դոյր տուն.

Ոչ դոյր քաղաք.

Ոչ դոյր մեռեալ ի նմա.

Կոչեաց Փարաւոն զՄովսէս.

Կոչեաց զԱհարոն զիշերայն.

Ասիք և ելքք ի ժաղավրդենէ խմել.

Երիմայք և սուշտեցէք զԱստուած
ձեր.

Զարշառ և զոշխար ձեր առեալ
զնացէք.

Որդէս և ասացէքն.

Որդէս և տեսէքն.

Բանագատէին Եղիպտացիքն զժու-
ղովուրդն.

Փարաւանակի ելանել.

Ամէն անդրանիկները զարկաւ
ապանեց.

Կէս զիշերուն:

Կէս օրը կէս օրին:

Եղիպտասի մէջ:

Հայաստանի մէջ:

Փարաւոնի անդրանիկը նորա ա-
թռու կնստէր:

Գերին զեանի տակ կբնակէր:

Ելաւ Փարաւոն զիշերով:

Փարաւոնի ծառաները ելան:

Մեծ զռում զոշում եղաւ:

Տռւն չկար, տռւն մի չկար:

Քաղաք չկար, քաղաք մի չկար:

Մէջը մեռել չկար:

Կանչեց Փարաւոն Մովսէոր:

Կանչեց Ահարոնը զիշերով:

Ելէք զնացէք իմ ժողովրդին մէջէն:

Գնացէք պաշտեցէք ձեր Աս-
տուածը:

Ձեր տուարն ու ոչխարներն առէք
զնացէք:

Խնդիքս որ ասիք:

Խնդիքս որ տեսաք:

Եղիպտացիք կնեղէն կսափակէին
ժողովուրդը:

Երաւընք ելանել.

Փութանակի ռւտել.

Ամենաքին իսկ մըռանիմք.

Առ ժողովուրդն զհայսն իւրեանց
Մինչչև խմորեալ էր.

Մինչչև եղեալ.

Զզանգուածս իւրեանց ծրարեալ
ի կոտաւ.

Ի վիրայ ուսոց իւրեանց.

Ի վիրայ զիխոց իւրեանց.

Խնդրեցին յԵզիպտացւոցն անօթս.

Խնդրեցին ի նոցանէ հանդերձս.

Կողոպտեցին զԵզիպտացիսն.

Արտորալով ռւտել, շուտ շուտ
ռւտել.

Ամենքս ալ կմեռնիմք:

Ժողովուրդը իրեց խմորը առին:
Քանի որ խմորը չէր եկած, դեռ
չխմորուած.

Քանի որ չէր եկած, դեռ չեղած:
Իրեց շաղուած խմորները կտաւ.
Ներու մեջ փաթթած:

Իրեց ուսերուն վիրայ:

Իրեց զլուխներուն վիրայ:

Ու զեցին Եզիպտացիներէն աման-
ներ:

Հազուսաներ ու զեցին անոնցմէ:

Եզիպտացիները կողոպտեցին, թալ-
նեցին.

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հարցուած:

Ո՞ եհար զանդանիկս Եզիպտաց-
ւոց.

Երբ:

Յորո՞մ աշխարհի.

Զո՞ր անդրանիկս եհար.

Զի՞նչ առնէր անդրանիկն Փարա-
ւոնի.

Ո՞ր կայր դերին.

Պատուած:

Ի հասարակ զիշերի:

Երկրին Եզիպտացւոց:

Յանդրանիկանէ Փարաւոնի ցանդ-
րանիկ զերւոյն:

Նստէր յալժառ նորա:

Ի վիրապի:

Զի՞նչ եհար յանամնոց
Ե՞րբ յարեաւ Փարաւոն։
Զի՞նչ եղեւ յերկրին Եղիպտացւոց
Զա՞ կոչեաց Փարաւոն։
Աւատի* ասաց ցնոսա ելանել։
Զա՞ հրաման ետ պաշտել։
Զի՞նչ ասաց առնուլ եւ երթոր։
Զա՞ խնդրեաց օրհնել։
Զա՞ բանադատէին Եղիպտացիքն։
Առ ի՞նչ բանադատէին զնոսա։
Զի՞նչ ասէին։

Զամենայն անդրանիկ։
Գիշերայն։
Աղազակ մճե։
ԶՄովսէս և զԱհարօն։
Ի ժողովրդնե իւրմէ։
ԶՏէր Աստուած իւրեանց։
Զարջառ և զցիսար իւրեանց։
Զիտ ասէ օրհնեցէք։
Զժողովուրդն։
Փութանակի ելանել յերկրէ անտի։
Ասէին՝ թէ ամենեցին իսկ մեռա-
նիմք։
Զհայն իւրեանց։
Մինչչև խմորեալ կը։
Զզանգուածս իւրեանց։
Ի վերայ ուսոց իւրեանց։
Անօթս և հանդերձս։
Ասկեղջնս և արծաթեղինս։
ԶԵղիպտացիսն։

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԷԱԽԱՆ ԲԱՑ.

Հ. Էական էմ բայը լինչպէս կիսոնարհի։
Պ. Սահմանական եղանակի ներկայ։
Նմ, եօ, է. եմք, էք, են.
Ամիսուաք. էի, էիր, էր. էաք, էիք, էին։

Արտադայական. Եր էք, երուք:

Ստորագասական եղանակին ներիայ.

Իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն:

Դերբայ անորիշ. Ել:

Դերբայ անցեալ. Էալ.

Դերբայ ապառի. Էլոց:

Հ. Ի՞նչ է Դերբայը.

Պ. Դերբայ, որ բայի տեղ դրուսղ ասել է, բայերուն այն ձեւն՝ են որ թէ անուանի նման են ըստ խմլք, եւ թէ բայի պէս ժամանակ եւ եղանակ կցուցընեն, եւ ըստ տեղւոյն ամեն դէմքի կյարմարին:

Հ. Դերբայները քանի՞ տեսակ են.

Պ. Երեք. անորիշ, անցեալ եւ ապառինի:

Հ. Անորիշ դերբայը ո՞րն է.

Պ. Անորիշ կասուի այն դերբայն որ ամեն ժամանակներու, եղանակներու եւ դէմքերու կյարմարի ըստ տեղւոյն ինչպէս գնալ, անուանել, ոչըել:

Հ. Անցեալ դերբայը ո՞րն է.


Պ. Անցեալ կասուի այն դերբայն որ եղած ու անցած բան կցուցընէ. զոր օրինակ գնացեալ, անուանել, ոչըեցեալ:

Հ. Ապառի դերբայն ո՞րն է.

Պ. Ապառի կասուի այն դերբայն որ լինելու կամ անելու բան մի կցուցընէ. զոր օրինակ գնաւոց, անուանելոց, ոչըելոց:

Հ. Ե՞ բային նման խօնարհում ունեցող բայեր շատ կան:

Պ. Ե՞ բայը արմատ կհամարուի միւս գրեթէ ամեն բա-



յերուն, թէպէտ եւ իրեն եղանակներուն ու ժամանակներուն միայն գլխաւորները գործածական են:

Հ. Ուրիշ էտան բայ կանց թէ ոչ.

Պ. Եշտան կհամարուէին ատենով նաեւ այս բայերը, եղանիս, լինիս, գում. բայց սոքա այժմ իրաւամբ չէր+ զարտուղի բայերուն կարգը կդրուին.

ԵՅԹՆԵՑՆ ԵՐՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Տեսեալ ժողովրդեանն եթէ յամեաց Մովսէս իջանել ի լեռնէ անտի, կուտեցաւ ի վերայ Ահարոնի եւ աօէ. արի եւ արա մեզ աստուածո՛ որ առաջնորդեցեն մեզ. զի այրն այն Մովսէս որ եհան զմեզ յերկրէն Նգիպտացւոց, ոչ գիտեմք զի եղեւ նմա:

2. Ասէ ցնոսա Ահարոն. կողովտեցէք զգինդո ոսկիս յականջաց կանանց եւ ուս-

1. Երբ տեսաւ ժողովուրդըն որ ուշացաւ Մովսէս լեռնէն իջնելու, դիզուեցաւ Ահարոնի վերան ու ասաց. ել մեղի աստուածներ (կուռք) շինէ որ ճանապարհ ցուցընեն մեղի. վտարն զի այն Մովսէս անունով մարդն որ Նգիպտոսէն հանեց զմեզ՝ չգիտեմք ինչ եղաւ:

2. Ահարոն ասաց նոցաքաշեցէք առէք ձեր կանանց եւ որդւոց եւ աղջ-

աերաց եւ դստերաց ձերոց,
եւ բերէք առ իս: Եւ ամե-
նայն ժողովուրդն կողոպ-
տեաց զգինդս ոսկիս յա-
կանջաց իւրեանց եւ բերին
առ Ահարոն:

3. Ընկալաւ Ահարոն զնո-
սին ի ձեռաց նոցա, ձուլեաց
քանդակագործով, եւ ա-
քար որթ ձուլածոյ: Նինեաց
եւ սեղան առաջի նորա, եւ
քարոզ կարդաց եւ ասէ.
տօն Տեառն առ վաղիւ:

4. Եւ կանխեալ ի վաղիւ
անդք Եհան ողջակէզս, եւ
մատոյց զօհս փրկութեան:
Եւ նստաւ ժողովուրդն
յուտել եւ յըմպել, եւ յա-
րեան ի խաղալ:

5. Դարձաւ Մովսէս՝ Էջ
ի լեռնէ անտի, եւ երկու
տախտակքն քարեղէնք ի
ձեռս նորա, գրեալք յեր-
կոցունց կողմանց, եւ գիրն
գիր Աստուծոյ՝ գրոշմեալ ի
տախտակմն:

կանց ականջներէն ոսկիէ
օղերն ու ինծի բերէք: Եւ
բոլոր ժողովուրդը հանեցին
իրենց ականջներէն ոսկիէ
օղերն ու բերին Ահարոնին:

3. Ահարոն ընդունեցաւ
օղերը նոցա ձեռքէն, թա-
փեց ու քանդակել տուաւ,
եւ թափծու որթ մի շինեց:
Սեղան եւս կանգնեց նորա
առջեւն ու քարոզութիւն
արաւ ու ասաց. վաղը Աս-
տուծոյ տօնն է:

4. Երկրորդ առաւօտը
կանուխ ելաւ, ողջակէզներ
արաւ ու փրկութեան զո-
հեր մատոյց: Յետոյ նստաւ
ժողովուրդն ուտելու խմե-
լու, եւ ելաւ խաղալու:

5. Դարձաւ իջաւ Մովսէս
լեռնէն. երկու քարէ տախ-
տակներն եւս ձեռքը՝ որ
երկու կողմը գրուած էին,
գիրն եւս Աստուծոյ գիր՝
տախտակներուն վերայ տը-
պաւորուած:

6. Երբեւ մերձեցաւ ի
բանակ անդք, եւ ետես զոր-
թըն եւ զպարաւորսն բար-
կացեալ սրտմտութեամբ՝
ընկէց ի ձեռաց իւրօց ըգ-
տախտական երկօսին եւ
խորտակեաց զնոպա առ ըս-
տոքոտովլիերինն. Եւ առեալ
զօրթն զոր արարին՝ այրեաց
հրով, եւ խարտեաց զնա
մանը, եւ ցանեաց ի վերայ
ջրոյն եւ արբայց որդւոցն
նօրայելին.

6. Երբ որ մօտեցաւ բա-
նակին. ու տեսաւ որթը եւ
չորս դին պար բանողնե-
րը, սաստիկ բարկացած՝
երկու տախտակները ձեռ-
քէն վար ձգեց եւ կոտր-
տեց լեռան ստորսար. Նո-
ցա շինած որթն եւս առաւ,
կրակի մէջ այրեց մանրեց
խարտոցով ու ցանեց ջրե-
րուն վերայ, եւ այն ջրերը
նօրայելի որդւոցը խմբուց.

ԴԱՍ Բ.

ՀԱՏԼՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Յամեաց իջանել ի լեռնէ անտի.
Կուտեցաւ ժողովուրդն ի վերայ
Ահարոնի.
Արա մեզ աստուածս.
Առաջնորդեսցն մեզ.
Այն պահանջն այն Մովսէս.
Ու զիտեսմք զի եղեւ նմա.
Կողոպացեք զզմնդո յականջաց
նոցա.
Իերին զզմնդո ուկիս առ Ահարոն.

Ուշացաւ իջնելու ոյն լեռնէն.
Ժողովուրդը Ահարոնին զզումը դի-
զուեցաւ.
Պուռը շինէ մեզի,
Առաջնորդութիւն աննն, ճանա-
պարհ ցուցընեն մեզի.
Այն Մովսէս ըսուած մարզը.
Զզիտեմք ի՞նչ եղաւ անոր.
Քաշեցէք առէք նոցա ականջնե-
րին ողերը.
Իերին սսկիէ օղերն Ահարոնին.

Անկալաւ Ահարան զգինդան.

Արար որթ ձուլածոյ.

Ենեաց սեղան առաջի նորա.

Քարոզ կարդաց.

Տօն Ցեառն առ վաղիւ.

Կանխեաց ի վաղիւ անդր.

Եհան ողջակէզս.

Մատոյց զոհս փրկութեան.

Խօտաւ ժողովուրդն յուտել և

յըմակել.

Յարեան ի խաղալ.

Դարձաւ էջ Մովսէս ի լունէ անտի.

Երկու ասխտակէքն քարեղնը.

Գրեալք յերկոցունց կողմանց.

Գիրն՝ զիր Աստուծոյ.

Մերձեցաւ ի բանակ անդր.

Ետես զպարաւրսն.

Ընկէց ի ձեռաց իւրոց զերկոսին
զտախտակն.

Խորտակեաց զտախտակն.

Առ ստորոտով լերինն.

Այլեաց զորթն հրով.

Խարտեաց զորթն մանր.

Ցանեաց ի վերայ ջրոցն.

Արրց զջուրան որդոցն Խորոշէի.

Աչարոն օղերն ընդունեցաւ.

Թափիծու հորթ շինեց.

Աոջևը սեղան շինեց.

Մանուցում արաւ Բելլու կան-
չեց:

Աստուծոյ տօնն է վաղը.

Երկրորդ առաւ օտք կանուխ եղաւ.

Ողջակէզներ արաւ.

Գրկութեան զոհեր մատոց,

Ճողովուրդը Խօտաւ ուտելու խը.

մերու.

Ելան որ խաղան խաղայու եղան.

Մովսէս գարձաւ իջաւ լիոնէն.

Երկու քարէ տախտակները.

Երկու կողմէն ալ գրուած:

Գիրը Աստուծոյ զիր.

Մատեցաւ բանակին.

Տեսաւ պար բռնողները.

Զգեց ձեռքէն երկու ասխտակները.

Կոտրտեց զարդեց տախտակները.

Լեռան ստորոտը, ուրքը իււ:

Հորթը կրակը ձզեց՝ ոյրեց:

Խարտոցեց հորթը մանր փոշի

գարձուց:

Զբերուն վերայ ցանեց (մանրան-

քը):

Զբերը խմբուց Խորայէի որդուցը.

ԶՐՈՒԹԱՏՐՈՒԹԻՒՆՆ.

Հ-ԵՐԵՎԱՆ-.

Ո՞ւ յամեաց իջանել ի լեռնէ անտի.
Զի՞նչ յամեաց առնել Մովսէս.
Զի՞նչ արար յայնժամ ժողո-
վուրդնեւ.

Զի՞նչ խնդրէր յԱհարոնէ.
Որպիսի՝ աստուածս խնդրէին.
Ո՞ւ եշան զնոսա յերկրէն Եղիսպ-
ատցոց.

Զի՞նչ ասէր ժողովուրդն զնմանէ.
Զի՞նչ ասաց Ահարոն կողովուել
ժողովրդեան.

Ուստի կամ յումնէ?
Ուստի կողովեաց զգինդսն ոսկիս.
Առ ով բերին զնոսա.
Ուստի ընկալաւ զնոսին Ահարոն.
Զի՞ւ արար Ահարոն զգինդսն.

Որպիսի՝ էր որթն.
Զի՞նչ շինեաց առաջի նորա.
Զի՞նչ քարոզ կարդաց.
Երբ եշան ողջակէզս.
Զի՞նչ մատցց առաջի որթցն.
Առ ի՞նչ նստաւ ժողովուրդն.
Ապա զի՞նչ արար.

Պ-ԵՐԵՎԱՆ-.

Մովսէս.
Խջանել ի լեռնէ անտի.
Կուտեցաւ ի վերայ Ահարոնի.

Առնել նոցա աստուածս:
Որ առաջնորդեսցէ նոցա:
Այն այն Մովսէս:

Բաէր՝ թէ ոչ զիսեմք զի՞ եղև
նման:

Զդինդո ուսկիս

Յականչաց կանանց եւ ուստերաց
եւ դատերաց իւրեանց:

Ամենայն ժողովուրդն:
Առ Ահարոն:
Ի ձեռաց նոցա:
Զուլեաց քանդակագործով, եւ
արար որթ.

Զուլածց էր:

Սեղան:

Ասէ. աօն Ցետոն առ վաշիս:
Ի վաշիս անդր:
Զոհս փրկութեան:
Յուտել և յըմնել:
Յարեան ի խաղալ:

ԶՀ՞ՆԸ կայր ի ձեռս Մովսիսի
յորժամ դարձաւ ի լինեն.

ԱՐԴԿԵՍ զբեալ կն ասիստակըն.

ԱՐՄԻՍԻՇ էր զիրն.

Ո՞ւր մերձեցաւ Մովսէս.

ԶՀ՞ՆԸ ետես.

ԶՀ՞ՆԸ արար զտախտակնեն.

Ո՞ւր Խորտակեաց զտախտակնեն.

ԶՀ՞ՆԸ արար զորին.

Եւ զիրն զջուրն արար.

Երկու ասիստակըն քարեղեց:

Եերկօցունց կողմանց:

Դիր Աստուծոյ՝ զբոշմեալ ի ասիստակնեն:

Ի բանակ անզրու:

Զորին և զպարաւորուն:

Ընկէց ի ձեռաց իւրոց և Խորտակեաց զնոսաւ:

Առ ստորոտով լերինն:

Խորտեաց զնա մանր, եւ ցանեաց ի վերոց ջրոցն:

Վրբուց որդւոցն Խորոյէլի:

ԴԱՍ Գ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Ա. ԽՈՐՉՈՎՈՒԹԻՒՆ.

- Հ. Կանոնաւոր լծորդութիւնք քանի՛ են եւ որմնք են.
- Պ. Բայերուն կանոնաւոր լծորդութիւնները չորս են, եւ գլխաւորապէս իրենց սահմանական ներկային վերջաւորութեամբը կզանազանին: Առաջին լծորդութեան վերջաւորութիւնն է աճ, զոր օրինակ աճամ: Երկրորդինը էմ, զոր օրինակ աչքեմ: Երրորդինը էմ, զոր օրինակ աչքեմ: չորրորդինը աճ, զոր օրինակ պենամ:
- Հ. ԵՅԱՅ բայր ի՞նչպէս կլծորդուի:

Գ. Առհ. Ներկ. Ամամ, ամաս, ամայ. ամամք, ամայք,
աման:

,, ան. Ամայի, ամայիր, ամայր. ամայք, ամա-
յիք, ամային:

,, իւր. Ամացի, ամացեր, ամաց. ամացաք, ամա-
ցիք, ամացին:

,, առ. Ամացից, ամացեստ ամացէ. պմացուք,
ամասջիք, ամասցեն:

Հայոյ. Այս, ամասջիր, մի ամար. ամացէք, մի
ամայք:

Սովոր. Ամայցեմ, ամայցես, ամայցէ. ամայ-
ցեմք, ամայցէք, ամայցեն:

Դեբ. անոր. Ամալ:

,, անց. Ամացեալ:

,, առ. Ամալոց:

Հ. Առաջին լծորդութեան պէս ուրիշ ի՞նչ բայեր կխո-
նարհին:

Գ. Ողբամ, հաւապամ, իւրդամ, գնամ, համ, իւղամ, իւն-
դամ, եւ այլն:

Հ. Առաջին լծորդութեան պէս խօնարհող բայերէն ո-
մանք ի՞նչ խոտորմունք ունին:

Գ. 'Նախ' միավանկ արմատ ունեցող բայերէն շատը իրենց
կատարեալ ժամանակին վերայ է կամ է տառը կառնուն. զոր
օրինակ լոմ, ելոց կամ լոց. բանամ, եբաց կամ բաց. — Երկ-
րորդ, նամ վերջացած բայերուն շատը կրճատուելով կխո-
նարհին. զոր օրինակ լուանամ, կատ. լուացի, եւոչ լուանացի.
Շանամ, նացի, եւ ոչ բանացի, եւ այլն:

Հ. Բառ-նամ բայրը ի՞նչպէս կըլծորդի.

Պ. Կատ. Բայրէ, Բայրէ, Եբաշչ կամ բայր ապ. Բայրէ,
Բար նցէն, Բարչուկ. Բայրչում, Բայրչու, Բ-ըցէն. — հրամ. Բ-ըց.
— գերբ. անց. Բայրէալ:

Հ. Աւամ բայրը ի՞նչպէս կըլծորդի.

Պ. Անկ. Աէն, Աէն, Աէնը. Աէն+, Աէն+ Աէն-. — կատ. Աէնէ, Աէ-
նէր, Եիւաց կամ Աէնց. — ապ. Աէնէ, Աէնցէն, Աէնցէ. Աէնց-+,
Աէնց+, Աէնցէն. — հրամ. Աէնց, Աէնցէր, Թ Աէնց. — օտօր. Աէնց-
էր կամ Աէնցէն, աէն, աէ. — գերբ. Աէնլ Աէնցէալ, Աէլց:

ԽՈԹՆԵՑԿ ԶՈՐՔՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻԲ.

1. Իբրեւ լուան բնակիչ-
քըն Գաբաւոնի զոր ինչ ա-
րար Յեսու ընդ Նրիքով եւ
ընդ Գայի, առին քուրձս
հնացեալո ի վերայ ուսոց
իւրեանց, եւ տիկո գինոյ
հնացեալո եւ պատառա-
տունս եւ կարկատեալո, ան-
կարուրդք կօշկաց նոցա եւ
հողաթափք իւրեանց հնա-
ցեալք եւ կարկատեալք յո-

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Երբ որ լսեցին Գաբա-
ւոնի բնակիչները ինչ որ ա-
րած էր Յեսու Նրիքով ու
Գայի քաղաքներուն, հըն-
ցած քուրձեր առին իրենց
ուսերը, նմանապէս հնցած
պատռածած ու կարկրտած
գինիի տիկեր. նոցա ուղքի
կօշիկներուն ըերտնները եւ
հողաթափները հնցած ու
կարկտած, իրենց պաշարի

տըս իւրեանց, եւ հաց պաշարի իւրեանց չորացեալ եւ ճճեկեր. եւ եկին առ Յեսու եւ ասեն. յերկրէ հեռաստանէ եկեալ եմք. եւ արդ գիք ընդ մեզ ուխտ:

2. Եւ արար ընդ նոսա խաղաղութիւն Յեսու, եւ ուխտեաց նոցա ուխտ ապրեցուցանել զնոսա. եւ երդուան նոցա իշխանք ժողովրդեանն

3. Յետ երից աւուրց լուան եթէ մօտաւորք են, եւ անդէն առ նոսա ընակեն. Նվին որդիքն Խօրայէլի ի քաղաքս նոցա, բայց ոչ մարտեան ընդ նոսա, քանզի երդուան նոցա ամենայն իշխանք ժողովրդեանըն ի Տէր Աստուած Խօրայէլի:

4. Խոկ Յեսու կոչեաց զնոսա միահամուռ եւ առէցնոսա. ընդէ՞ր խարեցէք

հացն ալ չորցած ու որդնոստած, եկան Յեսուայ եւ ասին. հեռաւոր երկրէ եկած եմք. ուստի դաշինք դրէք մեղի հետ:

2. Յեսու նոցա հետ հաշտութիւն արաւ, եւ դաշնադրութեամբ խոստացաւ նոցա որ մահուանէ ազատէ զանոնք. ժողովրդեան իշխաններն ալ երգում արին անոնց:

3. Երեք օրէն յետոյ լոեցին որ նոքա մօտաւոր մարդիկ են, եւ նոյն տեղը նոցա քովկ կընակին: Նլան գլուխացին Խօրայէլացիք նոցա քաղաքները, բայց չպատերազմեցան անոնց հետ, որովհետեւ ժողովրդեանըլուր. իշխանները երդուեր էին նոցա Խօրայէլի Աստուծոյն վերայ:

4. Խոկ Յեսու կանչեց զնոնք ամենք մէկտեղ եւ ասաց. ինչո՞ւ խարեցէք զիս

զիս եւ ասացէք, հեռի եմք
ի ձէնջ յոյժ. եւ դոք գա-
ւառականք էք բնակչացս
որ ի միջի մերում. եւ արդ
անիծեալք էք, եւ մի պա-
կասեացէ ի ձէնջ ծառայ
փայտակատոր եւ ջրկիր ինձ
եւ Աստուծոյ իմում։

5. Պատասխանի ետուն
Գաբաւնացիքն եւ ասեն
ցՅեսու. երկեաք յոյժ յե-
րեսաց ձերոց, եւ արարաք
զիրն զայն. եւ արդ տւասիկ
եմք ընդ ձեռամք ձերով.
որպէս հաճոյ է ձեզ եւ որ-
պէս կամիք առնել՝ արա-
րէք։

6. Եւ Յեսու կացոյց զնո-
սա փայտակոտորս եւ ջրա-
կիրս ամենայն ժողովրդեա-
նըն եւ սեղանոյն Աստուծոյ
մինչեւ ցայսօր ժամանակի։

եւ ասկը թէ շատ հեռու
եմք ձեզնէ, մինչդեռ դուք
այս մեր մէջի բնակիչնե-
րուն գաւառակից էք. ու-
րեմն անիծուած էք, եւ
ձեզնէ չպակսի փայտ կոտ-
րող ու ջուք բերող ծառայ
ինծի ու իմ Աստուծոյ։

5. Պատասխան տուին
Գաբաւնացիները Յեսուայ
եւ ասին. սաստիկ վախե-
ցանք ձեզնէ, անոր համար
արինք այն բանը. այժմ
ահա ձեր ձեռքին տակն
եմք. ինչ որ հաճոյ է ձեզ
եւ ինչպէս որ կամենաք՝
այնպէս արէք։

6. Յեսուն ալ զանոնք
բոլոր ժողովրդեան եւ Աս-
տուծոյ սեղանին փայտ
կոտրող ու ջուք բերող դը-
րաւ մինչեւ այսօրուան օրս։

ԴԱՍ Բ.

ՀԱՏԼՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Լուան բնակիչքն Գարաւոնի զօր
թէ արար Յեսու.

Առին Գարաւոնացիքն քուրձն ի
վերայ ուսոց իւրեանց.

Առին տիկն գենույ պատառատու-
նըս և կարկատեալու.

Հողաթափը նոցա հնացեալք կին.
Հաց պաշարի իւրեանց չորացեալ
կրտ.

Եկին Գարաւոնացիքն առ Յեսու.

Եերկրէ հեռաստանէ եենալ եւր.
Դէք ընդ մեզ ուխտ. յ
Յեսու արար ընդ նոսա խաղաղու-
թիւն.

Ուխտեաց նոցա ուխտ ասլրեցու-
ցանել զնոսա.

Երդուան նոցա իշխանք ժողովոր-
դեանն.

Լուան եմէ մօտաւորը են.
Անդէն առ նոսա բնակին.

Ելին ի քաղաքու Գարաւոնացւոց.

Ու մօրտեան ընդ նոսա որդիքն
Խորսոյելի.

Յեսու կոչեաց զնոսա միահամուռ.

Ընդէր խարեցէք զիս.

Գարաւոնի բնակիչները լսեցին Յե-
սուոյ ըրածները.

Գարաւոնացիները քուրձներ առին
իրենց ուսերուն վերայ.

Դինին տիկն առին՝ պատըռած
ու կարկըռած.

Նոցա հողաթափները հնցած կին:
Իրենց պաշարի հացը չորցած կրտ.

Եկան Գարաւոնացիները Յեսուոյ
քոչ.

Հեռու աշխարհէ եկած եւլք:
Ուխտ ու զաշինք դրէք մեղի հետ:
Յեսու հաշտութիւն ըրաւ նոցա
հետ:

Պաշնաղրութեամբ խոռք տուաւ
որ չմոռցընէ զանոնք:

Ժողովրդեան զիխտորները եր-
դում ըրին նոցա:

Լանցին որ մօտ տեղ կրնակին:
Նոյն տեղը նոցա մօտ կրնակին:
Գարաւոնացւոց քաղաքները զնա-
ցին:

Խորսոյելացէք չպատերազմցան նո-
ցա հետ:

Յեսու կանչեց զանոնք ամները
մէկանդ:

Ինչու խարեցէք զիս:

Հեռի եմք ի ձենջ յոյժ.
Դուք գաւառականք եք մեր-
Մի պահասեցէ ի ձենջ ծառայ.
Ծառայ փայտակոտը և ջրկիր.

Երկեաբ յոյժ յերեսաց ձերոց.
Արարաք զի՞րն դայն.
Աւասիկ եմք ընդ ձեռամբ ձերով.
Որպէս հաճոյ է ձեղ՝ արարէք.

Յեսու կացոյց զնոսա փայտակո-
տորս ժողովրդեանն.
Կացոյց զնոսա ջրակիրս սեղանոյն
Աստուծոյ.
Մինչեւ ցոյտօր ժամանակի.

Ձեզնէ շատ հեռու եմք:
Դուք մեզն գաւառակից եք:
Ձեր մեջէն ծառայ չպահպի:
Փայտ կոտրող ու ջուր բերող
ծառայ:
Խիստ վախեցանք ձեզնէ:
Ըրինք այն բանը:
Աչս ձեր ձեռքին տակն եմք:
Խշպէս որ ձեզի հաճոյ է՝ այն-
պէս ըրէք:
Յեսու զանոնք ժողովրդեան հա-
մար փայտ կոտրող ըրաւ:
Զանոնք ըրաւ Աստուծոյ սեղա-
նին համար ջուր բերող:
Մինչև ոյսօրուան օրս.

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ՇՀՇԱՆՔ.

Զի՞նչ լուան բնակիչքն Գարա-
ռանի.
Զի՞նչ առին ի վերայ ուսոց իւ-
րեանց.
Որպիսի՞ կին տիկիքն զինւոյ դորս
առին.
Զի՞նչ ունեին յոտս իւրեանց.
Որպիսի՞ եր հաց պաշարի իւրեանց.
Եղոմէ երկրէ եկեալս ասկին զան-
ձինս.

Գ-Դ-Ե-Ն-Ե-Ն-Ք.

Զոր ինչ արար Յեսու ընդ Երի-
քով և ընդ Դայի:
Քուրած հնացեալս:
Հնացեալք և պատառատունք և
կարկատեալք:
Անկարուրդս կօշկաց և հողաթա-
փը հնացեալը և կարկատեալը:
Զորացեալ և ձձեկեր:
Եկրկէ հեռաստանէ.

Զի՞նչ արար ընդ նոսա Յեսու.
Զի՞նչ ուժոտեաց նոցա.
Եւ զի՞նչ արարին իշխանք ժողովրդեանն.

Ե՞րբ լուան եթէ մօտաւորք են
Գարաւունացիքն.

Զի՞նչ լուան զնոցանէ.
Յո՞ ելին որդիին Խորոյելի.
Մարտեան ընդ նոսա թէ ոչ.
Ընդէ՞ր ոչ մարտեան ընդ նոսա.

Զի՞նչ արար Յեսու ընդ Գարաւունացիսն.

Զի՞նչ ասաց ցնոսա.

Զի՞նչ ասացեալ էին ի Խորելն զնա.

Ա՞րդէս պատուհասեաց Յեսու լու-
Գարաւունացիսն.

Զի՞նչ ասաց թէ մի պակասեաց.

Ուստի՞ երկեան Գարաւունացիքն.
Ո՞րպէս յայտ արարին զհպատա-
կութիւն իւրեանց.

Ո՞րպէս և զի՞նչ ասեին առնել
ընդ ինքեանց.

Յի՞նչ գործ կացոյց զնոսա Յե-
սու.

Ո՞ւմ կացոյց զնոսա փայտակո-
տորս և ջրակիրս.

Մի՞նչ ցեղը ժայսօր ժամանակի.

Խաղաղութիւն.

Սպրեցուցանել զնոսա.
Երգուան նոցա.

Յետ երից աւուրց.

Թէ անդէն առ նոսա ընակնն.

Ի քաղաքս Գարաւունի.

Ոչ.

Քանզի երգուան նոցա ի Տէր Աս-
տուած Խորոյելի.

Կոչեաց զնոսա միահամուռ.

Թէ ընդէ՞ր խարեցէք զիս:

Ասացեալ էին թէ հեռի եմք ի
ձենջ յոյժ.

Անիծեալք էք առէ.

Շառայ փայտակոտոր և ջրկիր
Բնքեան և Աստուծոյ իւրում:

Յերեսաց որշոցն Խորոյելի.

Աւասիկ եմք, ասեն ընդ ձեռամբ
Ճերով.

Որպէս հաճոյ իցէ նոցա և որպէս
կամիցին առնել.

Կացոյց փայտակոտորս զնոսա և
ջրակիրս:

Ամենայն ժողովրդեանն և սեղա-
նոյն Աստուծոյ:

Մի՞նչ ցայսօր ժամանակի:

ԴԱՍ Գ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Բ. ԸՆՈՐԴՅԱՔԻՆ.

- Հ. Երկրորդ լծորդութեան խոնարհմանը օրինակ տուր
ավելք բայց.
- Պ. Առհմ. Նէլ. Սիրեմ, սիրես, սիրէ. սիրեմք, սիրէք,
սիրեն.
- ,, անէ. Սիրէի, սիրէիր, սիրէր. սիրէաք սիրէիք,
սիրէին.
- ,, իսպ. Սիրեցի, սիրեցեր, սիրեաց. սիրեցաք, սի-
րեցիք, սիրեցին.
- ,, առ. Սիրեցեց, սիրեսցես, սիրեսցէ. սիրեսցուք,
սիրեսցիք, սիրեսցին.
- Արհմ. Սիրեա, սիրեսցիր, կամ սիրիցիր, մի՛ սի-
րէր. սիրեցէք, մի՛ սիրէք.
- Առող. Սիրիցեմ, սիրիցես, սիրիցէ. սիրիցեմք,
սիրիցէք, սիրիցեն.
- Դ. Ելլ. անոր. Սիրել. — անց. սիրեալ, սիրեցեալ. — առ.
սիրելոց.
- Հ. Այս լծորդութեան նման ի՞նչ բայեր կխոնարհին.
- Պ. Տիրեմ, գլում, կոչեմ, փրկեմ, դիմեմ, եւլն.
- Հ. Տեսանելք բայց ի՞նչպէս կխոնարհի.
- Պ. Ահմ. իսպ. Տեսի, տեսեր, ետես. կամ տես. տեսաք,
տեսէք կամ տեսիք, տեսին.

Ա-հմ. առ. Տեսլից, տեսցես, տեսցէ. տեսցոք, տեսջիք,
տեսցեն:

Ա-ը. Տես, տեսջիր, մի՛ տեսաներ. տեսէք, մի՛
տեսանէք:

Դ-էր. անց. Տեսեալ:

Հ. Ուրիշ ի՞նչ բայեր կան որ սորա նման կխոնարհին.

Պ. Բեկանեմ, պագանեմ, օծանեմ, եւ այլն:

Հ. Գոյնէմ բային Անցեալ Կատարեալն ու Հրամայականը ի՞նչպէս կլինին.

Պ. Ընց. Դտի, գտեր, եգիտ. գտաք, գտէք կամ գտկը, գտին:

Ա-ը. Դիտ, մի՛ գտաներ. գտէք, մի՛ գտանէք:

Հ. Յուղանէմ բային Կատարեալն ու Հրամայականը ի՞նչպէս կլինին.

Պ. Ցուցի, ցուցեր, եցոյց կամ ցոյց.—ցոյց, մի՛ ցուցաներ:

Հ. Աժեմ բայինները.

Պ. Աժի, ածեր, ած կամ էած. ածաք, ածիք, ածին.—
ած, մի՛ ածեր:

Հ. Անցուցի, անցուցեր, անցոյց.—անցո, մի՛ անցուցաներ:
պէս կլինին.

Պ. Անցուցի, անցուցեր, անցոյց.—անցո, մի՛ անցուցաներ:

Հ. Ուրիշ շատ բայեր կան սորա նման.

Պ. Այս, այն ամենայն բայերն որ սոյնէմ եւ ումանք սոյն-
նէմ կվերջանան, եւ կըօռւին անցողական բայք, զոր օրինակ
սոյն-նէմ, մադուցանէմ, իլուն-նէմ, շնիւն-դանէմ.

ՆՈԹՆԵԱԿ ՀԻՆԴԵՐՈՐԴ

ԳԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Կըրեւ յաւելին օրդիքը նորէն Խօրայելի առնել չար առաջի Տեառն, մատնեաց զնոստ ի ձեռու Յարինայ արքայի Քանանացւոց. Եւ էր իշխան գօրու նորա Սիսարայ, եւ էին նորա կառք երկաթիք ինն հարիւր, եւ նեղէր զԽօրայէլ սաստիկ ամս քսան:

2. Ի ժամանակին յայն-միկ գատէր զԽօրայէլ Դերովրա կին մարգարէ, որ առաքեաց եւ կոչեաց զԲարակ, եւ հրաման ետ նմա առնուլ ընդ իւր տասն հազար արանց եւ երթալ ի վերայ զօրուն Սիսարայ:

3. Ասէ ցնա Բարակ. եթէ երթիցես ընդ իս, երթայց: Եւ Դերովրա ասէ. երթա-

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Երբոր Խօրայէլացիք նորէն մեղանչեցին Աստուծոյ առջեւը, մատնեց զանոնք Քանանացւոց Յարին թագաւորին ձեռքը. նորա զօրքին զվարաւորն էր Սիսարայ ինը հարիւր կառք ունէր երկաթէ, եւ մեծ նեղութիւն կուտար Խօրայէլացւոց քսան տարի:

2. Այն ժամանակը Խօրայելացւոց դատաւորն էր Դերովրա մարգարէուհին, որ մարդ զրկեց՝ կանչեց Բարակը, եւ հրամայեց անոր որ առնու հետը տասը հազար հոգի ու երթայ Սիսարայի զօրացը վերայ:

3. Բարակ ըստ անորթէ որ հետո երթաս, կերթամ: Դերովրան պատաս-

լով երթայց ընդ քեզ բայց
գիտասջիր՝ զի ոչ քոյ իցի
քաջութիւն, քանզի ի ձե-
ռըն կնոջ մատնեսցէ Տէր
զՄիսարա:

4. Երբեւ էջ Բարակ ի
լեռնէն Թարսվրայ, զար-
հուրեցոյց Տէր զՄիսարա եւ
զամենայն բանակն նորա-
եւ էջ Սիսարա ի կառաց իւ-
րոց եւ փախեաւ հետիւստա-
եւ ել Յայէլ կին Քարերայ
կինեցւոյ ընդ առաջ Սիսա-
րայ եւ առէ ցնա, խոսո-
րեաց առ իս տէր իմ, խո-
տորեաց, եւ մի երկնչիր:

5. Առէ ցնա Սիսարա-
արբո ինձ սակաւ մի ջուր,
զի ծարաւի եմ: Եւ Յայէլ
եցաց զտիկ կաթինն եւ ար-
բոյց նմա, եւ ծածկեաց ըզ-
նա ընդ փեղկիւք խորանին:

6. Եւ առ նա զցից խո-
րանին, եւ կալաւ զուռնն

խանեց թէ սիրով կուգամ
հետդ, բայց գիտցիր որ քա-
ջութիւնը քուկդ պիտի յի-
նի, վասն զի կնոջ ձեռքով
պիտի մատնէ Աստուած Սի-
սարան:

4. Երբոր իջաւ Բարակ
Թարսվր լեռնէն, Աստուած
սարսափ ձգեց Սիսարային
ու նորա բոլոր բանակին
վրայ. Սիսարան իջաւ կառ-
քէն ու փախաւ ոտքով:
Այն ատեն Քարերայ կինե-
ցւոյ կինը Յայէլ Սիսարային
առջեւն ելաւ ու ասաց. իմ
մօտս գարձիր տէր իմ, իմ
մօտս գարձիր ու մի՛ վախ-
նաբ:

5. Սիսարան ասաց անոր.
Քիչ մը ջուր խմցուր ինձի,
վասն զի ծարաւ եմ: Յայ-
էլն ալ բացաւ կաթին տի-
կըն ու խմցուց անոր, յե-
տոյ ծածկեց զինքը վրանին
ծածկոցին տակը:

6. Այնուհետեւ առաւ
վրանին ցիցը, ուռն ալ բըռ-

ի ձեռին իւրում, եմնւտ
մեզմավ առ Սիսարա, եւ
բաղխեաց զցիցնընդ ծամե-
լիս նորա, եւ վարսեաց ընդ
գետինն. եւ տապալեցաւ
Սիսարա ի մէջ ոտից նորա
եւ եհան զոգի:

7. Եւ ահա Բարակ պլըն-
գեալ գայր գհետ Սիսարա-
յի. Ել Յայէլ ընդ առաջ
նորա եւ ասէ ցնա. եկ այսր
եւ ցուցից քեզ զայրն զոր
դու խնդրես. Եւ ահա Սի-
սարա կայր անկեալ մե-
ռեալ, եւ ցիցն ի ծամելոջ
նորա:

Նեց ձեռքը, կամացօւկ մը-
տաւ Սիսարային քով, զար-
կաւ ցիցը նորա ծնոտին, եւ
գետինը գամեց. Սիսարան
տապալեցաւ նորա ոտքին
տակն ու հոգին փչեց:

7. Նոյն միջնցին Բարակ
Սիսարային ետեւէն վազե-
լով կուգար: Առջեւն ելաւ
Յայէլ ու ասաց. եկ այս-
տեղ, ցուցընեմ քեզի ու-
ղած մարդդ: Տեսնէ որ Սի-
սարան գետինը ընկած էր
մեռած, ցիցն ալ նորա ծը-
նոտին վերայ:

ԴԱՍԸ Բ.

ՀԱՑԸՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆԱԹԻԹԻՒՆ.

Յաւելին առնել չար.

Տէր մատնեաց զնոսա ի ձեռս Յա-
րինայ.

Սիսարայ իշխան էր զօրու նորա.
Էին նորա կառք երկաթիք.
Նեղէր զիսրայէլ սաստիկ.

Նորէն չարութիւնըին, նորէն մե-
ջանցեցին.

Աստուած մատնեց զանոնք Յա-
րինա ձեռքը:

Սիսարան նորա զօրբին զլութին էր:
Երկըթէ կառքեր ունէր:
Սաստիկ կնեղէր զիսրայէլ:

Դերովըսայ կին մարգարէ դատէւ
զիսրոցէլ.

Առջեաց Դերովըսայ զբարակ.
Հրաման ետ Բարակայ առնուլ
ընդ իւր տասն հազար արանց.
Երթալով երթայց ընդ քեզ.

Ոչ քո յիշի քաֆութիւն.
Էջ Բարակ ի լեռնէն Թարովըսայ.
Զարհարհեցցց Տէր զրանակն Սի-
սարայ.
Սիսարա փախեաւ հետիւաս.
Խոտորեաց առ իս տէր իմ.

Արդո ինձ սակաւ մի ջուր.
Մարափ եմ.
Երաց Յայէլ զահիկ կաթինն.
Մածկեաց Յայէլ զՍիսարա ընդ
փեղինք խորանին.

Առ Յայէլ զցից խորանին.
Կալաւ զուռն ի ձեռին իւրօւմ.
Խմուտ մեղմով առ Սիսարա.

Բախեաց զցիցն ընդ ծամելիս նորա-
Վարսեաց զՍիսարա ընդ կետինն.
Տապալեցաւ Սիսարա ի մեջ ոտի-
ցըն Յայէլի.
Սիսարա եհան զողի.

Դերովըսա մարգարէ կնիկմարդը
Խորայիլի դատաստանները կը-
տեսնէր:

Կանչեց Դերովըսան Բարակը,
Հրամայեց Բարակին որ տասը հա-
զար մարդ առնու հետը,
Երթալը կերթամ՛ սիրով կեր-
թամ քնզի հետ:
Քաջութիւնը քոնկդ չըննիր,
Խօսւ Բարակ Թարովը լեռնէն,
Աստուած սարսափեցցոց Սիսա-
րային բանակը,
Սիսարան ոսքով փախաւ,

Ճանազարհդ ինձի զարձուր ոէր
իմ:

Քիչ մը ջուր խոցուր ինձի:
Մարաւ եմ:
Յայէլ կաթին տիկը բացաւ,
Յայէլ պահէց Սիսարան վրանին
ծածկոցն ներբելը. (Լուրջին էւ-
շերուն տակը):

Առաւ Յայէլ վրանին ցիցը,
Ուռը (էլքիճը) ձեռքը բռնեց:
Մաս կամացուկ մը Սիսարային
քով:

Զարկաւ ցիցը նորա ծնօտին,
Գամեց զՍիսարան դետինը:
Թառըլութիւնաւ Սիսարան Յայէլի
ոտքին տակը:
Սիսարան հողին փշեց:

Բարակ պնդեալ գոյր զհետ Սի-
սարայի.

Ել Յայէլ ընդ առաջ նորա.

Տուցից քեզ զայրն դոր դու խնդ-
բեա.

Կայր Սիսարա անկեալ մեռեալ.

Ցիցն էր ի ծամելով նորա.

Բարակ վազելէն կու գոր Սիսարա-
յի եռելէն.

Յայէլ նորա առջևն եղաւ.

Տուցընեմ քեզի քու փնտոած
մարդդ.

Սիսարան կեցած էր մեռած ըն-
կած.

Ցիցն նորա ծնօտին մէջն էր.

ԴԱՍ Դ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ը շահան+.

Ընդէ՞ր մատնեաց Տէր զորդիսն
Խորայէլի ի ձեռա Յարինայ.

Ո՞ էր Յարին.

Եւ ՞ իշխան զօրու Նորա

Քանի՞ էր թիւ երկաթի կառաց
նորա.

Զիադդ վարէր ընդ Խորայէլի.

Ո՞րչափ ժամանակա.

Ո՞ զատէր զԽորայէլ ի ժամանա-
կին յայնմիկ.

Զ.՞ կոչեաց Դիբովը.

Զի՞նչ հրաման ետ նմա.

Փ

Ի ձեռն ոյր մատնելոց էր Տէր ըզ-
Սիսարա.

Գ-ո-ս-ի-ն-ն+.

Զի յաւելին առնել չոր առաջի
Տեառն.

Արքայ էր Քանանացւոց.

Սիսարա.

Ինչ հարիւր.

Նեղէր զնա սաստիկ.

Եմն քսան.

Դիբովը կին Մարգարէ.

ԶԲարակ:

Առնուլ ընդ իւր տասն հազար
արանց և երթալ ի վերս զ-
րուն Սիսարայ.

Ի ձեռն կնոջ.

Աւստի՞ կը Բարակ.

Եւ ուստի՞ Սիսարա.

Զ՞ զարհուրեցոյց Տէր.

Ո՞րդէս վիախեաւ Սիսարա.

Ո՞ ել ընդ առաջ նորա.

Առ ո՞ ասաց ցնա խոտորել.

Զի՞նչ խնդրեաց արրուցանել նմա.

Ընդէր խնդրեաց ջուր.

Զի՞նչ արրոյց նմա Յայէլ.

Ո՞ւր ծածկեաց Յայէլ զՍիսարա.

Զի՞նչ էսու ի ձեռն իւր.

Զիարդ եմուստ առ Սիսարա.

Զի՞նչ արար զցիցն.

Զիարդ վարսեաց զպուխ նորա.

Ո՞ւր տապալեցաւ Սիսարա.

Զի՞նչ առնէր Բարակ.

Եւ զի՞նչ արար Յայէլ.

Զ՞ կամէր ցուցանել Բարակոյ.

Զիարդ կոյր Սիսարա.

Եւ զի՞նչ կոյր ի ծամելով նորա.

Ի ,եռնէն Թարթվայ,

Ի կառաց իւրօց:

ԶՍիսարա և զամենայն բանակն
նորա:

Հետիոտաս

Յայէլ կին Քարերայ Կինեցւոյ:

Առ ինքն:

Սակաւ մի ջուր:

Զի ծարաւի էր:

Զկաթն:

Ընդ վեղիկիք խորանին:

Զցից խորանին և զուռն:

Մեզմակ:

Բախեաց զայն ընդ ծամելիս նորա:

Ընդ գետինն:

Ի մէջ ոսից նորա:

Պնդեալ զայր զհետ Սիսարայի:

Ել ընդ առաջ նորա:

Զայրն զոր խնդրէր նա:

Անկեալ մեռ եալ:

Ցիցն Յայէլի:

ԴԱՍ Դ.

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ .

Կ. ԼԱՅՐԴՈՒԹԻՒՆ.

Հ. Երրորդ լծորդութեան խռնարհմանը օրինակ տուր:

Պ. Ա-հմ. Նէրի. Սիրիմ, սիրիս, սիրի. սիրիմք, սիրիք:

սիրին:

Առաջ. անկ. Սիրէիր, սիրէիր, սիրէր կամ սիրիւր.

սիրէաք, սիրէիք, սիրէին

, իտ. Սիրեցայ, —ցար, —ցաւ. սիրեցաք, —

ցայք կամ —ցառուք, —ցան

, առ. Սիրեցայց, —եսցիս, —եսցի. սիրեցուք,

—եսջիք, —եսցին

Նշ. Սիրեց կամ սիրեցիր, սիրենջիր կամ

սիրիջիր, մի՛ սիրիր. սիրեցարուք կամ —

ցայք, մի սիրէք

Առող. Սիրիցիմ, —ցիս, —ցի. սիրիցիմք, —ցիք

—ցին.

Դեբբ. ան. Սիրել, սիրիլ.

, անց. Սիրեցեալ, սիրեալ.

, առ. Սիրելոց:

Հ. Այդ օրինակին նման մը Բայերը կխոնարհին:

Պ. Շատ կրաւորական բայեր, որոց Ներգործականները կվերջանան եմ. զոր օրինակ այրիմ, գրիմ, կանգնիմ, կոչիմ, շարժիմ, շինիմ, բաժանիմ, խօսիմ, նայիմ, ողորմիմ, եւլն:

Հ. Ի՞նչ տարբերութեամբ կխոնարհին այն Բայերն՝ որ Սահմ. Ներկային անէմ կվերջանան:

Պ. Անոնց անցեալ կատարեալը Եշայ լինելու տեղը՝ կլինի պարզ այ, եւ ապառնին Եշայց վերջանալու տեղը՝ կվերջանայ այց. զոր օրինակ տեսանիմ. — իտ. տեսայ, սար, սաւ. սաք, սպյք, սան. — առ. տեսայց, տեսցիս, սցի. սցուք, սջիք, սցին:

Հ. Տեսանէմ բային եւ անոր նմաններուն հրամայականն ի՞նչպէս կլինի.

Պ. Տեսիր, տեսջիր կամ տեսանիջիր, մի տեսանիր. տեսարուք կամ տեսայք, մի տեսանիք:

Հ. Չէ վերջացած բայերը, զոր օրինակ լուդչէ, ի՞նչ տարբերութեամբ կխոնարհին.

Պ. Սոցա կատարեալը կվերջանայ Եայ, ապառնին Եայց, եւլն. զոր օրինակ թաքեայ, — եար, — եաւ. — եաք, — եայք, — եան. առ. թաքեայց, քիցեա, քիցէ. քիցուք, քիցէք, քիցն. Այսպէս նաեւ փախչիմ, հանգչիմ, թռչիմ, եւլն:

Հ. Սոցա Հրամայականը ի՞նչպէս կլինի.

Պ. Թաքիր, մի թաքչիր. փախիր, մի փախչիր. հանգիր, մի հանգչիր. թռչիր, մի թռչիր, եւլն:

Հ. Անցեալ Դերբայը ի՞նչպէս կլինի.

Պ. Թաքուցեալ, փախուցեալ, հանգուցեալ, թռուցեալ եւ այլն:

ՆՈՐՆԵԱԿ ԱՎՑԵՐՈՐԴ

ԴԱՅ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Կանխեաց Գեղէոն եւ ամենայն զօրն ընդ նմա, եւ բանակեցան առ աղբերն Արեդայ: Ասէ Տէր ցԳեղէոն, բազում է զօրդ որ ընդ քեզ է, և ոք վատասիրտ իցէ՝ դարձցի: Եւ դարձան

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Առաւոտը կանուխ եւ լաւ Գեղէոն, եւ նորա հետ բոլոր զօրքը, եւ Արեդայ աղբերին քով դրին իրենց բանակը: Աստուած ասաց Գեղէոնի թէ շատ է այդ զօրքն որ քու հետդ է. ուլ

ի զօրուէն քսան եւ երկու
հազարք, եւ մնացին տասն
հազար:

2. Ասէ Տէր ցԴեղէսն.
տակտւին բազում է զօրդ.
իջո զդոսա ի ջուրն եւ փոր-
ձեցից քեզ զդոսա անդ. ի-
ջոյց Գեղէսն զդօրն ի ջու-
րըն, եւ զամենայն որ լա-
փեաց լեզուաւ իւրով ի ջը-
րոյ անտի իրբեւ զշուն' կա-
ցոյց ուրոյն, եւ զամենայն
որ անկաւ ի վերայ ծնկաց
իւրոց ըմպել, կացոյց զնո-
սա առանձինն: Եւ եղեւ
թիւ ամենեցուն որ լափեցին
ձեռամք եւ լեզուով իւր-
եանց' երեք հարիւր այր:

3. Բաժանեաց զնոսա
Գեղէսն յերիս առաջս, ետ
փողս եղջերեայս ի ձեռս
ամենեցուն, եւ ջահս ի մէջ
սափորոց. եւ ասէ ցնոսա-
ընդ իս հայեսջիք, եւ այն-
պէս արասջիք:

որ վախկոտ է՛ թող ետ
գառնայ: Եւ այնպէս զօր-
քէն ետ դարձան քսան
ու երկու հազար հոգի, ու
մնաց տասը հազար:

2. Ասաց Աստուած Գե-
ղէսնի. դեռ շատ է այդ
զօրքը. իջեցուր ատոնք
ջուրը, եւ այնտեղ փորձել
տամ քեղի: Իջեցուց Գե-
ղէսն զօրքը գէալ ի ջուրը,
ով որ այն ջրէն լափեց լե-
զուովը շան նման' զատ կե-
ցուց, եւ ով որ ծնկի վերայ
ընկաւ որ խմէ՝ զանոնք զատ
կեցուց: Այս կերպով՝ իրենց
ձեռքովն ու լեզուովը լա-
փաղներուն թիւը երեք հա-
րիւր հոգի ելաւ:

3. Երեք խումբ բաժնեց
զանոնք Գեղէսն, ամենուն
ձեռքն եղջիւրէ փողեր տր-
ւաւ, եւ սափորներու մէջ
դրուած ջահեր, եւ սաաց
նոցա. ինձի նայեցէք, եւ
այնպէս արէք:

4. Եւ եմուտ ի կողմն մի բանակին Մադիամու ի ըս-
կըքան միջնոյ պահուն. մի-
այն զարթուցանելով զար-
թուցին զպահապանն, հա-
րին զփողան, եւ թօթափե-
ցին զսափորսն որ ի ձեռս
իւրեանց, աղաղակեցին եւ
ասեն. սուր Տեառն եւ Գե-
ղեսնի:

5. Եւ իրբեւ գոչեցին ե-
րեք հարիւրեքին փողքն
եղջերեալք, ընթացաւ ա-
մենայն բանակն Մադիա-
մու. փող հարին եւ փա-
խեան. եւ եղ Տէր զուր
առն յընկեր իւր եւ հալա-
ծեցին Խորայէլացիքն զՄա-
դիամ:

4. Ցետոյ մտաւ Մադիա-
մու բանակին մէկ կողմը,
միայն պահապանները ար-
թնցուցին, զարկին փողերը,
կոտըրտեցին իրենց ձեռքի
սափորները, աղաղակեցին
ու ասին. սուր Տեառն եւ
Գեղեսնի:

5. Նրբոր այն երեք հա-
րիւր փողերը մէկ տեղ ձայն
հանեցին, Մադիամու բոլոր
բանակը ոտք ելաւ վազեց,
փող զարկին ու ձգեցին
փախան: Աստուած այնպէս
ըրաւ որ ամեն մարդ իւր
ընկերոջը վերայ թուր քա-
շեց, եւ Խորայէլացիք Մա-
դիամը հալածեցին:

ԴԱՍ Բ.

ՀԱՅԸՆՑԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Կանիեաց ամենոյն զօրն ընդ Գե.
դէսնի.

Բանակեցան առ աղբերն Արեգայ.

Բոլոր զօրքը կանուխ ելաւ Գեղե-
սնին հետ:

Երեղայ աղբիւրին քովը բանա՛
դին:

Բազում է զօրդ որ ընդ քեզ է:
Ա' ոք վատասիրտ իցէ՝ դարձի.

Մնացին ի զօրուէն տասն հազար.
Դարձան ի զօրուէն քսան և եր-
կու հազարբ.
Տակաւին բազում է զօրդ.
Իշո զդոսա ի ջուրն
Փորձեցից քեզ զդոսա անդ.

Իջց Գեղեռն զզօրն ի ջուրն.
Լափեաց լեզուաւ իւրով ի ջոյ
անտի

Լափեաց լեզուաւ իրբե. զշուն.
Կացոյց զնոսա ու րոյն.
Անկա ի վերայ ծնկաց իւրոց ըմպել
Թիւ ամենեցուն որ լափեցին ձե-
ռամբ և լեզուով.

Բաժանեաց զնոսա յերիս առաջա.
Ետ փողս եղջերեայս ի ձեռս ամե-
նեցուն.

Եղ ջահս ի մեջ սափորոց.
Ընդ իս հայեազիք.
Այնպէս արատջիք.
Նմուս Գեղեռն ի կողմն միբանակին.
Ի սկզբան միջնոյ պահուն.
Միոյն զարթուցին զպահապանն.

Հարին զփողսն.
Թօթափեցին զսափորսն որ ի ձե-
ռաս իւրեանց.

Շատ է հետ եղած զօրբը:
Ով որ վախկոա է՝ ետ մող դառ-
նոյ:

Զօրբէն տասը հազար մնացին.
Զօրբէն դարձան քսանուերիու
հազար հոգի.
Այժմ ևս շատ է այդ զօրբը:
Ատոնք ջուրը իջեցուր:
Դոցա փորձը անեմ քեզի այն
աեղ.
Գեղեռն զօրբը իջեցուց չըին քով:
Լեզուովը լափեց պյն ջրէն:

Լափեց լեզուով շան նման:
Կեցուց զանոնք մեկդի:
Մնկի վերայ ընկաւ որ խմէ:
Ձեռքով ու լեզուով խմողներուն
բոլորին թիւը:
Երկը խումբ բաժնեց զանոնք:
Եղջիւրէ փողեր տաւաւ ամենուն
ձեռքը:
Զահեր դրաւ սափորներուն մըջ:
Իմ վերաս նայեցէք:
Այնպէս արէք:
Մատ Գեղեռն բանակին մէկ կողմէ:
Միջին պահուն սկիզբը:
Միայն պահապանները զարթե-
ցուցին:

Փողերը զարկին:
Զարինն կոտրացին իրենց ձեռ-
քի սափորները:

Աղաղակեցին և ասեն.

Առ Տեռն և Գեղեռնի

Գուեցին երեքհարիւրեքն փողքն.

Ընթացաւ ամենայն բանակն.

Փող հարին և փախեան.

Եղ Տէր զուր առն յընկեր իւր.

Հայածեցին Խորոշելացիքն զՄա-
զիամ.

Կանչուըռտեցին ու ասին:

Ասուածոյ ու Գեղեռնի թուրը:

Երեքհարիւր փողերն իմիասին
ձայն հանեցին:

Բոլոր բանակը ոտք ելու վազեց:

Փող զարկին ու փախեան:

Ասուած ամեն մարզու թուրը
ընկերոջը դեմ դարձուց:

Խորոշելացիք Մաղիամը քշեցին
տարին:

ԴԱՍ 4.

ԶՐՈՒՑԱՑՐՈՒԹԻՒՆ.

Հարցուանաւ.

Ո՞ւր բանակեցան զօրքն Գեղեռնի.
Զի՞նչ ասաց Տէր վասն զօրուն
ցԳեղեռն.

Ո՞ւ դարձաւ յետս.

Քանիք ամանք դարձան ի զօրուէն.
Քանիք մացին.

Ո՞ւրքան էր թիւ մացելցն.

Ո՞ւր իշոց Գեղեռն զզօն.

Առ Է՞նչ իշոց զնոսա ի ջուրն.

Զմիս ի նոցանէ կացոց ուրցն.

Ո՞րպէս լսիկին նորա ի ջոց անափ.

Եւ զո՞րս կացոց առանձինն.

Քանիք լսիկեցին ձեռամբ և լեզուով.

Պարագանեանէւ.

Առ ազրերն Արեգաց:

Բազում է ասէ զօրդ որ ընդ
քեզ է:

Ո ոք վատասիրտ էր:

Քան եւ երկու հազարը:

Ցան հազար պյու:

Ցան հազար:

Ե ջուրն:

Փորձել զնոսա անդ:

Զամենայն որ լսիեաց լեզուով ի
ջրոց անտի.

Իրքև զշուն:

Զամենայն որ անկաւ ի վերոց ծըն-

կաց իւրց լսիկել:

Երեք հարիւր պյու:

Ի քանի՞ առաջս բաժանեաց զնու-
սո Գեղեսն.

Զի՞նչ ես ի ձեռս ամենեցուն.

Զի՞նչ եղ ի մէջ սափորոց.

Զի՞նչ ասաց տանել նոցա.

Ո՞ւր եմուս Գեղեսն.

Ե՞րբ եմուս ի բանակն Մաղիամու.

Զ՞ո զարթուցին.

Զի՞նչ հարին.

Զի՞ արարին զափորս որ ի ձեռս
իւրեանց.

Զի՞նչ ասէին յաղաղակելն իւր-
եանց.

Ո՞ւր դոչեցին.

Զի՞նչ արար բանակն Մաղիամու.

Զի՞նչ արար Աստուած.

Զի՞ դրծեցին Խորոշէցեցիք.

Յերիս առաջս:

Փողս եղբերեցոյս:

Զահս:

Էնդ իս հայենցիք, ասէ, և այնպէս
արասցիք:

Ի կողմէ մի բանակին Մաղիամու.

Ի սկզբան միջնոց պահանձ:

Զարահապանսն:

Զփողսն:

Թօվափեցին:

Սուր Ցեառն և Գեղեսնի:

Երեքհարին ընթին փողքն:

Էնթացաւ և փախեաւ:

Եղ զսուր առն յընկեր իւր:

Հաղածեցին զՄաղիամ:

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Դ, ԼԱՅՐԻԱՏԻՒՆ.

Հ. Զորբորդ լծորդութեան խոնարհմանը օրինակ տօւր
դէնում բայցը.

Պ. Ասէմ. Աէրի. Զենում, զենուս, զենու. զենումք, զենուք,
զենուն:

, , անի. Զենուի, զենուիք, զենոյք. զենուաք, զե-
նուիք, զենուին:

Ա. Հար. Զենի, զեներ, եզեն կամ զեն. զենաք, զե-
նիք կամ զենէք, զենին.

” առ. Զենից, զենցես, զենցէ. զենցուք, զենչիք,
զենցեն:

Ն. Զեն, զենջիր, մի՛ զենուր. զենէք, մի՛ զե-
նուք:

Արտ. Զենուցում, — ցութ, — ցու. — ցումք, —
ցուք, — ցուն:

Դերբ. անշ. Զենուլ. — անց. Զենեալ. — առ. Զենլոց:

Հ. Այդ օրինակին նման ի՞նչ բայեր կխոնարհին.

Պ. Արգելում, յաւելում, թողում, ստեղծում, զեղում,
հեղում, եւլն:

Հ. Եղեռում բային անցեալ կատարեալը ի՞նչպէս կլինի.

Պ. Առի, առեր, էառ կամ առ. առաք, առիք կամ ա-
ռէք, առին:

Հ. Ապառնի՞ն.

Պ. Առից, առցես, առցէ. առցուք, առջիք, առցեն:

Հ. Թռուում բային անցեալ կատարեալը.

Պ. Թքի, թքեր, եթուք կամ թուք. թքաք, թքիք կամ
թքէք, թքին:

Հ. Բնիւում բայի՞նը.

Պ. Ընկեցի, ընկեցեր, ընկէց կամ ընկեաց. ընկեցաք, ցիք
կամ ցէք, ցին:

Հ. Լնուում բայի՞նը.

Պ. Լցի, լցեր, ելց կամ լից. լցաք, լցիք կամ լցէք, լցին:

Հ. Խնուում բայի՞նը.

Պ. Խցի, խցեր, եխից կամ խից. խցաք, խցիք կամ խցէք, խցին:

Հ.Այս չորրորդ լծորդութեան բայերուն, զօ պնառմ բային, կրաւորականն ի՞նչպէս կլինի:

Պ. Սահմ: Ներկան ու անկատարը ներգործականին պէս, իսկ անցեալ կատարեալը եւ աղառնին այսպէս. Զենայ, զենար, եւլն. Զենայց, զենցիս, եւլն:

Հ. Օքէնոռմ հասարակ բային անցեալ կատարեալն ու ապառնին ի՞նչպէս կլինին.

Ե. Զգեցայ, ցար, ցաւ, եւլն. Զգեցայց, զգեցցիս, զգեցի, եւլն:

Հ. Ընթեռնոմ բայիննե՞րը.

Պ. Ընթերցայ, ցար, ցաւ, եւլն. Ընթերցայց, ընթերցցիս, ընթերցցի, եւլն:

Հ. Վաղնոռմ չէզոք բայիննե՞րը.

Պ. Քաղցեայ, ցեար, ցեաւ, եւլն. Քաղցեայց քաղցցիս, քաղցցի, եւլն:

ԵՐԹՆԵԱԿ ԵՐԹՆԵՐՈՐԴ.

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Յորժամ ետուն պատերազմ որդիքն Ամռայ ընդ Խորայէլի, չողան ծերք Գաղաադու առնուլ զթեփ-

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Երբոր Ամռացիք Խորայէլացւոց վերայ պատերազմի ելան, գնացին Գաղաադու ծերերն որ առնուն

Թայէ, որ էր այր հզօր զօրութեամբ, եւ կացուցին զնա ի վերայ իւրեանց գլուխ եւ առաջնորդ:

2. Եւ իրբեւ ոչ անսաց արքայ որդւոցն Ամոնայ բանիցն Յեփթայեայ՝ զորս առաքեաց առ նա, ուխտեաց Յեփթայէ ուխտ Ցեառն եւ առէ. Նթէ մատնելով մատնեացես զորդիսն Ամոնայ ի ձեռս իմ՝ որ ելանիցէ ի դըրանց տան իմոյ ընդ առաջ իմ՝ մատուցից զնա քեզ յողջակէզ:

3. Մատնեաց զնոսա Տէր ի ձեռս Յեփթայեայ, եւ նա եհար զորդիսն Ամոնայ հարուածս մեծամեծս յոյժ։ Եւ իրբեւ եկն ի Մատեփա ի տուն իւր, եւ ահա դուտորը իւր ելանէր ընդ առաջ նորա թմբկօք եւ պարուք. եւ նա, էր միամօր սիրելի նորա, եւ ոչ գոյր նորա բաց ի նմանէ ուստր. կամ գուստը։

Յեփթայէն, որ շատ զօրաւոր մարդ էր, եւ զինքը դըրին իրենց գլուխ եւ զօրավար։

2. Եւ երբ որ Ամոնացւոց թագաւորը մտիկ չարաւ Յեփթայեայ խօսքերուն որ զրկեր ասեր էր անոր, ուխտ արաւ Յեփթայէն Աստուծոյ եւ ասաց. թէ որ Ամոնացիներն իմ ձեռքս տաս, ով որ իմ տանս գռնէն առջեւս ելնէ՝ ես զինքը քեզի ողջակէզ կմատուցանեմ։

3. Աստուծ Ամոնացիները Յեփթայէին ձեռքը մատնեց. եւ նա շատ մեծ ջարդ տուաւ նոցաւ Նրբոր եկաւ Մասեփա իրեն տունը, տեսնէ որ իւր աղջիկը առջեւր կուգար թմբուկներով ու պար բռնելով. եւ ինքը մօրը մէկ հատիկն էր՝ հօրը սիրելին, վասն զի անկից զատ չունէր ոչ մանչ եւ ոչ աղջիկ։

4. Նըրեւ ետես զնա
Յեփիթայէ, պատառեաց ըդ-
հանդերձո իւր եւ ասէ.
վայ է ինձ գուստը իմ, ընկ-
ճեցեր զիս, խոչընդակն ե-
ղեր ինձ. զի ես բացի զբե-
րան իմ վասն քո առ Տէր,
եւ ոչ կարացից գարձուցա-
նել:

5. Ասէ ցնա գուստըն
նորա. Արա զիս որպէս ել
ի բերանոյ քումմէ, փոխա-
նակ զի արար քեզ Տէր վը-
րէժինդրութիւն ի թշնա-
մեաց քոց. միայն թողացո
ինձ զերկուս ամիսս, եր-
թայց շրջեցայց ընդ լերի-
նըս եւ լացից գկուսութիւ-
նըս իմ ես եւ ընկերք իմ:

6. Եւ յետ կատարելոյ
երկուց ամսոցն զարձաւ առ
հայր իւր, եւ արար նովաւ
գուխտն զոր ուխտեաց. Եւ
եղեւ ի կրօնս ի մէջ Խո-
րայէլի՝ ողբալ զգուստըն
Յեփիթայեայ չորս աւուրս ի
տարւոջ:

4. Նըրոր տեսաւ զինքը
Յեփիթայէն, պատռեց վե-
րայի հագուստն ու ասաց.
վայ ինձ, աղջիկս, մէջքո
կոտրեցիր, աչքիս փուշ ե-
ղար. վասն զի ես քեզի հա-
մար խօսք տուի Աստուծոյ,
եւ չեմ կրնար ետ առնուլ:

5. Պատասխանեց աղջի-
կը թէ ըերնէդ ինչ խօսք
որ ելաւ՝ ըստ այնմ արա
ինձի. որովհետեւ Աստուծո-
քու թշնամիներէդ վրէ-
ժըդ առնել տոււաւ. մի-
այն երկու ամիս թող տուր
ինձի, երթամ պտըտիմ ու
կուսութիւնս լամ ընկեր-
ներուս հետ ի միասին:

6. Երկու ամիսն որ վեր-
ջացաւ, գարձաւ հօրը քով,
եւ նա ուխտած ուխտը կա-
տարեց նորա վերայ. Այ-
նուհետեւ սովորութիւն ե-
լաւ Խորայէլացւոց մէջ որ
Յեփիթայեայ աղջկան ողբը
կանէին տարին չորս օր:

ՀԱՏԵՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Որդիքն Ամոնայ ետուն պատերազմ
ընդ Խորսոյ կղի.

Տոգոն ծերը Գաղառոց առնուլ
զՅեփթայէ.

Այլ հզօր զօրութեամբ.

Կացուցին զՅեփթայէ ի վերայ
իւրեանց զլուխ.

Ոչ անօաց արքայ բանիցն Յեփ-
թայեայ.

Ուխտեաց Յեփթայէ ուխտ Յետոն.

Մաանելով մաանեացն զորդիսն
Ամոնայ ի ձեռք իմ.

Որ եղանիցէ ի դրանց տան իմց
ընդ առաջ իմ.

Մատուցից զնա քեզ յողջակեզ.

Եշօր Յեփթայէ զորդիսն Ամոնայ.

Եշօր զնոսա հարուածս մնծամա-
ծըս յոյժ.

Եին Յեփթայէ ի տուն իւր.

Դուսար իւր եղանէր ընդ առաջ
նորա.

Նա եր միամօր սիրելի նորա.

Ոչ դշյր նորա բաց ի նմանէ ուս-
ոք կամ դուսար.

Պատառեաց Յեփթայէ զհանդեր-
ձըս իւր.

Ամոնացիք պատերազմի եղան Խո-
րսոյ կղաց, ոց վերայ,

Գաղառոց ծերերը դնացին Յեփ-
թայէն առնելու.

Ուժեղ ու զօրաւոր մարդ:

Յեփթայէն իրենց վերայ զլուխ դը-
րին.

Քաջաւորը մաիկ չարաւ Յեփթա-
յէի խօսքերուն:

Յեփթայէն ուխտ արաւ Առառեց:

Բոլորովին մաանես Ամոնացիները
իմ ձեռքս:

Ով որ եղնէ տանս դռնէն իմ առ-
ջևս:

Զինքը քեզի ողջակեզ անեմ:

Յեփթայէ Ամոնացիները կոտրեց:

Մեծամեծ հարուածներով ջար-
դեց զանոնք:

Յեփթայէ իւր տունն Ակաւ:

Իւր աշխիկը առջնէր կեղնէր:

Նա մօրը մէկ հատիկն եր՝ նորա
սիրելին:

Անկից զատ ոչ մանչ ունէր և ոչ
աղջիկ:

Պատուեց Յեփթայէն իւր հագուս-
ոը:

Վայ է ինձ զուստը իմ, ընկճե-
ցեր զիս.

Խոշնդակն եղեր ինձ.

Ես բացի զբերան իմ վասն քո
առ Տէր.

Ու կարացից դարձուցանել.

Արա զիս որպէս ել ի բերանոյ
քումմէ.

Փօխանակ զի արար քեզ Տէր վը-
րէժինդրութիւն ի թշնամեաց
քոց.

Թողացո ինձ զերկուս ամիս.

Երթաց շրջեցայց ընդ լերինս.

Լացից զկուսութիւնս իմ.

Յետ կատարելոյ երկուց ամոցն.

Դարձաւ առ հայր իւր.

Արար նովաւ զուխտն զոր ուխ-
տեաց.

Եղեւ ի կրօնս ի մէջ Խորայելի.

Ողբալ զգուստըն Յեփթայեաց.

Զորս աւուրս ի տարւոջ.

Վայ ինձի աղջիկո, մէջքս կոռոք-
ցիր.

Աչքիս փուշ եղար, ինծի արդելք
եղար:

Ես քեզի համար բերան բացի Առ-
տուծոյ:

Զեմ կրնար ես զարձնենել.

Իերնեղ ինչպէս որ եղաւ՝ ոյնպէս
արա ինծի:

Որովհետեւ Աստուած վրեժդ ա-
ռաւ թշնամիներէղ:

Երկու ամիս թոյլ տուր ինծի:

Երթամ պարտիմ լեռները:

Կուսութեանս վերայ լամ:

Երկու ամիսն որ վերջացաւ:

Դարձաւ իւր հօրը մօտ:

Կատարեց նորա վերայ իւր ըրած
ուխտը:

Սովորութիւն եղաւ Խորայելի մէջ:

Յեփթայելի աղջկանը վերայ ոդք
անել:

Տարին չորս որ:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒԹԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-Ե-Ր-Մ-Ա-Ն-Ի.

Ո՞ս պատերազմ ընդ Խորայելի.

Առ Հ Հոգան ծելքն Գաղաարու,

Գ-Դ-Ա-Հ-Ա-Ն-Ի.

Որդիկն Ամոնայ:

Առ Յեփթայել:

Առ ի՞նչ չողան առ Յեփթայէ.
 Զի՞նչ ասաց արքայ որդուցն Ա-
 մոնաց առ բանս Յեփթայեայ.
 Զա՞կամէր զի՞ մատնեցէ Աստուած
 ի ձեռս իւր.
 Աւասի՞ ասէր ելանել ումբը ընդ
 առաջ իւր.
 Զի՞նչ ուխտեաց առնել ընդ նա-
 մանեաց Տէր ի ձեռս Յեփ-
 թայեայ.
 Զի՞նչ արար նա ընդ որդիան Ա-
 մոնաց.
 Ո՞ւր եկն Յեփթայէ.
 Ո՞ւ ելանէր ընդ առաջ նորա.
 Զիմարդ ելանէր.
 Որպիսի՞ ոք էր զուստըն.
 Ունէր Յեփթայէ պյլ ևս ուստե-
 րըն կամ զստերս.
 Զի՞նչ պատառեաց Յեփթայէ.
 Եւ զի՞նչ ասաց ցդուստըն.

 Զա՞ր պատասխանի ետ նմա զուստ-
 ըն իւր.
 Էնդէր ասաց զայն զուստըն.

 Զա՞ր պայման խնդրեաց.
 Առ ի՞նչ խնդրեաց թողացուցա-
 նել ամսս երկուս.
 Ո՞ւր կամէր երթալ շրջել.

Առնուլ զնա ի զօրավար:
 Ոչ անսաց բանից նորա:

 Զորդիսն Ամոնայ:

 Ի դրանց տան իւրոյ:

 Մատուցանել զնա Տեառն յոդ-
 ջակէզ:
 Զորդիսն Ամոնայ:

 Եհար զնոսա հարուածս մճամե-
 ծըս յոյժ:
 Ի տուն իւր ի Մատեփառ:
 Դուստր նորա:
 Թմբկօք և պարուք:
 Միամօք սիրելի նորա:
 Ոչ գցը նորա բաց ի նմանէ ուս-
 տըր կամ զուստը:
 Զհանդերձս իւր:
 Ա՞ոյ է ինձ ասէ, զուստր իմ, ընկ-
 ձեցեր զիս:
 Արա զիս որպէս ել ի բերանոց
 քումմէ:
 Փոխանակ զի արար Տէր վըէժ-
 ինդրութիւն ի թշնամնաց նո-
 րա:
 Թողացո ասէ, ամիսս երկուս:
 Զի երթիցէ շրջեացի:

 Ընդ լերինս:

Զի՞նչ կամբը առնելի շրջել իւ-
րում.

Միայնակ կամբը շրջել և լաւ.

Երբ դարձաւ առ հոյր իւր.

Զի՞նչ արար նովաւ հոյրն.

Զի՞նչ եղել ի կրօնս ի մեջ նորա-
յել.

Քանի՞ տուրս ի տարւոջ ողբային
զդուսարն Յեփթայեց.

Լալ զկուսութիւն իւր.

Ոչ, այլ ինքն և ընկերք իւր.

Յետ կատարելոյ երկուց ամսոցն:

Արար նովաւ զուխտն իւր զոր
ուխտեց:

Ոյրալ զգուսարն Յեփթայեց:

Աւուրս չորս:

ԳԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԱՎՐԱՄՈՒՄ ԲԱՏՏՐ.

Հ. Օ. արդուուղի ըսուած բայերը որո՞նք են.

Պ. Օ. արդուուղի կըսուին այն բայերն որ կանօնաւոր բայե-
րուն խոնարհման կերպէն շատ կիսուտորին մէկ քանի ժա-
մանակներուն մէջ:

Հ. Տաճ զարտուղի բայը ի՞նչպէս կիսոնարհի.

Պ. Տաճ, տաս, տայ, տամք, տայք, տան:

Տայի, տայիր, տայը, տայաք, տայիք, տային:

Ետու, ետուր, ետ, տուաք, ետուք, ետուն:

Տաց, տացես, տացէ, տացուք, տաջիք, տացեն:

Տուր, տաջիր, մի տար, տուք, մի տայք:

Տայցեմ, տայցես, տայցէ, տայցեմք, տայցէք, տայցեն:

Տալ, Տուեալ, Տալոց:

Հ. Տաճ բային կրաւորականն ի՞նչպէս կլինի.

- Պ. Տուեալ լինիմ. Տուեալ լինէի. Տուայ. Տացիմ. Տուեալ
լեր. Տայցիմ.
- Տուեալ լինել. Տուեալ կամ տուեցեալ.
- Հ. Գամ զարտուղին ի՞նչպէս կխոնարհի.
- Պ. Գամ. գայի. Եկի. Եկիր, Եկն. Եկաք, Եկիք, Եկին.
Եկից, Եկեսցես, Եկեսցէ. Եկեսցուք, Եկեսջիք, Եկեսցեն.
Եկ, Եկեսջիր, մի գար. Եկայք, մի գայք.
- Գայցեմ. Գալ. Եկեալ. Գալոց.
- Հ. Եշիմ զարտուղին ի՞նչպէս կխոնարհի.
- Պ. Երթամ. Երթայի. Զոգայ կամ չոքայ, չոգար, Եւն.
Երթայց, Երթիցես, Երթիցէ. Երթիցուք, Երթիջիք,
Երթիցեն:
- Երթ կամ չոգ, Երթիջիք, մի Երթար. Երթայք, մի
Երթայք:
- Երթ այցեմ. Երթալ. Երթեալ. Երթալոց.
- Հ. Առնէմ զարտուղին ի՞նչպէս կխոնարհի.
- Պ. Առնեմ. Առնէի. Արարի, արարեր, արար. արարաք,
արարիք կամ ըէք, ըին.
- Արարից, արասցես, սցէ. արասցուք, սջիք, սցեն.
- Արա, արասջիք, մի առներ. արարէք, մի առնէք.
- Առնիցեմ. Առնել. Արարեալ. Առնելոց:
- Հ. Առնէմ բային կրաւորականն ի՞նչպէս կլինի.
- Պ. Առնիմ. Առնէի. Արարայ. Արարայց. Արասջիք, մի
առներ. Առնիցիմ. Առնել. առնիլ. Արարեալ. Առնելոց.

ԵՐԻՆԵԱՆ ՌԻԹԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՒՄ.

1. Այր մի էր ի Սարաայ
ի ցեղէն Դանայ, անուն նո-
րա Մանովէ. եւ կին նորա
ամուլ էր. Հրեշտակ Տեա-
ռըն երեւեցաւ կնոջն եւ ա-
սէ. Ահա դու ծնցիս որդի,
եւ երկաթ մի ելցէ ի գլուխ
նորա. զի ուխտաւոր Աս-
տուծոյ եղիցի մանուկն.
արդ զգոյշ լեր, գուցէ ըմ-
պիցես գինի եւ օղի, եւ մի
ուտիցես զամենայն ան-
սուրբ:

2. Եւ իբրեւ ասաց զայն
կինն ցայր իւր, աղայեաց
Մանովէ զծէր՝ զի եկեսցէ
դարձեալ առ նոսա այրն
այն եւ լուսաւորեսցէ զնո-
սա, թէ զինչ արասցեն ման-
կանն որ ծնանիցիւ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Մարդ մի կար Սարաա
քաղաքը՝ Դանայ ցեղէն, ա-
նունը Մանովէ, որոյ կինն
ամուլ էր. Աստուծոյ հրեշ-
տակը երեւեցաւ կնոջն ու
ասաց. Ահա դուն որդի. մի
պիտի ծնանիս, նորա գլու-
խը երկաթ (ածելի կամ
մկրատ) պիտի չելնէ, լա-
սըն զի այն տղան Աստու-
ծոյ ուխտաւոր պիտի լինի.
ուստի զգուշացիր, մի գլու-
ցէ գինի եւ օղի խմետ, եւ
անսուրբ բան ամենեւին
չուտես:

2. Երբոր կինը պատմեց
այն բանը իւր էրկանը, Մա-
նովէն աղայեց զԱստուծ
որ այն մարդը նորէն գայ
եւ լոյս տայ իրենց, որ գիտ-
նան թէ ինչ պիտի անեն
այս տղուն որ աշխարհք
պիտի գայ:

3. Առաւ Աստուած Ճայ-նի Մանովէի, եւ եկն միւս անգամ՝ հրեշտակն եւ ասէցնա. Յամենայնէ զօր ասացի կնոջդ՝ զգոյշ լինիցի:

4. Եւ ոչ գիտաց Մանովէթէ հրեշտակ Տեառն իցէ, եւ ասէ. Թող բռնադատեցուք զքեզ, եւ արասցուք առաջի քո ուլ մի յայծեաց. Ասէ հրեշտակն ցՄանովէ. Եթէ բռնադատեցես զիս, ոչ կերայց ի հացից քոց, եւ եթէ արասցես ողջակէզ՝ Տեառն մատուցես զնա:

5. Իրբեւ առ Մանովէ զուլն այծեաց զզոհն եւ մատոյց ի վերայ վիմին՝ Տեառն սքանչելարարի, ընդամբառնալ բոցոյն ի վերուստ ի սեղանոյն յերկինը՝ ամբարձաւ հրեշտակն Տեառն բոցով սեղանոյն. Եւ Մանովէ եւ կին նորահայէին. Եւ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր:

3. Լոեց Աստուած Մանովէի աղաջանքին, ու հրեշտակը նորէն եկաւ, ասաց իրեն. Ինչ բաներէ որ ասի կը նոջդ՝ պէտք է զգոյշ կենայ:

4. Մանովէն չգիտցաւ թէ Աստուածոյ հրեշտակն է, եւ ասաց. Նեղութիւն տամք քեզի, եւ առջեւդ այծուձագ մի պատրաստեմք. Հըրեշտակն ասաց Մանովէին. Որբան եւ նեղես զիս, քու հացերէզ յեմ ուտեր. իսկ եթէ ողջակէզ անես, Աստուածոյ մատուցանես ողջակէզդ:

5. Նրբոր առաւ Մանովէ այծուձագն ու զոհ մատոյց քարին վերայ հրաշագործին Աստուածոյ, բոցը սեղանին վերայէն երկինք ելածժամանակին՝ Աստուածոյ հըրեշտակն եւս սեղանին բոցովը վեր ելաւ. Այն միջոցին Մանովէն ու կինը կեցեր կնայէին. Երեսի վերայ գետին ընկան:

ԴԱՍ

ՀԱՏԵՑԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Այս մի էր ի Սարսաւ.

Ի ցեղն Դանայ.

Անուն նորա Մանովէ.

Կին նորա ամուլ էր.

Հրեշտակ Տեսան երևեցաւ վնադն.

Ահա գու ծննջիս որդի.

Երկաթ մի ելցէ ի զլուխ նորա.

Աւտուաւը Աստուծոյ եղիցի մա-
նուկն.

Զդոյշ լեռ դուցէ ըմպէցես զինի
և օղի.

Մի ռատիցես զամնայն անսուրը.

Ասաց զայն կինն ցար իւր.

Աղաշեաց Մանովէ զՑէր.

Եկեցէ դարձեալ այրն այն ա-
նոսա.

ԶԲնչ արասցեն մանկան որ ծը-
նանիցի.

Լոււաւ Աստուած ձայնի Մանովէն.

Եկն միւս անդամ Հրեշտակն.

Ոչ զիսաց Մանովէ թէ Հրեշտակ
Տեսան իցէ.

Թող բռնագատեցուք զքեզ.

Արացուք առաջի քա ուլ մի յայ-
ծեաց.

Ոչ կերպոց ի հացից քոց.

Մարդ մի կար Սարսաւ քաղաքը.

Դանայ ցեղն.

Անունը Մանովէն.

Նորա կինն անզաւակ էր.

Աստուծոյ Հրեշտակը երևեցաւ
կնոջը.

Ահա գուն որդի պիտի ծնանիս.

Երկաթ թող չենէն նորա զլուխը.

Այն տղան Աստուծոյ ուխտուած
պիտի լինի.

Զդոյշ կեցիր չլինի որ զինի և օ-
դի խմնա.

Մ'ր և իցէ պիղն բան չըւտես.

Կինն ասաց զայն իւր կրկանը.

Մանովէն աղաշեց զԱստուած.

Այն մարդը զայ նորէն իրենց.

Ի՞նչ անեն ոյն աղուն որ պիտի
ծնանի.

Լուց Աստուած Մանովէն ձայնին.

Նորէն եկաւ Հրեշտակը.

Զգիտցաւ Մանովէն թէ Աստուծոյ
Հրեշտակն է.

Եկ նեղութիւն տամբ քեզի.

Կերակուր հանեմք տոջեղ այծու
ծազ մի.

Չեմ ռատեր քու հացերէր.

Եթէ արասցես ողջակէզ, Տեառն
մատուցես զնա.

Առ Մանովէ զուլն պյծեաց.

Մատուց զզո՞ն ի վերոյ վիմին.

Մատուց Տեառն ոքանչեղարարի.

Էնդ ամբառնալ բոցսն ի վերուստ
ի սեղանոյն.

Ամբարձաւ հրեշտակն յերկինս.

Ամբարձաւ հրեշտակն բոցով սե-
ղանոյն.

Մանովէ և կին նորա հոյկին.

Անկան ի վերոյ երեսաց իւրեանց
յերկիբ.

Թէ որ ողջակէզ անես, Աստուծոյ
ովեոք է մատուցանես.

Մանովէն առաւ այծու ձագը.

Դրաւ զօհը քարին վերոյ.

Հրաշագործին Աստուծոյ մատուց:

Երրոր բոցը սեղանին վերոյէն վեր
ելաւ.

Հրեշտակը երկինք վերացաւ.

Հրեշտակը վերացաւ սեղանին բո-
ցովը.

Մանովէն ու նորա կինը կնոյկին.

Երեսի վերոյ գետին ընկան.

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՑՐՈՒԹԻՒՆ.

Հարցմանդ.

Պատճենակ.

Յորմամ քաղաքի էր Մանովէ,

Յորմէ ցեղէ էր.

Զի՞նչ անուն էր նորա.

Որպիսի՞ ոք էր կին նորա.

Ո՞ երեւեցաւ կնոյն.

Զի՞նչ ոչ պարտէր եղանել է
զույխ մանկան.

Զի՞նչ լինելը էր մանուկն.

Զի՞նչ ոչ էր պարտ ըմպել մօրն.

Եւ զի՞նչ ոչ ուտել.

Յո՞ ասաց զոյն կինն.

Զա՞ աղաւնաց Մանովէ.

Ի Սորաս:

Ի ցեղէն Դանայ:

Մանովէ:

Ամուլ էր:

Հրեշտակ Տեառն:

Երկաթ:

Ուխտաւոր Աստուծոյ:

Գինի և օդի:

Զամանոյն ինչ անսուրբ:

Ցոյրն իւր:

ԶՑ էր:

Առ. ո եկեսցէն ասէր Մանովէն ոյ-
րըն ոյն.

Առ. ի՞նչ ասէին նմա դալ.

Է՞ր աղաղաւ լուսաւորել խնդրէին
զի՞նքեանս.

Ո՞ւմ լուսաւ Աստուած.

Ո՞ւ եկն միւս անգամ.

Զի՞նչ ոչ զիտաց Մանովէն.

Զիտրդ աղաշեաց Մանովէն զհրեշ-
տակն.

Խու կամեր մեծարել զհրեշտակն.

Զի՞նչ ոչ ուստել ասաց Հրեշտակն.

Ո՞ւմ պարս էր Մանովէն մատու-
ցանել ողջակեզ.

Զի՞նչ էառ. Մանովէն.

Ո՞ւր մատոյց զզո՞ն.

Ո՞ւմ մատոյց զզո՞ն.

Ուստի ամրարձաւ բոցն.

Ո՞ւր ամրարձաւ Հրեշտակն.

Ե՞րբ ամրարձաւ.

Զիտրդ ամրարձաւ Հրեշտակն.

Զի՞նչ առնեին Մանովէն և կի՞ն
նորա.

Եւ զի՞նչ արարին ապա.

Առ. մեզ:

Զի լուսաւորեսցէ զնոսաւ.

Զի զիտացն թէ զի՞նչ արացն
մանկանն որ ծնանիցի.

Զացնին Մանովէն:

Հրեշտակն:

Բէ Հրեշտակ Տեառն իցէ.

Թող բռնադատեցուք զքեզը տսի:

Առնելով առաջի նորա ուշ մի յոյ-
ծեաց.

Ի հացից Մանովէն.

Տեառն.

Ուշ մի յայծեաց.

Ի վերայ վիմին.

Տեառն սբանչելարարին.

Ի վերուստ ի սեղանոյն.

Յերկինն.

Ընդ ամրառնալ բոցցն.

Բոցով սեղանոյն.

Հայկին.

Անկան ի վերաց երեսաց իւրեանց
յերկիր.

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ.

ՏԱՐԱԾՈՎԱՌ ԲԱՆԵՐ.

- Հ. Դնեմ զարտուղի բայց ի՞նչպէս կխոնարհի.
Պ. Դնեմ. գնէի. Եղի, եղիք կամ եղեր, եղ. եղաք, եղիք, եղին,
Եղից կամ գիցեմ, գիցես, գիցէ. գիցուք, գիջիք, գիցն.

Դիր, դիջիք կամ դնիջիք, մի դներ. դիք, մի դնէք:

Դնիցեմ. Դնել. Եղեալ. Դնելոց.

- Հ. Սորա կրաւորականին կատարեալն, ապառնին ու հըամայականը ի՞նչպէս կլինին.

- Պ. Եղայ. Եղայց կամ գիցիմ. Դիջիք կամ դնիջիք, մի գնիք. Եղարուք կամ եղայք, մի դնիք:

- Հ. Ուուշիմ զարտուղին ի՞նչպէս կխոնարհի.

- Պ. Ուտեմ. ուտէի. Կերայ, կերար, կերաւ կամ եկեր. կերաք, կերայք, կերան:

Կերայց կամ կերիցեմ, ցես, ցէ. ցուք. ջիք, ցեն:

- Կեր, կերիջիք կամ ուտիջիք, մի ուտեր. կերայք կամ կերէք, մի ուտէք:

Ուտիցեմ. Ուտել. Կերեալ. Ուտելոց:

- Հ. Ուուշիմ բային կրաւորականն ի՞նչպէս կխոնարհի.

- Պ. Ուտիմ. ուտէի. կերայ. կերայց կամ կերիցիմ. կերիջիք կամ ուտիջիք, մի ուտիք, մի ուտիք:

Ուտիցիմ. ուտել կամ ուտիլ. կերեալ. ուտելոց:

Հ. Յառնէմ զարտուղին ի՞նչպէս կխօնարհի.

Պ. Յառնեմ. յառնէի. յարեայ, յարեար, յարետւ. յարեաք, յարեայք կամ յարերուք, յարեան:

Յարեայց կամ յարիցեմ, ցես, ցէ. ցուք, ջիք, ցեն.

Արի, յարիջիր կամ յառնիջիր, մի յառներ. արիք կամ յարերուք, մի յառնէք:

Յառնիցեմ. Յառնել. Յարուցեալ. Յառնելոց:

Հ. Ուրիշ ի՞նչ բայեր կան որ զարտուղի կարելի է համարել.

Պ. Դվարաւորապէս այս երեքը, Եղանէմ, Աղանէմ, Գոհ, որ կտիւն բայ կը օսուին սովորաբար:

Հ. Եղանէմ բայը ի՞նչպէս կխօնարհի.

Պ. Եղանիմ. Եղանէի. Եղէց, Եղեր, Եղեւ. Եղաք կամ Եղեաք, Եղէք կամ Եղերուք, Եղեն:

Եղէց կամ Եղիցիմ, Եղիցիս կամ Եղիցես, Եղիցի Եւլն.

Եղիջիր կամ Եղանիջիր, մի Եղանիր. Եղերուք, մի Եղանիք:

Եղանիցիմ. Եղանել. Եղեալ. Եղանելոց:

Հ. Ախնիմ բայը ի՞նչպէս կխօնարհի.

Պ. Ախնիմ. Ախնէի.—Ապ. Ապիմ, Աթ, Աթիր կամ Ախնիջիր, մի Ախնիր. Ախրուք կամ Ախք, մի Ախնիք. Ախնիցիմ. Ախնել. Ախեալ կամ Ախալ. Ախնելոց:

Հ. Գոհ բայը ի՞նչպէս կխօնարհի.

Պ. Գոմի, գուա, գոյ. գոմք, գոյք, գոն. գոյի, Եւլն. գուեմ, Եւլն. գոլ:

ՆՈՐԴԵԱԿԱ ԽԵՆՔԱԳՐ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Յայնժամ գիտաց Մանովէ թէ հրեշտակ Ցեառնէ. եւ ասէ ցկին իւր. Մահու մեռանիցիմք, զի զԱստաւած տեսաք. Ասէ ցնակին նորա. Եթէ կամեցեալէր Ցեառն սպանանել զմեզ, ոչ ընդունէր ի ձեռաց մերոց զողջակէզն, եւ ոչ լուսաւորէր մեղ զայն ամենայն ընդ ժամանակօ ժամանակօ.

2. Ծնաւ կինն որդի, եւ կոչեաց զանունորա Սամփառն. եւ օրհնեաց Տէր ըզմանուկն. եւ էջ Սամփառն ի Թամնաթա, եւ ետես կին մի ի դոտերաց այլազգեացն, եւ հաճոյ թուեցաւ առաջի նորա. ել պատմեաց հօր եւ մօր իւրում եւ ասէ. Զնառուէք ինձ կնութեան:

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Այն ատեն հասկրցառ Մանովէն թէ Աստուծոյ հըրեշտակ է, եւ ասաց կնոջը. Անպատճառ պիտի մեռնիմք, ինչու որ զԱստուած տեսանք. կինը պատասխանեց. թէ որ Աստուած կամեցած լինէր զմեզ ըսպաննել, չէր ընդունէր մերձեռքէն ողջակէզը. եւ ոչ կրյայտնէր մեզի ատեն ատեն այն բաները.

2. Բերաւ կինը իւր զաւակը, եւ անունը գրաւ Սամփառն. եւ Աստուած օրհնեց տղան. Սամփառն Թամնաթա գեղն որ իջաւ, կին մի տեսաւ այլազգեաց աղջիկներէն, աչքին աղէկ երեւցաւ. գնաց պատմեց իւր հօրըն ու մօրը եւ ասաց. Զինքը առէք ինձի կնութեան.

3. Ի ժամանակին յայն-
միկ այլազգիքն տիրելին Խո-
րայէլի։ Եւ էջ Սամփոսն ի
Թամնաթա, եւ խոտորեցաւ
յայգեստանն, եւ ահա կո-
րիւն մի առիւծուց գոչեաց
ընդդէմ նորա։ Յաջողեցաւ
ի վերայ Սամփոսնի հոգի
Տեսան, եւ ճեղքեաց զնա
Սամփոսն իբրև գուլ մի այ-
ծեաց, եւ ոչինչ գոյր ի ձե-
ռին նորա։

4. Խօին ծնողքն Սամփ-
սոնի եւ խօսեցան ընդ կնո-
ցըն։ Եւ Սամփոսն գարձաւ
յետ աւուրց ի Թամնաթա
առնուլ զկինն։ Խոտորեցաւ
տեսանել զգէշ առիւծուն,
եւ ահա գունդ մեղուաց ի
բերան առիւծուն եւ մեղր·
առ զայն ի բերան իւր, եւ
երթալով երթայր եւ ու-
տէր· չոգաւ ետ եւ ծնողա-
ցըն եւ կերան, եւ ոչ պատ-
մեաց նոցա՝ թէ ի բերանոյ
առիւծուն եհան զմեղրն։

3. Այն ժամանակը այ-
լազգիք տիրած էին Խորա-
յէլացւոց վրայ, Գնաց Սամփ-
սոն Թամնաթա, եւ ճամ-
բէն գուրս ելաւ դէպ ի այ-
գիները, եւ ահա առիւծի
ձագ մի գոչեց նորա դէմ։
Աստուծոյ հոգին յաջողու-
թիւն տուաւ Սամփոսնի.
Սամփոսն ճղքեց առիւծը՝
այծու ձագի մի պէտ, եւ
ձեռքը բան մի չկար։

4. Սամփոսնի ծնողքը գը-
նացին խօսեցան կնոջը հետ-
եւ Սամփոսն քանի մի օրէն
դարձաւ Թամնաթա որ առ-
նու կինը, ճամբէն գուրս
ելաւ որ առիւծին սատա-
կը տեսնէ. եւ ահա առիւ-
ծին բերնին մէջ մեղու-
ներու խումբ ու մեղր. ա-
ռաւ մեղրը բերանը, եւ ու-
տելէն կերթար. զնաց ծնո-
ղացն եւս տուաւ, բայց լը-
պատմեց նոցա որ առիւծին
բերնէն հաներ է մեղրը։

ՀԱՏԵՆՑԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Յայնժա՛ր զիտաց Մանովէ-

Մահու մեռանիցիւք-

Զի զԱստուած տնապ
Եմէ կամցեալ Էր Տեռան սոր-
շանել զմեղ.

Աւ ը՞դունէր ի ձեռաց մերոց զող-
ջակէզն.

Աւ լուսաւորեր մեղ զայն ամե-
նայն.

Ընդ ժամանակս ժամանակս.

Կ' նաև կինն օրդին
Կոչեաց զանուն նորա Սամիսոն.
Օրհնեաց Տէր զմանուկն.

Էջ Սամիսոն ի Թամնաթա.
Եսես կին մի ի դատերաց ոյլազ-
գեացն.

Համայ թուեցաւ առաջի նորա.

Ել պատմեաց հօր և մօր իւրում.
Զնա առ էք ինձ կնութեան
Այլազիքն տիրէն Խորոշէլին

Խոտորեցաւ Սամիսոն յայգեստա-
նըն.

Կորին մի առիւծու զոշեաց ընդ-
գէր նորա.

Այն ժամանակը հասկըցաւ կամ
իմացաւ Մանովէն.

Անպատճառ կմեռնիմք պիտի մեռ-
նիմք երթամբ.

Որովհեան զԱստուած տնապն.

Թէ որ Աստուած կամցած լիներ
զմեղ մեռցընելու.

Միր ձեռքէն ողջակէզը չէր ընդու-
նէր.

Տէր յայներ մեղի այն ամէն բա-
ները.

Ժամանակ ժամանակ.

Կինը մանչ զաւակ մի բերաւ,
Անունը զրաւ Սամիսոն.

Աստուած օրհնեց աղան,

Սամիսոն Թամնաթա զաց,

Կին մի առաւ այլազիքն աղջիկ-
ներէն.

Երն աչքին աղէկ երնեցաւ հա-
նեցաւ.

Գնաց պատմեց իրեն հօրնու մօրը

Այն աղջիկը ինձի հարս առեք:

Այլազիքները կտիրէն Խորոշէլոց-

ւոց վիրոց:

Սամիսոն ճամփին գուրս եղաւ դեղ
ի այզիները.

Առիւծի լախա մի կանչեց նորա դիմ

Յաջողեցաւ ի վերաց Սամփսոնի
հազի Տետոն.

Անդքեաց Սամփսոն զառիւծն իբ-
րև զուլ մի պյենց.

Ոչինչ զցը ի ձեռին նորա.

Ծնողքն Սամփսոնի խօսեցան ընդ
կնոջն.

Դարձաւ Սամփսոն առնուլ զի՞նն.
Խոսարեցաւ անսանել զցէլ ա-
ռիւծուն.

Գունդ մեղուաց էր ի բերան ա-
ռիւծուն.

Առ զմեղը ի բերան իւր.

Երթալով երթացը և ուսեր.

Չոզաւ ետ ծնողացն և կերան.

Ոչ պատմեաց նոցա.

Ի բերանց առիւծուն եհան զմեղըն.

Առուեծը հզին Սամփսոնի վերաց
ելաւ.

Սամփսոն առիւծը պյժի ձազի պէս
ճեղքեց.

Տեղը բան մի չկար.

Սամփսոնի ծնողքը կնօղը հետ խօ-
սեցան. խօսք զրին.

Սամփսոն դարձաւ որ կինը առնու-
ճամբէն ելաւ զնաց՝ առիւծին ա-
տակը անսանելու.

Առիւծին բերնէն մէջ մեղուներու
խումբ կար.

Առաւ մեղքը բերանը.

Կերթար ու կուտէր, ուսեղով կեր-
թար.

Գնաց տուաւ ծնողացն ու կերան:

Զպատմեց նոցա.

Առիւծին բերնէն հանեց մեղքը.

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ՀՀՀՀՀՀՀՀ.

Ե՞րբ զիսաց Մանովէ թէ հրեշտակ
Տետոն է.

Զի՞նչ ասաց ցի՞նն իւր.

Ընդէր ասաց թէ մռառնիցին.

Զի՞նչ ոչ կամեցեալ էր Տէր.

Ապա թէ ոչ՝ զի՞նչ առներ.

Գ-Գ-Գ-Գ-Գ-Գ-

Յամբառնալ նորա յերկինս.

Մահու մռառնիցիսը:

Զի զԱստուած տեսին.

Սպանանել զնոսա:

Ոչ ընդունէր զողջակեզն.

Յումմէ՞ կամ ուստի՞.

Ե՞րբ լուսաւորէր նոյս Աստուած
զայն ամենայն.

Զ՞ո՞ ծնաւ կինն.

Զի՞նչ կոչեաց զանուն նորա.

Զի՞նչ արար Ցէր զմանուդն.

Ո՞ւր էջ Սամիսոն.

Զ՞ո՞ ետես անորանօր.

Զի՞նդ թուեցաւ նմա.

Ո՞ւմ պատմաց նա զայն.

Զ՞ո՞ ասաց առնուլ իւր կնութեան.

Ո՞ւ տիրէր յայնժամ Խորսը էջի.

Ո՞ւր խոտորեցաւ Սամիսոն.

Ո՞ւ գոշեաց ընդդէմ նորա.

Զի՞նդ զօրացաւ Սամիսոն.

Զի՞նչ արար կորեանն առիւծու.

Զի՞նչ դոյր ի ձեռին նորա.

Զի՞նչ արարին ծնողքն Սամիսոն
նի ի թամմաթա.

Առ ի՞նչ դարձաւ անդր Սամիսոն.

Առ ի՞նչ խոտորեցաւ դարձեալ
յայգեստանն.

Զի՞նչ ետես ի բերան առիւծու.

Զի՞նչ էտո ի բերան իւր.

Զի՞նչ առնէր յերթալ իւրում.

Զի՞նչ արար զմացեալ մեղրն.

Զի՞նչ ոչ պատմաց ծնողացն.

Ի ձեռաց նոյսա:

Ընդ ժամանակս ժամանակս:

Որդի,

Սամիսոն,

Օրհնեաց զնա:

Ի թամմաթա:

Կին մի ի դատերաց այլազգեացն:

Հաճոյ թուեցաւ առաջի նորա.

Հօր և մօր իւրում:

Զինն զայն:

Այլազգիքն տիրէնն:

Յայգեստանն:

Կորիւն մի առիւծու:

Յաջողեցաւ ի վերայ նորա Հոդի
Տեսուն:

Ճեղքեաց զնա իւրև զուլ մի այ-
ծեաց:

Ոչ ի՞նչ ԿՄՐ:

Խոսեցան ընդ կնողն:

Առնուլ զինն իւր:

Տեսանել զգէշ առիւծուն:

Գունդ մեղուաց և մեղր:

Զմեղրն:

Երթալով երթոյր և ուտէր:

Զօդաւ հա հօր և մօր իւրում և
կերան:

Թէ ի բերանոյ առիւծուն եհան
զմեղըն:

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ.

ՊԱԿԱՎԱՐՈՐ ԲԱՑԵՐ.

Հ. Ո՞ր բայերը դակասաւո՞ր կը սուլին.

Պ. Անոնք որ չունին իրենց արմատին նման քանի մի եղանակ կամ ժամանակ, եւ շատը իրենց պակասը ուրիշ ամբողջ բայէ կառնուն.

Հ. Պակասաւոր բայերուն գլխաւորները որո՞նք են.

Պ. Արքի. լուայ. ծանեայ. ունիմ, կալայ.

Հ. Եթէ բայը ի՞նչպէս կխօնարհի, եւ ուսկից կառնու պակասը.

Պ. Արքի, արքեր, արք կամ էարք. արքաք, արքիք կամ արքէք, արքին:

Արքից, եւլն. արք, արքջիր. արքէք. արքեալ: — Պակասը կառնու ընդույն կառնոնաւոր բայէն:

Հ. Լուայ բայը ի՞նչպէս կխօնարհի, եւ ուսկից կլրանայ.

Պ. Լուայ, լուար, եւլն. լուայց, լուիցես, եւլն. լուր, լուիջիր, լուարուք. լուեալ: — Կլրանայ Լուիմամբողջ բայէն:

Հ. Ծանեայ բայը ի՞նչպէս կխօնարհի, եւ ուսկից կլրանայ.

Պ. Ծանեայ, ծանեար, եւլն. ծանեայց, ծանիցես, եւլն. ծանիր, ծանիջիր. ծանիք, ծաներուք. ծանուցեալ: — Կը լրանայ ծանավէմ ամբողջ բայէն:

Հ. Ունիմ բայը ի՞նչպէս կխօնարհի.

Պ. Ունիմ. ունէի. կալայ, կալար, կալաւ կամ կալ. կալք, կալայք կամ կալարուք, կալան. կալայց, կալցիս, եւլն.

կալ կամ կտ, կալջիր կամ ունիջիր, մի ունիր. կալարուք
կամ կալայք, մի ունիք.

Ունիցիմ, ցիս, եւլն. ունել. կալեալ. ունելոց:

Հ. Պարոյչմ պակասաւոր բայը թնջպէս կխօնարհի.

Պ. Պարտիմ. պարտէի. պարտիցիմ. պարտել: — Ուրիշ ե-
զանակներ ու ժամանակներ չունի.

Հ. Գոհցէս բայը թնջպէս կխօնարհի, եւ որդափ են ունե-
ցած ձեւերը.

Պ. Սհմ. Առ. — գողցես, գողցէ. գողցուք, գողջիք, գող-
ցեն.

Հրմ. — գոգ, գողջիր, գողէք. — Դերը. անորիշ, գողել.

ԵՐԹՆԵՑԿ ՏԱՄՆԵՐՈՒԴ

ԳԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Ի զարհուքել այլազ-
գեացն ի Սամիսանէ յաւու-
րը հարսանեաց նորա, կա-
ցուցին առ նա ընկերս երե-
սուն. Առէ ցնոսա Սամի-
սոն. Արկից ձեզ առասպել-
եթէ առեղծանելով առեղ-
ծանիցէք ինձ զնա զեօթն
օր խրախութեանս, տաց

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Այլազգիները վախ-
նալով Սամիսանէն՝ նորա
հարսանիքին օրերուն, երե-
սուն ընկեր գրին քովը:
Սամիսան ասաց նոցա թէ
հանելուք մի առեմ ձեղի.
եթէ ինչպէս որ պէտք է'
լուծէք ինծի այս ուրախու-
թեան եօթը օրուանը մէջ,

ձեղ երեսուն պատառաւակալ եւ երեսուն պատմունան հանդերձից ապա թէ ոչ կարիցէք առեղծանել, դուք տաջիք ինձ։

2. Իբրեւ ասացին ցնա թէ արկ մեզ զառասպելն քո եւ լուիցուք զնա, ասէ. ի կերչէ ել կերակուր, եւ ի հզօրէ ել քաղցր։ Եւ ոչ կարացին առեղծանել զառասպելն նորա զերիս աւուրս. եւ յաւուրն չորրորդի ասեն ցկինն Սամփսոնի. պատրեազայր քո, եւ պատմեցէ քեզ զառասպելն. գուցէ այրիցեմք զքեզ եւ զտուն հօր քոյ. թէ աղքատացուցանել կոչեցեր զմեզ այսր։

3. Իբրեւ ելաց կինն Սամփսոնի առ նա եւ թախանձեաց զնա, պատմեաց նմա Սամփսոն յաւուրն եօթներորդի, եւ նա պատմեաց որդւոց ազգին իւրոյ։ Եւ նորա ասեն ցնա յառաջքան զմտանել արեգակա-

կուտամշ ձեզի երեսուն կըտոր լաթ եւ երեսուն ձեռք հագուստ. իսկ եթէ չկարենաք լուծել, գուք կուտաք ինձի։

2. Երբոր ասին իրեն թէ զրուցէ մեզի քու. հանելուքը որ լսեմք, առաց. Աւտոզէն կերակուր ելաւ, եւ ուժովէն քաղցր ելաւ։ Երեք օր յըկրցան գտնել նորա հանելուքը, եւ չորրորդ օրն ասին Սամփսոնի կնոջը, խաբէ էրիկզ՝ որ պատմէ քեզի հանելուքը. ապա թէ ոչ կայրեմք զքեզ եւ հօրդտունը. միթէ զմեզ աղքատացընելմն կանչեցիր այստեղ։

3. Երբոր Սամփսոնի կինը լացաւ առջեւն ու շատ աղաջեց, եօթներորդ օրը պատմեց անոր Սամփսոն, եւ նա պատմեց իւր ազգին որդոցը. Այն ատեն ասին նորա Սամփսոնի՝ արեւուն մանելէն առաջ. մեղրէն

նըն. Զի՞նչ քաղցրագոյն
քան դմեղր, կամ զի՞նչ հը-
զօրագոյն քան դառիւծ:

4. Ասէ ցնոսա Սամիսոն.
Եթէ ոչ ճնշեալ էր դերին-
ջըն իմ, ոչ գտանէիք զա-
ռասպելն իմ: Էջ յԱսկա-
զմն, եւ եհար անդ արս երե-
սուն, եւ առ ետ զարատմու-
ճանսն առասպելին: եւ բար-
կացեալ որտմութեամբ ել
ի տուն հօր իւրոյ:

Քաղցր ի՞նչ բան կայ, ա-
ռիւծէն զօրաւոր ի՞նչ բան
կայ:

4. Սամիսոն պատասխա-
նեց նոցա. թէ որ իմ երին-
ջըս նեղը ձգած լինէիք, չէ-
իք գտներ իմ հանելուքը:
Գնաց Ասկազմն քաղաքը,
այնտեղ երեսուն հոգի զար-
կաւ, եւ հագուստներն ա-
ռաւ տուաւ հանելուքը
գտնողներուն. եւ սաստիկ
բարկացած՝ ելաւ գնաց հօ-
րը տունը:

ԴԱՍ Բ.

ՀԱՏԵՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Ի զարհուրել ոյլազգեացն ի Սամ-
իսոնէ.

Յաւուրս հարսանեաց նորա.
Կացուցին առ նա ընկերս երեսուն.
Արկից ձեզ առասպել.
Եթէ առեղծանելով առեղծանի.
ցկը ինձ զնոր.

Զեօթն օր իւրափութեանս.

Տաց ձեզ երեսուն պաստառակող.

Երրորդ պղազգիները սարսափեցան
Սամիսոնէն:

Նորա հարսնիքին օրերը,
Երեսուն ընկեր զրին քովը:
Հանելուք մի առեմ ձեզի.
Եթէ չիշդ դանէք հանելուքս.

Այս ուրախութեան եօթը զբու-
նը մէջ:

Երեսուն կտաւ կամ լաթ կուտամ
ձեզի,

Երեսուն պատմուման.

Դուք տաջիք ինձ երեսուն պատ-
մուման.

Արկ մեղ զառասպելն քա.

Լուիցուք զառասպելն քա.

Ի կերչէ ել կերակուր.

Ի հզօրէ ել քաղցր.

Ոչ կարացին առեղծանել զառա-
պելն նորա.

Յաւուրն չորրորդի.

Պատրեա զայր քա.

Պատմեցէ քեղ զառասպելն.

Դուցէ պըիցնէք զքեղ և զուռն
հօր քս.

Թէ աղքատացուցանել կուցեր
զմեղ պյառ.

Ելաց կինն Սամիսոնի առ նա.

Թախանձեաց կինն զՍամիսոն.

Պատմեց զառասպելն որդոց աղ-
զին իւլց.

Յառաջ քան զմուանել արեգականն.

Զի՞նչ քաղցրագոյն քան զմեղը.

Զի՞նչ հզօրագոյն քան զառիւծ.

Եթէ ոչ ճնշեալ կը զերինջն իմ.

Ոչ զառնելք զառասպելն իմ.

Եհար յԱսկաղոն արս երեսուն.

Ետ զպատմումանսն առեղծանե-
լնաց առասպելին.

Երեսուն հազուստ կամ կապոյ:
Դուք կուտաք ինծի երեսուն հա-
զուստ:

Ասա մեղի հանելուքդ:

Լուիք հանելուքդ:

Աւողէն կերակուր ելաւ:

Աւժովէն անցը եղաւ:

Տեղան գանել նորա հանելուքը:

2որբորդ օրը:

Խորէ կրիկդ:

Թող պատմէ քեղի հանելուքը:

Մի՞ գուցէ պըրեմք զքեղ ու հօրդ
առնը:

Միթէ աղքատացընելոն կանչեցիր
զմեղ պյառեղ:

Սամիսոնի կինը լացաւ առջելը:

Շատ աղաղանք արաւ կինը Սամ-
իսոնի:

Պատմեց հանելուքը իւր աղջն
մարդոցը:

Արեւուն մանելէն առաջ:

Ի՞նչ կայ մեղըն աւելի անցը:

Ի՞նչ կայ առիւծէն աւելի ուժով:

Թէ որ իմ երինջն (կովս) նեղած
չընելիք:

2եկը գաներ իմ հանելուքս:

Երեսուն մարդ զարկաւ Անկաղոնի
մեջ:

Տուաւ հազուստները այն հանե-
լուքը գանողներուն:

Պարկացաւ Սամիսոն որտանու-
թեամբ.

Ել Սամիսոն ի տառ հօր իւրց.

Սամիսոն սաստիկ սրբողեցաւ:

Սամիսոն իւր հօրը տունը գնաց:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-Ե-Յ/-/-Ն-Ի.

Գ-Վ-Վ-Ե-Ն-Ի.

ԶԲարդ վարեցան պղազիք ընդ
Սամիսոնի.

Զ-Ռ կացուցին առ նա.

Յորում ժամանելի.

ԶԲՄՆԸ էարկ Սամիսոն ընկերացն.

ԶԲՄՆԸ առնելոց կին զառասպելն.

ԵՐԲ ասաց առեղծանել զառա-
սպելն.

ԶԲՄՆԸ խօստացաւ տալ նոցա-
նոցա զի՞նչ առլոց կին նմա.

ԶԲՄՆԸ կամնցան լսել.

Ուստի ել կերակուր.

Յումիմ ել քաղցր.

ԶԲՄՆԸ ոչ կարացին ընկերքն առ-
նել.

ԵՐԲ խօսեցան ընդ կնոջն Սամ-
փառնի.

ԶԲՄՆԸ կամին զի արասցէ.

Առ ԲՆԸ կամին զի պատրեսցէ
զայրն իւր.

Զ-Ռ սպառնային այրել.

Զարհուրեցան ի նմանէ:

Ընկերս երեսուն:

Յաւուրս հարսանեաց նորա:

Առասպել:

Առեղծանել զայրն:

Յաւուրս խրախութեան:

Երեսուն պաստառակալ:

Երեսուն պատմուհան հանդերձեալ:

Զառասպելն Սամիսոնի:

Ի կերչէ.

Ի հզորէ:

Առեղծանել զառասպելն Սամի-
փառնի:

Յաւուրս չորրորդի:

Զի պատրեսցէ զայրն իւր:

Զի պատմուցէ զառասպելն:

Զնա և զառւ հօր նորա:

Առ ի՞նչ կոշեալ ասէին նորա ըդ-
նոսա.

Զի՞նչ արար կինն Սամիսոնի.

Ո՞ւմ պատմեաց կինն զառասպելն.

Յորում աւուր պատմեաց.

Յորում պահու աւուրն.

Քան զի՞նչ քաղցրագոյն.

Քան զի՞նչ հզօրագոյն.

Զո՞ւ ասաց Սամիսոն թէ ձնշալ

էր նոցա.

Զի՞նչ ոչ դասնկին.

Ո՞ւր էջ Սամիսոն յետ պյորիկ.

Զի՞նչ արար անդ.

Զի՞նչ էառ ի նոցանէ.

Ո՞ւմ ետ զպատմուճանս.

Յի՞նչ միտս էր յայնժամ Սամ-

փառն.

Եւ յո՞ւ ել.

Աղքատացացանել գնոսաւ.

Ելաց առ նա և թախանմեաց զնուա.

Որդոց ազգին իւրոյ.

Յաւուրն եօմներորդի.

Յառաջ քան զմանել արեգա-
կանն.

Քան զմեղը.

Քան զառինձ.

Զերինջն իւր.

Զառասպելն իւր.

ՅԱԿԱՂՈՆ:

Եհար արս երեսուն:

Զպատմուճանս երեսօւն:

Առեղծուանելեաց առասպելին:

Բարկացեալ էր սրտմութեամբ:

Ի առև հօր իւրոյ:

ԴԱՍ Գ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԱՆԴԵՄ ԽԱԾԵՐ.

Հ. Անդէմ բայերը որո՞նք են.

Պ. Անդէմ կըսուկին մէկ քանի բայեր որ շատ պակասաւոր
են, եւ կըանին միայն եզակի երրորդ դէմքով, ինչպէս Սաբ-
լէ, Պէտէ, Յաւէ:

Հ. Սաբլէ ի՞նչ կնշանակէ, եւ ի՞նչպէս կլսոնարհէ.

- Պ. Մարմնէ կնշանակէ իտէլի է. ուրիշ ունեցած ձեւերն են՝ Մարմնէ, որ է իտէլի էր, եւ Մարմնէ, այսինքն իտէլ լինէ:
- Հ. Պէտք ի՞նչ ըսել է, եւ ի՞նչպէս կխոնարհի.
- Պ. Պէտք՝ պէտք է. Պէտք, պէտք էր. Պէտքառ, պէտք եղաւ. Պէտքաց կամ ոյտէցի, պէտք լինի.
- Հ. Յաւէ ի՞նչ կնշանակէ, եւ ի՞նչպէս կխոնարհի.
- Պ. Յաւէ, ցաւ կուտայ. Յաւէ, ցաւ կուտար. Յաւէաց, ցաւ եզաւ, ցաւ տուաւ. Յաւէացի կամ յաւէացի, Յաւէցի կամ յաւէցի, ցաւ լինի.
- Հ. Ուրիշ ի՞նչ բայեր կան որ անդէմ բայի պէս կգործածուին.
- Պ. Քանի մի ամբողջ բայեր, որոց եզակի երրորդ դէմը միայն կրանի երբեմն անդէմի պէս. զորօրինակ, հանդէոյն, կպատահի. ոչովացի, պատահի. հասանէ, պէտք լինի. ոսէ, կըսուի. էրեւէ, նուէ, կերեւայ. իտէն, կկարծուի. լէ, կլսուի.
- Հ. Յամ բային գործածութեանը վերայ ի՞նչ մասնաւոր գիտելիք կայ.
- Պ. Երբեմն ուրիշ բայերուն անորիշ գերբային հետ կգործածուի՝ աշխարհաբառին մէջ գործածուածին նման. զորօրինակ, դամ դանէլ, տանիլ կուտամ. դամ ընդէլ, խմել կուտամ, կխմցընեմ. դամ խօսէլ, խօսիլ կուտամ. կխօսեցընեմ.
- Հ. Աւանէմ բային գործածութեանը վրայ ի՞նչ մասնաւոր գիտելիք կայ.
- Պ. Անորիշ գերբային հետ դամ բային նշանակութեամբը կգործածուի. զօր օրինակ, արտ ճագանէլ մտնել տուր, մըտցուր. ոչ բայց այս հագանէլ, պատը ծակել չէր տար, չէր թողուր, եւլն. Երբեմն ալ ածական անուններու հետ կբա-

Նի. զոր օրինակ, բաղստ առնեմ, կշատցընեմ. սուրախ առնեմ,
կուրախացընեմ. ժաման ոչոքեր, հասուցիր, եւն.

ԵՐԹՆԵՐԿ ՄԵՑԱՍՆԵՐԱԲ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Խըրեւ լուաւ Սամփ-
սօն թէ կին նորա ամուս-
նացաւ ընդ հացերիցուն իւ-
րում, գնաց եւ կալաւ ե-
րեք հարիւր աղուէս. կա-
պեաց զնոսա ընդ միմեանս
ձետ ընդ ձետ, եւ եդ ջահս
ի մէջ երկուց ձետոցն. ելոյց
հուր ի ջահսն, եւ արձա-
կեաց զաղուեսունօն յոն այ-
լազգեաց, եւ այրեաց զօրա-
նըն եւ զյառաջագոյն հըն-
ձեալսն՝ ի բարդից մինչեւ
ցկանգնաւորն, եւ մինչեւ
ցայգիս եւ ցձիթենիս:

2. Յայնժամ ելին այլազ-
գիքն, այրեցին զտուն հօր

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Երբոր լսեց Սամփսօն
թէ նորա կինը իւր հարս-
նաւէրին հետ կարգուեր է,
գնաց' երեքհարիւր աղուէս
բռնեց, կապեց զանօնք ի-
րարու հետ պոչ պոչի, եւ
երկերկու պոչերու մէջ-
տեղը ջահեր դրաւ. կրակ
տուաւ ջահերուն, եւ ար-
ձըկեց աղուէսները այլազ-
գիներուն արտը, եւ այրեաց
օրանը եւ առաջուց հըն-
ձուածները՝ դէղերէն մին-
չեւ չկտրուածները, եւ մին-
չեւ այգիներն ու ձիթենի-
ները:

2. Այն ժամանակն ելան
այլազգիներն, այրեցին նո-

նորա, եւ զկինն եւ զհայր
նորա, եւ բանակեցան զթու-
դայիւ, իսկ արք յուղայ ե-
րեք հազարք իջին կապել
զվամփսոն եւ մատնել ի ձե-
ռքս այլազգեացն, Ասէ ցնո-
սա Սամփսոն. Երդուարուք
ինձ դուք չսպանանել զիս,
եւ տուք զիս ցնոսա:

3. Երդուան նմա, եւ կա-
պեցին զնա երիւք կարովք
նորովք: Եւ իրրեւ ազազա-
կեցին այլազգիքն եւ ընթա-
ցան ընդդէմ նորա, յաջո-
ղեցաւ ի վերայ Սամփսոնի
հոգի Տեառն, եւ եղեն կար-
քըն ի բազուկս նորա իրրեւ
զինծուծ՝ յօրժամ ի հուր
հոտոտիցի, եւ հալեցան կա-
պանքն ի բազկաց նորա:

4. Եւ եգիտ ծնօտ մի ի-
շոյ ընկեցեալ. ձգեաց զձե-
ռքն իւր եւ առ զնա, եւ ե-
հար նովաւ հազար այր, եւ
ապա ընկեց զծնօտն ի ձե-

րա հօրը տունը, նմանապէս
նորա կինն ու կնոջ հայրը,
եւ բանակդրած պաշարեցին
Յուդայի ցեղը, իսկ Յուդայի
ցեղէն երեք հազար հոգի ե-
լանգնացին որ կապեն Սամփ-
սոնն ու տան այլազգեաց
ձեռքը: Սամփսոն ըսաւ նո-
ցա թէ՛ երդում ըրէք որ
գուք չմեռցընէք զիս, հազա-
տուէք զիս նոցա ձեռքը:

3. Երդում ըրին, յեաոյ
կապեցին զինքը երեք նոր
չուաններով: Երբոր այլազ-
գին երը կանչուըռուտեցին ու
առջեւը վազեցին, Աստու-
ծոյ հոգին զօրացաւ. Սամփ-
սոնի վերայ, եւ չուանները
նորա թեւերուն վերայ խը-
ծուծի նման եղան՝ որ կրա-
կի հոտ առնու, հալեցան
ընկան կապերը թեւերէն.

4. Այն միջոցին գետինը
ձգուած իշու ծնօտ մի գը-
տաւ. երկրնցուց ձեռքը՝ ա-
ռաւ զայն, եւ անով հազար
հոգի զարկաւ մեռուց. յե-

Աանէ իւրմէ. եւ կոյեաց
զտեղին կոտորած ծնօտի:

5. Եւ իբրեւ ծարաւեցաւ
յոյժ, աղաղակեաց առ Տէր.
Եւ երաց Տէր զծակ ծնօտին,
Եւ ել ինմանէ ջուր եւ արք.
Եւ դարձաւ ոգի իւր առ ին-
քըն եւ զովացաւ:

տոյ ձգեց ծնօտը ձեռքէն,
եւ տեղւոյն անունը դրաւ
ծնօտի ջարդ:

5. Երբոր սաստիկ ծարա-
ւեցաւ, առ Աստուած աղա-
ղակեց. Աստուած բացաւ
ծնօտին ծակը, ջուր ելաւ
անկէց եւ խմեց. անովլ հո-
գի առաւ ու զովացաւ.

ԴԱՍ Բ.

ՀԱՏԲՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Կի՞ն Սամիսոնի ամուսնացաւ ընդ
հացերիցուն իւրում.

Կապաւ երեքհարիւր աղուէս.

Կապեաց զնոսա ընդ միմեանս ձետ
ընդ ձետ.

Եղ ջահս ի մէջ երկուց ձետոցն.

Ելցյց հուր ի ջահսն.

Արձակեաց զաղուեսունսն յոճ այ-
լազգեաց.

Այրեաց զօրանն.

Այրեաց զյառաջազըն Շնձեալսն.

Ի բարդից մինչև ցկանգնաւորն.

Մինչև ցոյզիս և ցձիթենիս.

Սամիսոնի կինը կարգուեցաւ իրեն
հարսնաւէրին (այս ինքն զինքը
հարս բերողին) հետ:

Երեք հարիւր աղուէս բանեց:
Կապեց զանոնք իրարու հետ պոչ
պոչի:

Երկու պոչերուն մէջտեղը ջահ
(մաշալա) դրաւ:

Զահերուն կրակ տուաւ:

Արձկեց աղուէսները այլազգեաց
արտերը:

Այրեց դիզուած որաները:

Առաջուց կտրուածներն պյորեց:

Իրարու վերայ դիզուածներէն մին-
չև չկտրուածները:

Մինչև պյուներն ու ձիթենիները:

Ա. Ալաղղիքն այրեցին զառան հօր
նորա.

Ա. Արեցին զինն և զհայր նորա.

Ա. Ալաղղիքն բանակեցան զթուդա-
յին.

Արք Յուղայ երկը հազարք իշխն
կապել զՍամիսոն.

Մատնել զՍամիսոն ի ձեռս ոյ-
լազգեացն.

Երդուարուք ինձ չսպանանել զիս.

Տուք զիս ի ձեռս այլազգեացն.

Կապեցին զՍամիսոն երիւք կա-
րովք նորովք.

Ա. Ալաղղիքն ընթացան ընդդէմ
նորա.

Եզն կարքն ի բազուկս Սամիսո-
նի իրրեւ զիծուծ.

Յորժամ ինեւծն ի հուք հաս-
տիցի.

Հալեցան կապանքն ի բազից
նորա.

Եզիս ծնօտ մի իշց ընկեցեալ.

Զգեաց զձեռն իւր և առ զնա.

Եհար նովաւ հազար այր.

Ընկէց զծնօտն ի ձեռանէ իւրմէ.

Կոչեաց զանդին կոտորած ծնօտի.

Ա. Ալաղղիներն այրեցին նորա հօր
տունը:

Ա. Արեցին կինը և նորա հայրը:

Ա. Ալաղղիները բանակ դրին Յու-
դայի չըրս զին:

Յուդայի ցեղին մարդիկը՝ երկը հա-
զար հոգի՝ զնացին որ Սամիսո-
նը կապեն:

Սամիսոնը այլազգիներուն ձեռքը
մատնելու:

Երդուարուք ըրեւք ինծի որ զիս չըս-
պաննէք:

Տուք զիս այլազգիներուն ձեռքը:

Երիք նոր չուանով կապեցին
Սամիսոնը:

Ա. Ալաղղիները զիմացը վազեցին:

Չուանները Սամիսոնի թևերուն
վերայ քթանի աանտրուքի պէս
եղան:

Երրոր ինծուծը կրակ առնոււ կրա-
կի զոլլի:

Կապերը հալեցան նորա թևերէն:

Իշու ծնօտ մի զուաւ ընկած:

Ճեռքը երկընցուց՝ առաւ զնա:

Հազար հոգի զարկաւ մռուց ա-
նով:

Շնօտը ձեռքէն վար ձգեց:

Տեղւոյն անունը դրաւ ծնօտի ջարդ:

Սամիկսոն ծարաւեցաւ յոյժ.
Երաց Տէր զետէ ծնօտին.
Ել ի ծնօտէն ջուր.
Դարձաւ ողի իւր առ թիքն.

Սամիկսոն սաստիկ ծարաւեց ։
Աստուած ծնօտին ծակը բացաւ.
Մնօտէն ջուր ելաւ.
Հոգին վերան եկաւ, հոգի առաւ.

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՑՐՈՒԹԻՒՆ.

Հ-ԵՅ/Ա-Ն-Ի-.

Ընդ մւմ ամուսնացաւ կինն Սամիկ-
սոնի.

ԶԲԴՆՀ կաղաւ Սամիկսոն.
ԶԲԴՆՀ արար զաղուենունան.
ԶԲԴարդ կապեաց զնոսա.

ԶԲԴՆՀ եդ ի մեջ երկուց ձետոցն.
Ո՞ւր եղաց զհուր.

Ե՞՞ արձակեաց զաղուենունան.

ԶԲԴՆՀ այրեաց Սամիկսոն.
ԶԲԴ արմախս այրեաց.

ԶԲԴՆՀ այլ ինչ այրեաց.
ԶԲԴՆՀ արարին այլազգիքն.

Եւ զի՞նչ արարին ընդ կինն.
Ո՞ւր բանակեցան այլազգիքն.

Ո՞յք ոմանք իջին կապել զՍամիկ-
սոն.

ԶԲԴՆՀ կամիքն առնել զնա.

Առ ի՞նչ երգմեցցց Սամիկսոն
զարս Յուղաւ.

Գ-Ե-Յ-Ե-Ն-Ի-.

Ընդ հացերիցուն նորա:

Երեք հարիւր աղուես:
Կապեաց զնոսա ընդ միմեանս:

Տես ընդ ձես:
Զահս:

Ի ջահսն:
Յոճ այլազգեացն:

Զօրաննն:
Զյառապագոյն Շնձեալսն:

Մինչև ցայզիս և ցձիթենիս:
Յյրեցին զոռուն հօրն Սամիկսոնի:

Յյրեցին զնա և զհոյր նորա:
Զ.Յուղայիս:

Ալք Յուղայ երեք հազար:
Կապել զնա և մատնել ի ձեռս

այլազգեաց,
Հապանանել զնա:

Ի՞ւ կապեցին զՍամփսոն.

ԶԲՌՆՀ արարին այլազգիքն իրբև
տեսին զՍամփսոն.

ԶԲՌՆՀ եղեն կարքն ի բազուկս
Սամփսոնի.

Իրբև զո՞ր խծուծ եղեն.

ԶԲՌՆՀ եղեն կապանքն.

ԶԲՌՆՀ եղիտ Սամփսոն.

ԶԲՌՆՀ արար Սամփսոն ծնօտին.

Ասու զի՞նչ արար զծնօտն.

Զիանդ կոչեաց զաեղին.

ԶԲՌՆՀ եղեւ Սամփսոնի յետ հարկա-
նելոյն զայլազգիս.

ԶԲՌՆՀ երաց Տէր.

ԶԲՌՆՀ ել ի ծնօտէ անտի.

ԶԲՌՆՀ արար Սամփսոն զջուրն.

Եւ զի՞նչ յետ ըմզելոյն.

ԵՐԻՎՔ կարովք նորովք:

Աղաղակեցին և ընթացան ընդ ա-
ռաջ նորա:

Եղեն իրբև զիսծուծ:

Իրբև զայն որ ի հուր հոտոտիցի:

Հալեցան,

Ծնօտ մի իշոյ:

Եհար յայլազգեացն հազար այր:

Ընկէց զնա ի ձեռանէ իւրմէ:

Կոտորած ծնօտի:

Ծարաւեցաւ յօժ:

Զեակ ծնօտին:

Յուր:

Էսրը:

Դարձաւ ոզի իւր առ ինքն:

ԴԱՍ Գ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԴԵՐԱՑ.

Հ. Խ՞նչ է ուրբայը.

Պ. Դերբայ կըսուին այն բառերն որ թէ անուն են եւ թէ
բայ, ու շատ անգամ բայի տեղ կամ բայի պէս կըանին,
ինչպէս որ գերանունը անուան տեղ կգործածուի:

Հ. Խնչու համար գերբային մէկ տեսակը անունը կըսուի.

Պ. Անոր համար որ որոշ եղանակ կամ ժամանակ կամ
գէմք մի չցուցըներ. ինչպէս հիմքեւ, ասեւ, եւլն:

- Հ. Անորիշ դերբայն ի՞նչպէս կհոլովի։
- Պ. Հաօարակ գոյական անունի պէս, բայց միայն եզակի։
զոր օրինակ՝ Երևան, լոյ, լով, եւլն։
- Հ. Ուրիշ քերականք ի՞նչ անուն կուտային կամ կուտան
անորիշ դերբային։
- Պ. Անեղեայն։
- Հ. Անցեալ դերբայն ի՞նչ յատկութիւն ունի։
- Պ. Անցեալ դերբայն աւելի բայի պէս կգործածուի, եւ
երբեմն ածական անունի պէս, երբոր հետը գոյական անուն
ունի, զոր օրինակ՝ սիրեալ, ռէտած-պարգեւեալն շնորհ, եւլն։
Նատ անգամ կրանի Եմ, լինի, եղանիմ, գոմ բայերուն հետ,
եւ անով կրաւորականի՝ եւ երբեմն ներգործական անցեալ
բայի նշանակութիւն կառնու գլխաւոր բայը՝ զանազան ժա-
մանակներով, զոր օրինակ՝ ռէտաւ Եմ, Էմ, եղի, լում, եւլն։
- Հ. Անցեալ դերբայը ի՞նչպէս կհոլովի։
- Պ. Անորիշ դերբային պէտ, բայց ոչ միայն եզակի, այլ եւ
յագնակի. զոր օրինակ՝ տեսեալ, տեսելոյ, տեսեալք, տեսե-
լոց, տեսելովք։
- Հ. Ապառնի դերբայն ի՞նչ է, եւ ի՞նչ յատկութիւններ
ունի։
- Պ. Ապառնի դերբայը կցուցընէ յետոյ լինելու բան, զոր
օրինակ՝ սիրելոց, ռէտելու-գալոց, գալու։ Սովորաբար Եմ բա-
յին հետ կգործածուի. սիրելոց եմ, պէտէ ռէտէ. սիրելոց
եմք, Էաք, իցեմ, իցեմք. չեմ ապրելոց, ապարելու լիմ, եւլն։
- Հ. Անցեալ եւ ապառնի դերբայերուն ուրիշ ի՞նչ անուն
առւող քերականներ կան։
- Պ. Ընցեալ ընդունելու-նիւն, եւ ապարելու ընդունելու-նիւն։

ԵՐԻՇՆԵՑ ԵՐԿԱՑԱՍՑՆԵՐԻՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Երբեւ յոգաւ Սամփսոնի ի Դաղա, գարանակալեղեն նմա Գաղացիքն զգիշերն ողջոյն առ դրան քաղաքին, եւ անշատնջ կացին զի սպանցեն զնա: Յարեաւ Սամփսոն զմէջ գիշերաւն, թափեաց զգըունս քաղաքին հանդերձ սեմովքն, երարձ զնոսա հանդերձ նըգօքն, եգ ի վերայ ուսոց իւրոց, եւ եհան զնոսա ի գլուխ լերինն՝ որ է հանգէպ Քերբրօնի:

2. Յետ այնորիկ գնաց Սամփսոն ի հեղեղատն Ալքեկայ առ կին ոմն՝ անուն Դալիլա: Ասեն ցկինն նախարարք այլաղքեացն. Պատրեա զնա եւ տես՝ իւ իցէ զօրութիւն նորա մեծ, եւ կամ իւ կարասցուք կապել

1. Երբոր Սամփսոն Գաղացիները գնաց, Դաղացիները դարանը մոտան բոլոր գիշերը քաղաքին դրանը մօտ, եւ լուռ ու մուռն կեցան, որ զինքը սպաննեն: Ելաւ Սամփսոն կէս գիշերուան ժամանակը, հանեց քաղաքին զմները շեմերով, վերուց զանոնք նիգերով մէկտեղ, դրաւ ուսին վերայ, եւ հանեց այն լեռան գլուխը՝ որ Գերբոնին դիմացն է:

2. Յետոյ գնաց Սամփսոն Ովրեկայ հեղեղատը կնոջ մի քով՝ անունը Դալիլա: Այլաղքեաց նախարարներն ասին կնկանը խարէ զինքը, տես թէ ինչո՞վ է նորա մեծ ոյժը, կամ թէ ինչո՞վ կը նամք զինքը կապել որ ու-

զնա առ ի տկարացուցանել գնա . եւ մեք տացուք քեզ այր իւրաքանչիւր հազար եւ հարիւր արծաթոյ :

3. Իբրեւ եհարց Դալիլա՝ ասէ Սամիսոն . եթէ կապից են զիս եօթն ջլօք դալարովք չվտտելովք, տկարացայց եւ եղէց իբրեւ զմի ի մարդկանէ : Եւ բերին նախարարքն եօթն ջիլս դալարըս անվտիտս, եւ նա կապեաց նոքօք զՍամիսոն . — եւ դարան նստէր նմա ի շտեմարանի . — եւ ասէ ցնա . Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամիսոն :

4. Եւ խզեաց Սամիսոն զջիւսն՝ զոր օրինակ խզիցի քուղ ի թօթափելոյ յօրժամ ի հուր հոտոտիցի . եւ ոչ ծանուցաւ զօրութիւն նորա : Ասէ Դալիլա ցՍամիսոն . ահա խարեցեր զիս եւ խօսեցար սուտ . գոնէ արդ,

ժէ ձգեմք . եւ մեք քեզի մարդ գլուխ հազար հարիւր արծաթ կուտամք :

3. Երբոր հարցուց Դալիլա, Սամիսոն պատասխանեց . եթէ կապեն զիս եօթը հատ նոր ու չմաշած ջիլերով, ուժէ կընկնիմ ու հասրակ մարդկանց նման կըլինիմ : Բերին նախարարները եօթը հատ նոր ու չմաշած ջիլեր, անսնցմով կապեց զՍամիսոն . — այն միջոցին մարդիկ պահուըտածէին շտեմարանին մէջ . — ասաց Սամիսոնին . Այլազգիները հասեր են վերագ, Սամիսոն :

4. Սամիսոն կտրտեց այն ջիլերը՝ ինչպէս որ կըկտրտի գերձանը թօթվելով՝ երբօր կրակի մօտենայ . ուստի յը հասկըցուեցաւ նորա ոյժը : Ասաց Դալիլան Սամիսոնին՝ թէ ահա զիս խարեցիր ու սուտ խօսեցար . գոնէ այ-

պատմեա ինձ թէ իւ կապիցիս։ Ասէ Սամփոռն։ Եթէ կաղեսցեն զիս եօթն կարովք նորովք, տկարացայց եւ եղէց իրբեւ զմի ի մարդկանէ։

Ժըմ պատմէ ինծի թէ ինչով կկապուիս։ Պատախանեց Սամփոռն։ Թէ որ կապեն զիս եօթը հատ նոր չուաններով, ոյժով կըկտրի, եւ ուրիշ մարդկանց պէս կլինիմ։

ԴԱՍ Բ.

ՀԱՏԼՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆՆ.

Զոգաւ Սամփոռն ի Գաղա.

Դարանակալ եղին Գաղացիքն Սամփոռնի.

Զիշերն ողջոյն.

Առ զրան քաղաքին.

Անշշունջ կացին.

Յարեաւ Սամփոռն զմէջ զիշերաւըն.

Քափեաց զզրունս քաղաքին հանգերձ սեմովքն.

Երարձ զզրունս հանգերձ նզոքն.

Եղ զզրունսն ի վերայ ուսոց իւրաց.

Եհան զնոսա ի զըսէս լերինն.

Գնաց ի հեղեղան Ռվիրեկայ.

Առ կին ոմն անուն Դալիսա.

Պատրեա զՍամփոռն.

Գնաց Սամփոռն Գաղա քաղաքըն Գաղացիները պահուընեցան Սամփոռնը բռնելու։

Բոլոր զիշերը ողջ զիշերը։

Քաղաքին զրանը մօտ։

Առանց ձայն հանելու կեցան։

Ելու Սամփոռն կէս զիշերուան մօտ։

Քաղաքին դռները հանեց շնմրով մէկանեղ։

Աերուց դռները անօնց նիգերովը, ունենաներով։

Դրաւ դռները ուսերուն վերայ, շալից դռները։

Հանեց զանոնք լեռան զըսւիր։

Ռվիրեկայ հեղեղատը (բերէն) զնաց։

Դալիսա անունով կնկան մի։

Խարէ Սամփոռնը։

Տես՝ ի՞ւ իցէ զօրութիւն նորա մեծ.

Ի՞ւ կարասուք կապել զնաւ.

Տացուք քեզ այր փւրտքանչեւր
հազար հարիւր արծաթոյ.

Եթէ կապիցն զիս եօթն ջւագ.

Իերին նախարարքն եօթն ջիւս
դաշարս անվախոս.

Կապեաց Դալիլա նոքզք զՍամի-
սոն.

Դարան նստէր նմա ի շտեմարանի.

Այլազգիք հասեալ են ի վերայ
քո, Սամիսոն.

Խղեաց Սամիսոն զջիւսն.

Զոր զրինակ խղիցի քուլ ի թո-
թափելոյ.

Ոչ ծանուցաւ զօրութիւն Սամի-
սոնի.

Ահա խարեցիր զիս.

Խօսեցար սուտ.

Գոնէ արդ պատմեա ինձ.

Ի՞ւ կապիցիս.

Եթէ կապեացն զիս եօթն կա-
րպէ նորովք.

Տկարացոյց.

Եղէց իրբէ զմի ի մարդկանէ.

Նայէ ինչով է նորա մեծ ոյժը:

Ինչով կրնանք զինքը կապել.

Ամէն մէկս քեզի հազար հարիւր
արծաթ կուտամբ.

Թէ որ կապեն զիս եօթը ջիւսվ
(-ինեւուլ):

Նախարարները բերին եօթը հատ
նոր չմաշուած ջիլ.

Կապեց Դալիլա Սամիսոնը անոնց-
մով:

Մառանին մէջ մարդիկ պահուը-
տած էին:

Սամիսոն, պյլազգիները հաստ են
վիրագ:

Կարտեց Սամիսոն ջիւսըը.

Ինչպէս որ դերձանը կը կարուի
թօթվիով:

Հասկըցուեցաւ Սամիսոնի ոյժը:

Ահա զիս խարեցիր:

Սուտ ըսիր:

Գոնէ այժմ ըսէ ինծի:

Ինչով կրնա կապուիլ:

Թէ որ կապեն զիս եօթը նոր չուա-
նով:

Կակարանամ, ուժէ կը նկնիմ:

Մարդկանց մէկուն պէս կը ինիմ:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑՄԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հարցման:

Ո՞ր գնաց Սամիստն.

ԶԲ՞նչ արարին Գաղացիքն.

Ո՞րշափ ժամանակն.

Յորում աեղող.

Զիարդ կացին

Երբ յարեաւ Սամիստն,

ԶԲ՞նչ արար զըրունս քաղաքին.

Ո՞ւզ եղ զըրունան.

Յո՞ւ եշան զնոսին.

Ո՞ւր և լեռանն այն.

Առ ո՞չ զոգաւ Սամիստն ի հեղեղա-
պին Ռվերեց.

ԶԲ՞նչ անուն էր կնոջն.

ԶԲ՞նչ ասացին ցկինն նախարարը
ողազգեց.

ԶԲ՞նչ ասացին ցնա տեսանել.

ԶԲ՞նչ կամին առնել ընդ նա.

ԶԲ՞նչ խոսացան ոյլազգիք առլ
բողն.

Ի՞ւ ասաց կապել զինքն զառացինն.

Որորիս ըլօք.

ԶԲ՞նչ բերին նախարարըն ոյլոց-
գեց.

ԶԲ՞նչ արար նորօք Դալիլա.

Ո՞ւր նստէր զարան Սամիստնի.

ԶԲ՞նչ ասաց Դալիլա ցՍամիստն.

Պատուինիւնիւ.

Ի Գաղաւ.

Դարանակալ եղին Սամիստնի.

Զդիշերն ոշշոյն:

Առ դրան քաղաքին:

Անշտոնջ.

Զեղջ զիշերաւն:

Թափեաց հանդերձ սեմովքն:

Ի վերոյ ուսոց իւրոց:

Ի զլուխ լերինն:

Հանդէպ քերթոնի:

Առ կին ոմն:

Դալիլա:

Պատրեա զՍամիստն:

Թէ իւ իցե զօրութիւն նորա մեծ:

Կապել զնաւ:

Այր իւրաքանչիւր հազար և հա-
րիւր արծաթ:

Եօթն ջլօք:

Դալարովք չվատելովք:

Եօթն ջիլս դալարս անվախաւ:

Կապեաց զՍամիստն:

Ի շանմարանի:

Թէ ոյլազգիք հասեալ են ի վերոյ
նորա:

Զի՞նչ արար Սամփսոն.

Զի՞նչ իսզեաց զջիրան.

Մանուցաւ զրութիւնն Սամփ.
առնի.

Ո՞րպէս տրատւնջ կալաւ կինն առ
Սամփսոն.

Եւ զի՞նչ խնդրէր ի նմանէ.

Եւ ասաց Սամփսոն կապել զինքն
յերկրորդութ.

Որպիսի՞ կարովք.

Եւ զի՞նչ ասաց թէ լինիցի.

Խզեաց զջիրան.

Իրրև զքուղ.

Ոչ ծանուցաւ.

Խարեցեր զիտ առէ.

Պատմել թէ իւ կապիցի.

Եօմն կարովք նորովք.

Նոր կարովք.

Թէ տկարացի և եղիցի իբրև զի,
ի մարգիանէ.

ԴԱՍ Դ.

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԲԱՏ ԱՌԱԿԱՆ.

Հ. Ի՞նչ է բայածական.

Պ. Բայածական կը սովին այն ածական անուններն որ բայէ
ձեւացած են՝ ու, էւ, չ' վերջաւորութեամք, գօ. ամացող,
երգող, տեսող. վարիչ, փրկիչ, գտիչ. սիրելի, տեսանելի,
զենլի.

Հ. Ո՞ր վերջացած բայածականներուն վերայ ի՞նչ ընդհա-
նութ գիտելիք կան.

Պ. Ու կամ ո՞ւ վերջացած բայածականները գրեթէ ամէն
տեսակ բայերէ կրնան ձեւանալ, եւ յօմանց կոչուած են
ընդհանութեամիւն ներիոյ:

Հ. Իւ վերջացած բայածականներուն վերայ ի՞նչ կայ գիտելիք.

Պ. Այդպէս կվերջանան աւելի ներգործական բայերէ ձեւացածները:

Հ. Լէ վերջացած բայածականներուն վերայ ի՞նչ կայ գիտելիք.

Պ. Սովորաբար կրաւորական բայերէ կձեւանան, աշխարհաբառին լու վերջացած բառերուն նման, զօ. սիրելի, «էշուն»- տեսանելի, «էնոն»- գնալի, էրնուն, +ալուն-:— Եատ անգամ այս լի վերջաւորութիւնը «Ղ մասնկին նշանակութեամբը կրանի, զօ. էմանալի, որ է իմացող առնելի, արարող լունի, լսող, եւլն:

— Երբեմն լի վերջացած բայածականները անցեալ դերբայի նշանակութիւն կառնուն, զօ. հէտէլի, այսինքն գիտացեալ, ծանօթ. ինտենյերնարէնիլ, այսինքն ինքնին ձեռնադրեալ եւլն:

ԵՕԹՆԵՑԻ ԵՐԵՔՑԱՍՑՆԵՐՈՒՄ

ԴԱՅ Ա.

ԲՆԱԳԻՐ.

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Եւ առ Դալիւա կարս նորս, եւ կապեաց նոքօք զԱմփսօն, եւ ասաց ըստ առաջնումնուագին: Սամ-

1. Առաւ Դալիւանոք յըւաններ, անոնցմով կապեց Սամփսօնը ու ասաց առաջին անգամուան պէս: Սամ-

փսօն խզեաց զայն իրբեւ զասզանի, եւ ասէ յերբորդումն. եթէ անկցես զեօթանեսին դիսակս գլխոյ իմոյ ընդ ազրին, եւ վարեցես ցցովք ընդ որմն, եղէց տկարացեալ իրբեւ զմի և մարդկանէ.

2. Իրբեւ արար կինն այնպէս, զարթեաւ Սամիսոն ի ձայն նորա ի քնոյ իւրմէ, եւ կորզեաց զցիցօն հանդերձ սստայնիւն եւ ազբամբն յօրմոյ անտի.

3. Եետ այնորիկ վտանգեաց Դալիլա զԱսմիսոն բանիւք բազմօք զգիշերն ազնոյն, եւ պարտասեցոյց զնամինչեւցմահ. եւ Սամիսոն պատմեաց նմա զամենայն ինչ ի սրտէ իւրմէ. Ածելի ոչ ելցէ, ասէ, ի գլուխ իմ, զի ուխտաւոր Աստուծոյ եմ եօ. ազա թէ գերծուցում, մեկնեսցի յինէն զօրսւթիւն իմ.

փսօն կտրտեց չուանները գերձանի նման. եւ երրորդ անգամուն ասաց. թէ որ գլխում եօթը երկայն մազերս ի միասին հիւսես ազբին հետ, եւ ցիցերով պատին գամենս, ուժէ կընկնիմ; կինիմ ուրիշ մարդկանց նման.

2. Երբոր կինն այնպէս արաւ, Սամիսոն նորա ձայնովը զարթեցաւ քունէն, քաշեց հանեց պատէն այն ցիցերը՝ հիւսուածքին ու ազրին հետ ի միասին.

3. Այնուհետեւ շատ խօսքերով չարչարեց Դալիլան զԱսմիսոն բոլոր գիշերը, եւ սաստիկ ձանձրացուց՝ հոգին քաղելու պէս. եւ Սամիսոն ինչ որ սրտին մէջը կար ամենն ալ պատմեց անոր. ածելի պիտի չելնէ իմ գլուխս, ասաց. վասն զի ես Աստուծոյ ուխտուած եմ. իսկ թէ որ ածելուիմ; ոյժո ինձմէ կերթայ:

4. Յայնժամ կոչեաց Դա-
քելա զնախարարս այլադ-
գեացն, որ բերին դարձա-
թըն ի ձեռս իւրեանց նըն-
ջեցոյց զնաւ եւ կոչեաց վար-
սամիբրայ) եւ նա եգերծ
զեօթանեսին գիտակո գլխոյ
նորա, եւ սկսաւ Սամփոսն
թօշնել, եւ մեկնեցաւ ինը-
մանէ զօրութիւն նորա:

5. Ասէ Դայիլաւ Այլադ-
գիք հասեալ են ի վերայ քու
Սամփոսն, Զարթեաւ Սամ-
փոսն եւ ասէ, Ելից եւ ա-
րարից որպէս միշտն, եւ ոչ
գիտէր թէ Տէր մեկնեցաւ
ի նմանէ: Յայնժամ կալան
զնաւ այլադգիքն, եւ բրե-
ցին դայս նորա իշուցին
զնաւ ի Դազաւ, եւ կապեցին
երկաթի կապանօք, եւ ա-
զայր ի տան քանտին:

Դի շնորհ նույն մանաւ ու ուսնաւ
ու մի նախաւ զաւ ու ուսնաւ ու
Դի մասաւ ու ուսնաւ ու ուսնաւ ու

Հայութ անդամ անդամ անդամ
անդամ անդամ անդամ անդամ
անդամ անդամ անդամ անդամ

4. Այն ժամանակը կան-
չեց Դայիլան այլադգեաց
նախարարները, որ արծա-
թը ձեռքերն առած բերին,
քնացուց զինքը ու սափրիչ
կանչեց, եւ նա Սամփոսնի
գլխուն եղթը երկայն մա-
զերը ածիլեց անոր վերայ
սկսաւ Սամփոսն թօշնել,
եւ ուժը գնաց վերայէն:

5. Ասաց Դայիլաւ Այլադ-
գիքները հասեր են վերադ,
Սամփոսն Արթնցաւ Սամփ-
ոսն ու ասաց Ելնեմ ու ա-
նեմ ինչպէս որ միշտ կա-
նէի. յէր գիտեր որ Աս-
տուած հեռացեր է իրմէ:
Այն միջոցին բռնեցին զինքը
այլադգիներն ու այլքերը
փորեցին հանեցին. տարին
զինքը Գազաւ կապեցին եր-
կրթէ շղթաներով, ու ցո-
րեն կազար բանտին մէջ.

ԴԱՍ

ՀԱՏԵՇԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Առ Դալիլա կարս նորա:

Կապեաց նորօք զՍամփտոն.

Ըստ առաջնում նուազին.

Խզեաց զկարսն իրեւ զաշանի.

Անկցն զեօթանեսին գիտակո զբ-
իսց իմց ընդ ազբին.

Վարեսցն զգիտակոն զցովք ընդ
որմն.

Զարթեաւ Սամփտոն ի ձայն նորա.

Զարթեաւ Սամփտոն ի քնյ իւր-
մէ.

Կորզեաց զցիցսն յորմց անոնի.

Հանդերձ ոստայնիւն և ազբամին.

Վասնգեաց Դալիլա զՍամփտոն
բանիք.

Պարտասեցոյց զՍամփտոն մինչև
ցմահ.

Զամենայն ինչ պատմեաց նմա
Սամփտոն.

Ածելի ու ելցէ ի զլուխ իմ.

Ուխտաւոր Աստուծոյ եմն նո.

Եթէ զերծուցում, մելնեցի յի-
նէն զօրութիւն իմ.

Կոչեաց Դալիլա զնախարարս.

Քերին զարծաբն ի ձեռս իւրեանց.

Դալիլան նոր չուաններ առաւ։

Անոնցմով կապեց Սամփտոն.

Ըստին անդամուն պէտ։

Կորտեց չուանները զերծանի պէտ։

Դիմուս եօթը հաս երկոյն մազե-
րը հիւսես ազբին հետ։

Մազերը թիցերով պատին զարնես
զամես։

Արթընցաւ Սամփտոն նորա ձայ-
նովը։

Բունէն արթընցաւ Սամփտոն։

Քաշեց հանեց ցիցերը պատէն։

Գործուած հիւսուածերովը և ազ-
բովը մէկանդ։

Դալիլա Սամփտոնին շատ չարւ-
րանք առւաւ խօսքով։

Հոգին հանելու չափ նեղութիւն
առւաւ Սամփտոնին։

Ամէն բան պատմեց անոր Սամփ-
տոն։

Իմ զլուխս ածելի (առնուր) պէ-
տի չելնէ։

Ես Աստուծոյ ուխտուած եմ։

Թէ որ ածելուիմ, ոյժս կերթոյ
ինձմէ։

Դալիլա նախարարները կանչեց։

Արծաթը ձեռքերն առած բերին

Ննջեցոց Դալիլա զՍամիստն.
Կոչեաց զվարաւվերայ.
Եգերծ զեօթանեսին զիստկա զըլ-
իսյ նորա.
Սկսաւ Սամիստն թօշնել.
Մեկնեցաւ ի Սամիստնէ զօրու-
թիւն նորա.
Ելից և արարից որպէս միշտն.

Ու զիւկր թէ Տէր մեկնեցաւ ի նը-
մանէ.
Կալան պղազդիքն զՍամիստն.
Բրեցին զալս Սամիստնի.
Իջուցին զՍամիստն ի Դազա.
Կապեցին զնա երկաթի կապանգը.
Աղոյր Սամիստն ի տան բանտին.

Դալիլան Սամիստնը քնացուց:
Սամիրիչը (Դէրշէր) կանչեց.
Նորա զլխուն եօթը երկայն մա-
զերը կորեց:
Սամիստն սկսաւ ուժէ ընկնիլ:
Սամիստնին զօրութիւնը՝ ոյժը զը-
նաց վերայէն:
Ելնեմ և անեմ ինչպէս որ միշտ
կանէի.
Զէր զիտեր որ Աստուած հեռա-
ցաւ իրմէ.
Ա յլազգիները բռնեցին Սամիստնը:
Սամիստնի աշքերը փորեցին հա-
նեցին:
Սամիստնը Գազա տարին:
Երկըթէ շղթաներով կապեցին
զմնքը.
Սամիստն բանտին մեջ ցորեն կա-
շոր:

ԳԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ըց՛ւ-ն+.

ԶԲ՛ՆԸ էառ Դալիլա.
Եւ զի՞նչ արար նորօք.
Ո՞րպէս.
ԶԲ՛ՆԸ արար Սամիստն զկարսն.
ԶԲ՛ՆԸ առաց անկանել ընդ աղ-
քին.

զ-ո-ո-ի-ն-ն+.

Կարս նորս:
Կապեաց զՍամիստն:
Ըստ առաջնում նուազին:
Խզեաց զնոսա իրրև զասղանի:
Զեօթանեսին զիստկա զլիսոյ իւրոյ:

Ն. զի՞նչ առնելոց էր զդիսական
ազբամբն հանդերձ։

Ի. զարթեաւ Սամիստն.

Ուստի զարթեաւ։

Զի՞նչ արար զցիցն։

Զդիսական միոյն կորզեաց։

Զի՞նչ արար Դալիլա զՍամիստն։

Զիարդ վտանգեաց զնա։

Զի՞նչ պատմեաց նմա Սամիստն։

Զի՞նչ ասաց թէ ու եցէ ի զը-

լուխ իւր։

ԸնդԵր։

Ն. զի՞նչ եթէ զերծոյր։

Զ. կոչեաց յայնժամ Դալիլա։

Զի՞նչ բերին նախարարն։

Զ. ոյլ ոք կոչեաց Դալիլա։

Զի՞նչ արար վարսավիրացն։

Զի՞ եղև յայնժամ ընդ Սամիստն։

Զի՞ եղև զօրութիւն նորա։

Զի՞նչ կամեր առնել Սամիստն։

Զի՞նչ ոչ դիաէր Սամիստն։

Զ. կալան ոյլազգին։

Զի՞նչ արարին ընդ նա։

Ուր իշուցին զՍամիստն։

Ի. կապեցին զնա։

Զի՞նչ առներ Սամիստն ի առն

բանտին։

Ա. արելոց էր ցցովք յորմն։

Ի ձայն կնոջն։

Ի քնոյ իւրմն։

Կորզեաց յորմն անախ։

Հանդերձ ոստայնիւն և ազբամբն։

Նեղեցց զնա։

Բանիք բազմոք։

Զանձնայն ինչ ի արտէ իւրմէ։

Ածելի։

Զի ու խտաւոր էր Աստուծոյ։

Մեկներ ի նմանէ զօրութիւն նորա։

Զնախարարս այլազգեացն։

Զարծաթն ի ձեռս իւրեանց։

Ա. արսավիրաց։

Եգերծ զեօթանեսին զիսակս զըլ
խոյ նորա։

Ակսաւ թօշնել։

Մեկնեցաւ ի նմանէ։

Ելանել և առնել որոշէս միշտն։

Թէ մեկնեցաւ ի նմանէ Տէր։

Զ. Սամիստն։

Բրեցն զաշս նորա։

Ի Դալա։

Երկաթի կապանք։

Աղայր։

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Վարչական պահանջման գործություններ.

Հ. Ա. Խօթնելին դասին միջի բայերը լուծէ.

Ետ, ընկենուլ, ապրեցուցանել, ծնաւ, տեսանէին,
թաքուցին, կարէին, առ, ծեփեաց, եղ, ընկեց, գիտէր, ան-
ցանիցեն, եւլն.

Պ. Եր, դաճ, բային սահմ. անցեալ. կատարելոյն եղակի
երրորդ դէմքը, ներգործական. ընէնուլ, ընէնում բային ա-
նորիշ դերբայր. ներգործ.

Առջեւուցանել, ապրեցուցանեմ բային անորիշ դեր-
բայր. ներգ.

Մնաւ, ձնանէմ հասարակ բային սահմ. կատարելոյն
եղ. երրորդ դէմք.

Տիւանէմ, դիւանէմ բային սահմ. անկատար յոգնակի
երրորդ դէմք. ներգ.

Թագուցչն, նախուցանեմ բային սահմ. կատարելոյն յոգ-
նակի, երրորդ դէմք. ներգ.

Կաչէին, կաչէմ բային սահմ. անկատարին յոգն. երրորդ
դէմք. չեղողք.

ԱՌ, առնամ բային սահմ. կատարելոյն եղակի երրորդ
դէմք. ներգ.

(Այսպէս պէտք է վարժապետը վերլուծել տայ աշակերտին շատ բայեր' ո-
րոց նշանակութիւնը սովորած է նախընթաց դասնրումն մէջ. եւ ոչ միայն պէտք
է հարցընէ արդպէս իւրաքանչյիւր բայի թիւ եղանակ. թիւ ժամանակ. թիւ թիւ,
թիւ դէմք եւ թիւ սեռ լինելը, այլ եւ լծորդել տայ այս կամ այն բայը ամրողը:

ՆՅԷ այս կրթութիւնը ամբողջ եօնիքակ միւսւ բռնէ՛ շատ չէ, եւ պէտք է ընել որպէս զի լաւ տպաւորուին աշակերտաց մտքին մէջ բայերում ամեն տեսակ ձեւերուն պէսպէս յատկութիւնն))

ՆՅՈՒՆԱԿ ՀԱՐՔԵՑՈՒՅՆԵՐՈՒՄ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Մինչդեռ ոկտեալ էր մազ գլխոյն Սամիստի բուսանել յետ գերծելայն, ժողովեցան այլազգիքն զոհել զոհ մեծ Դագոնայ աստուածոյն իւրեանց եւ ուրախ լինել, զի մատնեացը թշշնամի նոցա զՍամիստն իձեռու իւրեանց:

2. Երբեւ զօւարթացան ոիրտք իւրեանց, կոչեցին զՍամիստն իտանէ բանտին, եւ խաղային նովաւ. Ասէ Սամիստն ցպատանին որ ունէր զձեռանէ նորաթոյլ տուր ինձ եւ դննեցից

1. Երբոր ոկտեալ էր Սամիստի գլխուն մազը երկրննալ՝ ածիւելէն զերջը, այլազգիները ժողվուեցան որ մեծ զոհ մի անեն իրենց Դագոն կուռքին եւ ուրախանան, որովհետեւ մատնեց նոցա թշշնամին իրենց ձեռքը:

2. Երբոր սրտերնին զըւարճացաւ, կանչեցին Սամիստնը բանտէն ու ոկտան զինքը խաղցրնել, Ասաց Սամիստն այս տղուն որ իւրձեռքէն բռնած էր. թողտուր ինծի, միանգամ զըն-

զօթւնս՝ յորոյ վերայ տունս
հաստատեալ կայ, եւ յե-
ցայց ի նոսա:

3. Եւ տունն լի էր ա-
րամբք եւ կանամբք, եւ անդ
ամենայն նախարարք այլաղ-
դեացն, եւ ի տանիսն իբրեւ
երեք հազարք, որք տեսա-
նէին զխաղն Սամփոռնի:

4. Աղաղակեաց Սամփոռն
առ Տէր եւ ասէ. Տէր զօ-
րութեանց, յիշեա զիս եւ
զօրացք զիս զայտ եւս մի
նուազ, Աստուած, եւ խըն-
դրեցից զվրէժ իմ ֆոխա-
նակ երկուց աչացիմոց յայլ-
ազգեաց աստի:

5. Եւ բուռնեհար Սամփ-
սոն զերկոցունց սեանցն
միջնոց՝ յորոց վերայ տունն
հաստատեալ կայր, եւ յե-
ցաւ ի նոսա՝ ի մին աջով իւ-
րավ եւ ի միւսն ձախով իւ-
րավ. եւ ասէ՝ մեռցի անձն
իմ ընդ այլազգիսա:

նեմ այդ սիւները՝ որոց
վերայ այս տունը հաստա-
տուած է, երթամ կոթը-
նիմ անոնց:

3. Խակ տունը լեցուն էր
Էրիկ մարդով ու կնիկ մար-
դով, այլազգեաց ամէն նա-
խարարներն այնտեղ էին.
երգիքին վերան ալ երեք-
հազար հոգւոյ չափ, որ
Սամփոռնի խաղը կնայէին:

4. Աղաղակեց Սամփոռն
առ Աստուած ու ասաւ.
Տէր զօրութեանց, յիշէ զիս,
եւ ոյժ տուր ինձի այս մէկ
անդամիս ալ, Աստուած, որ
իմ վրէժս հանեմ երկու
աչքիս համար այս այլազ-
գիներէն:

5. Այս ասաց ու բռնեց
Սամփոռն երկու միջին սիւ-
ներէն՝ որոց վերայ տունը
հաստատուած էր, կոթը-
նեցաւ անձնց, մէկուն վե-
րայ աջովն ու միւսին ձախո-
վը, եւ ասաց. Ես ալ մեռ-
նիմ այս այլազգեաց հետ:

6. Եւ շարժեաց զօրութեամբ, եւ անկաւ տունն ի վերայ ամենայն ժողովոյն որ ի նմանէ։ Եւ էին մեռեալքն զօրս մեռոյց Սամփոռն ի մահուն իւրում՝ առաւել քան զօրս սպան ի կենդանութեան իւրում։

6. Ուժով մի շարժեց, եւ ընկաւ տունը բոլոր մէջի ժողովքին վերայ։ Եւ այնպէս Սամփոռնին իւր մահուան ժամանակը մեռուցածներն աւելի եղանքան թէ ողջութեան ժամանակը սպաննածները։

ԴԱՍ

ՀԱՏԸՆՑԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Մազ զիմոյն Սամփոռի սկսեալ էր բուսանել։

Յետ գերծ ելցին։

Ժողովեցան այլազգիքն զոհել զոհ մն։

Զոհել Դագոնայ աստուածոյն իւրեանց։

Մատնեաց զՍամփոռն ի ձեռս իւրեանց։

Զուարթացան սիրոք այլազգեացն։

Կոչեցին զՍամփառի տանէ բանտին։

Պատանին ունէր զձեռանէ Սամփոռնին։

Քոյլ տուր ինձ։

Զանեցից զսիւաս զայսոսիկ։

Տունս հաստաեալ կայ ի վերասեանց։

Սամփոռի դիմուն մազն սկսեր եր ամիլ։

Անիւլէն վերջը։

Ժողովուեցան այլազգիները՝ մե զոհ ընելու։

Իրնց Դագոն աստուածոյն զոհ ընելու։

Սամփոռնը մատնեց իրնց ձեռքը։

Այլազգիներուն սրաերը զուարթացան։

Կանչեցին Սամփոռնը բանտին։

Տղան Սամփոռնի ձեռքնը բունած էր։

Քոյլ տուր ինձի։

Այս սիւները շօշափեմ նայիմ։

Այս տունը հաստատուած է սիւներու վերայ։

Յեցոյց ի սիւնսն.

Ակ էր առւնն արամբը և կանամբը.

Անդ էին ամենայն նախարարք պա-
լազգեացն.

Եին ի տանիսն արք իրրե երկը հա-
շումբ.

Տեսանէին ամենիքեան զիսաղն
Սամփառնի.

Աղաղակեաց Սամփառն առ Տէր.

Տէր զօրութեանց յիշեա զիս.
Զօրացո զիս զայս ևս մի նուազ.

Խնդրեցից զվուէտ իմ յաղազգեաց
ասաի.

Փոխանակ երկուց աշաց իմոց.

Բուռն եշար զերկոցունց սեանցն.
Յեցաւ ի մինն աջով իւրով.

Յեցաւ ի միւնն ձախով իւրով.

Մեոցի անձն իմ ընդ պաղազիսս.

Շարժեաց զօրութեամբ զախանն-
Անկաւ առւնն ի վերաց ամենայն
ժաղովոցն.

Այլազգիքն զորս մաւցց Սամփ-
առն ի մահուն իւրում.

Այլազգիքն զորս սպան ի կննդա-
նութեան իւրում.

Սիւներուն կոթնիմ:

Տունը լեցուն էր էրիկ մարդով ու
կնիկ մարդով:

Այլազգեաց ամեն նախարարներն
պյնտեղ էին:

Երդիքին վերաց երկը հազար հո-
գոյ չափ կային:

Ամենիքը կտեսնէին Սամփառնի խա-
ղալը:

Սամփառն աղաղակեց առ Աս-
տուած:

Ամեն զօրութեանց Տէր յիշէ զիս:
Ոյժ տուր ինծի այս մէկ պնդամն
աշ:

Վրէժս առնում այս այլազգինե-
րէն:

Երկու աչքիս տեղը:

Երկու սիները մէկն բռնեց:

Մէկուն վերաց կոթընեցաւ աջ
ձեռքովը:

Միւսին վերաց կոթընեցաւ ձախ
ձեռքովը:

Թող իմ անձս մեռնի այս պաղ-
պիներուն հետ:

Ուժով շարժեց սիւները:

Ընկաւ առւնը բոլոր ժողովքին վե-
րաց:

Այն պաղպիներն որ մեռուց Սամփ-
առն իւր մահուան ժամանակը:

Այն պաղպիներն որ սպաննեց իւր
ողջութեան ժամանակը:

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ը բանեւ.

Արպէս էր մազ պիտոյն Սամիստնի.
Երր սկսեալ էր բուռանել.

Առ ի՞նչ ժաղավիցան պյաղղիբն.
Ո՞ւմ մատուցանէին զգոհն.

Առ ի՞նչ զոհէին Դագոնայ զոհ
մեծ.

Զի՞նչ եղն սիրոք պյաղղեացն.
Ուստի՝ կոչեցին զՍամիստն.

Զի՞նչ արարին ընդ նա.
Ո՞ւնէր զձեռանէ Սամիստնի.

Զի՞նչ ասաց Սամիստն ցպատա-
նին.

Զի՞նչ կամէր առնել Սամիստն.
Զոր սիւնս.

Ո՞ւ կայր ի տանն.

Ո՞ւր էին նախարարք պյաղղեացն.
Ո՞յք ոմանք կային ի տամիսն.

Եւ զի՞նչ առնէին անդ.
Զի՞նչ ասաց Սամիստն յաղաղա-

կել իւրում առ Տէր.

Ուստի՝ կամէր խնդրել զլուէժ իւր.
Փոխանակ որո՞յ իրիք.

Զորմէ՝ բուռն եհար Սամիստն.
Ո՞րպէս յեցաւ ի մի ի սեանցն.

Եւ որպէս ի միւն.

Զի՞նչ խնդրեր վասն անձին իւրոյ.

Պ-ը բանեւ.

Սկսեալ էր բուռանել.
Եստ գերծեղցն.

Զոհնել զոհ մեծ և ուրախ յննել.
Դագոնայ աստուածցն իւրեանց;
Զի մատնեաց զՍամիստն ի ձեռս
իւրեանց:

Զուարթացան:

Ի տանէ բանտին:

Խաղաղին նովառ:

Պատանի ոմն:

Բոյլ առոք խնձ առէ՝ զի զննեցից
զսիւնս:

Կամէր զննել զսիւնսն:

Յորոց վերայ առւնն հաստանեալ էր:
Ամենայն նախարարք պյաղղեացն:
Անդ ի տանն:

Արք և կանայք իրրե երիք հազար:

Տեսանէին զիստն Սամիստնի:

Տէր զօրութեանց առէ յիշեա զիս:

Յայլաղղեաց անտի:

Փոխանակ երկուց աշաց իւրոց:

Զաեանցն երկոցունց:

Աջով իւրով:

Զախով իւրով:

Մեսանել ընդ պյաղղիսն:

ԶԻ՞ՆՀ շարժեաց զօրութեամբ.

ՑՈՐ վլերայ անկաւ տունն.

ԶՈ՞ մեռց Սամփառն ի մահուն
իւրում.

ԱՌԵԱՆ ոյլազգին սպան ի մահուն
իւրում.

ԶԱԽԱՆԱՆ.

Ի վլերայ ամենայն ժողովոյն այ-
լազգեաց.

ԶԱՄԱՂՂԻԱ:

Առաւել քան զորս սպան ի կեն-
դանութեան իւրում:

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ՄՊԿԱՑ.

Հ. ԿՈ՞ՆՀ է մակրայը.

Գ. Մակրայ կըսուի այն անփոփոխ մասն բանի, որ քովի
բային նշանակութեան տեղը կամ ժամանակը, որպիսու-
թիւնը, որքանութիւնը կամ ուրիշ մեկ պարագան կյայտ-
նէ. երբեմն եւս հարցումն, կարգ, հաստատութիւն կամ
բացասութիւն կամ երկրայութիւն կցուցընէ. անոր համար
մակրայներէն ոմանք կըսուին Տեղական, ոմանք ժամանա-
կական, Որակական, Քանակական, Հարցական, Դասական,
Ստորասական, Բացասական, Երկրայական, եւլն:

Հ. Տեղական մակրայի օրինակ տուր.

Պ. Աստ, անդ. այսր, անդք, այդք. աստէն, անդէն. այս-
րէն, այդքէն, անդքէն. այսր անդք. աստի, այտի, անտի.
աստանօր, անդանօր. աստօւստ, անդուստ. ուր, ուրեք, ու-
րանօր. ուստի, ուստեք. արտաքս, ի ներքս, եւլն:

Հ. Ժամանակական մակրայի օրինակ տուր.

Պ. Այժմ; ասլա, մինչ, մինչդեռ, մինչեւ, միշտ, յորժամ; երբեմն, այն ինչ, եւլն:

Հ. Որակական մակրայի օրինակ տուր.

Պ. Այսպէս, այդպէս, այնպէս, որպէս, զիարդ, կողմնակի, արմատաքի, եւլն:

Հ. Քանակական մակրայի օրինակ տուր.

Պ. Քանիցու, ոքան, այսքան, միայն, եւեթ, գարձեալ, իբրեւ, գրեթէ, եւլն:

Հ. Հարցական մակրայի օրինակ տուր.

Պ. Զի՞, զի՞նչ, է՞ր, ընդէ՞ր, եւլն:

Հ. Դասական մակրայի օրինակ տուր.

Պ. Նախ, երկրորդ, երրորդ . . . , միանգամ, միանգամայն եւլն:

Հ. Ստորասական, բացասական եւ երկրայական մակրայից օրինակներ տուր.

Պ. Այս, ոչ, մի. գուցէ, թերեւս, արդեօք, եւլն.

Հ. Հասարակ անունները մակրայի պէս կընա՞ն գործածուիլ.

Պ. Ածական անունները երբեմն մակրայի պէս կգործածուին. զօր. զո՞ր պաշտել, արդա՞ր ասել, ճանը եւ հշո՞ւլ ժըպտել, եւլն: — Նմանապէս շատ գոյականներ ու ածականներ պէսպէս հոլովզվ մակրայի զօրութիւն կառնուն. զօր օրինակ՝ հարկաւ, կամաւ, յանգաստից, գառաջինն, եւլն:

— Մակրայից վերայ կրնութիւն ընելու է՝ առաջարկելով աշակերտին ոք զանազան բայերու հետ յարմարցընէ: իւրաքանչյուրը:

ԵՐԵՎԱՆԻ ՀԱԴՅԱԾԱՆՆԵՐԻ ԴՐԱՄ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Եւ էր ոմն յորդւոցն
Բենիամինի, անուն նորա
կիս, այր զօրաւոր, եւ անուն
որդւոյ նորա Սաւուղ, այր
բարի եւ անձնեայ. եւ ոչ
գոյր յորդիսն Խօրայէլի այր
լաւ քան զնա, ուսովք չափ
ի վեր բարձր էր քան զա-
մենայն երկիրն:

2. Եւ ի կորնչել իշոց հօ-
րըն Սաւուղայ՝ առէ ցորդի
իւր. Առ ընդ քեզ մի իման-
կանցդ, եւ արիք երթայք
խնդրեցէք զէշան. Եւ իր-
բեւ խնդրեցին աւուրս երիս
եւ ոչ գտին, առէ Սաւուղ
ցպատանեակն իւր. Եկ
դարձուք անդրէն, գուցէ
թողեալ հօր մերոյ զէշան՝
եւ զմէնջ հոգասցէ:

ԹԱՐԻՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Բենիամինի որդւոց
մէջէն մէկը կար' կիս անու-
նով, զօրաւոր մարդ, եւ
նորա որդւոյն անունը Սա-
ւուղ՝ բարեբարոյ ու յաղ-
թանդամ, այնպէս որ Խօ-
րայէլացւոց մէջ մէկըչկար
քան զինքը լաւ. ուսերովը
բարձր էր երկրին ամեն բը-
նակիչներէն:

2. Սաւուղայ հօրն էշե-
րը կորսուած լինելով, ա-
սաց որդւոյն. Տղոցմէն մէ-
կը առ հետդ ու ելեք գնա-
ցէք՝ էշերը փնտուեցէք. Եր-
բոր փնտուեցին երեք օր ու
չըգտան, ասաց Սաւուղ իւր
տղուն. Եկ ետ գառնակը,
կարելի է թէ մեր հայրը է-
շերը թողած՝ մեղի համար
հոգ կընէ:

3. Ասէցնա պատանին. Ահա այր Աստուծոյ է ի քաղաքիս յայտմիկ ի Սիփ, այր փառաւոր, եւ գամենայն զոր ինչ խօսիցի՝ լինելով լինի. երթիցուք անդր՝ զի պատմեսցէ մեզ զնանապարհս մեր, եւ զնասցուք:

4. Ասէ Սաւուղ ցպատանին. Ահա երթայցեմք, եւ զի՞նչ տանիցիմք առնն Աստուծոյ. զի հաց եւս պակասեաց յամանոց մերոց. Պատանին ասէ. Ահա գտանի ի ձեռին իմում չորրորդ սկեղ արծաթոյ, եւ տացես առնն Աստուծոյ:

5. Իբրեւ մտին ի քաղաքամէջն, եւ ահա Սամուէլ ել ընդառաջնոցա յերթալ իւրում ի Բամաւ Մատեաւ առ նա Սաւուղ եւ ասէ. Պատմեա ինձ՝ ո՞ր տուն իցէ տեսանողին: Պատասխանի ետ Սամուէլ եւ ասէ ցնա.

3. Տղան ասաց Սաւուղայ, թէ Ահա այս Սիփ քաղաքիս մէջ Աստուծոյ մէկ մարդը կայ, պատուաւոր մարդ, որ ինչ որ կասէ՛ անպատճառ կկատարուի. երթամք այնտեղ, թող ասէ մեղի մեր բռնելու ճանապարհն, ելեմք երթամք:

4. Սաւուղ ասաց պատանւոյն. երթալը երթամք, բայց ի՞նչ տանիմք Աստուծոյ մարդուն. ահա հացն անգամ հատաւ մեր ամաններէն: Պատանին ասաց թէ ահա իմ քովս մէկ սիկդ արծաթին քառորդը կայ, այն կուտաս Աստուծոյ մարդուն:

5. Երբոր մտան քաղաքին մէջտեղուանքը, Սամուէլ նոցա առջեւն ելաւ՝ գէպ ի Բամա գնացած ժամանակը: Սաւուղ մօտեցաւ անոր ու ասաց. Ասա ինձի թէ տեսանողին տունը ո՞րն է: Սամուէլ պատասխա-

Ես ինքնին իսկ եմ. ել ա-
ռաջի իմ ի Բամա, եւ կերի-
ցես ընդ իս այսօր, եւ ար-
ձակեցից գքեղ վաղիւ, եւ
զամենայն ինչ, որ ի սրտի
քում է՝ պատմեցից քեղ,
և վասն իշոցն երեքօրէից
կորուսելոց մի ինչ ածեր ըզ-
մուաւ, քանզի գտեալ են.

Նեց. Ես եմ տեսանողը. դը-
նա առջեւէս Բամա, եւ այ-
սօր ինծի հետ հաց կուտես,
վաղը ճամբայ կդնեմ զքեղ,
ու սրտիդ մէջ լինչ որ կայ,
ամէնն ալ կասեմ քեղի:
Իսկ այն էշերուն համար որ
երեք օրուընէ ի վեր կորած
են՝ ամենեւին մի մոածեր,
վասն զի գտնուած են.

ԴԱՍ Բ.

ՀԱՏԵՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Եր ոմք յորդւոցն Իննիամինի.

Անուն նորա Կիս.

Այր զօրաւոր.

Այր բարի և անձնեայ.

Ու զոր յորդին Խորայէլի ոյր
լու քան զնա.

Ուսովք շափ ի վեր բարձր էր քան
զամննեան.

Այրեան էշք հօրն Սաւուզայ.

Ա՛ռ ընդ քեղ մի ի մանկանց.

Երթայք ինզրեցէք զէշոն.

Խոզրեցին աւուրս երփս և ոչ զաին.
Եկ դարձուք անզրէն.

Ինիամինի որդիքներէն մէկը կար,
Անունը Կիս:
Զօրաւոր՝ ուժով մարդ:
Բարի և յաղթանդամ՝ մեծղի
մարդ:

Խորայէլացւոց մէջ անկից լաւ
մարդ չկար:

Ուսերովը ամենէն բարձր էր,

Սաւուզայ հօրը էշերը կորսուեցան:

Այդ աղոցմէն՝ ծառաներէն մէկը
հետուառ:

Գնացէք փնտուցէք էշերը:

Երիք օր փնտուցին ու շգտան:
Արի ետ դառնումք:

Դուցէ թողեալ հօր մերց զէշան՝
զմէնջ հոգացէ.

Այր Աստուծոյ է ի քաղաքին
յայոմիկ.

Այր փառաւոր.

Զամնայն դոր ինչ խօսիցի՞ լինե,
լով լինի.

Երթացուք անդր.

Պատմոցէ մեղ զմանապարհս մեր-

Ահա երթայցեմը.

Զինչ տանիցիմք առն Աստուծոյ.

Հաց ևս պահանեց յամանոց մե-
րոց.

Ահա զտանի ի ձեռին իմում չոր-
բարդ սկեզ աբծաթոյ.

Մաին ի քաղաքամէջն.

Ել ընդ առաջ նոցա Սամուել.

Յերթալ իւրում ի Բամա.

Մատեալ առ նա Սաւուդ.

Ա՛ր առնն իցէ տեսանողին.

Ես ինքնին իսկ եմ.

Ել առաջի իմ ի Բամա.

Կերիցես ընդ իս պատր.

Արձակեցից զքեզ վաղիւ.

Զամնայն ինչ որ ի սրտի քաւմ է
պատմոցից քեզ.

Մի դուցէ հոյրերնիս եշերը
թողած՝ մղի համար հօդ
կընէ.

Այս քաղաքիս մէջ Աստուծոյ մէկ
մարդը կոյ.

Պատմաւոր՝ փառաւորին մարդ.
Ինչ բան որ առն ամէն ոլ կը-
կտարուի.

Երթամք ոյնոեղ.

Թող պառմէ մղի՝ ցուցընէ մղի
մըր ճամբան.

Երթալը երթամք.

Ի՞նչ բան տանիմք Աստուծոյ
մարդուն.

Հացն ալ պահուցաւ մըր աման-
ներուն մէջ.

Ահա իմ քովս մէկ սիկը արծա-
թի չորրորդ մասը կոյ.

Քաղաքին մէջոեղը մասն.

Սամուել նոցա առջևն եղաւ.

Երթոր Բամա կերթար.

Սաւուդ մօսեցաւ անոր.

Տեսանողին՝ մարգարէն սունը
որն է.

Ես ինքս եմ.

Գնա իմ տոքեւս Բամա.

Այսօր ինձի հետ կերակուր կու-
տես.

Վաղը կճամբեմ զքեզ.

Սրաից մէջ ինչ որ կոյ՝ ամէնն ոլ
կտան քեզի.

Ապան իշոցն երեքօրէց կորուսն-
լոց.
Մի ինչ ածեր զմռաւ.
Քանզի դաեալ են.

Երկը օրուընէ ի վեր կորուսած է-
շերուն համար:
Ամեննենին մաքէդ բան մի՛ անցըներու
Ապան զի զանձւած են.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Այս ժամանակ նրան թագավոր դաւ-
կացման է:

Յորմէ՛ ցեղէ Էր Ախ. Առաջի պատճեն
Որպիսի՞ ոք Էր.
Զի՞նչ անուն էր որդուց նորա.
Որպիսի՞ ոք Էր Սաւուղ.
Ունքան Էր լաւութիւն բարուցն
Սաւուղայ.
Որպիսի՞ Էր հասակ նորա.

Զի՞նչ Էր որ կորեաւ հօրն Սա-
ւուղայ.
Զա՞ առաքեաց ինդին զէշն.
Դա՞մի՞ն նորա զէշն՝ թէ ոչ.
Զի՞նչ Խորհեցաւ յայնժամ Սա-
ւուղ.
Զո՞ր կասկած ուներ ի մայ.

Ո՞ կայրի քաղաքին յայնմիկի Սիփ.
Որպիսի՞ ոք Էր այրն.
Եւ որպիսի՞ բանք նորա.

Ի ցեղէ որդուոցն Բնեխոմինի.
Այր զօրաւորի
Սաւուղ.
Այր բարի և անձնեայ:
Ու զյըր յորդիսն Խորայէլի այր
ըսւ բան զնա:
Ուսովք չափ ի վեր Էր քան զա-
մնայն երկիրն.
Էշքն նորա:

ԶՍաւուղ զորդի իւր:
Խնդրեցին աւուրս երիս և ոչ զտին:
Դառնալ անզրէն ի տուն:

Թէ զուցէ հայրն Թողեալ զէշն
և զնմանէ հզգացէ:
Այր Աստուծոյ:
Այր վասուաւորի
Զամենայն զոր ինչ իսսէր՝ լինե-
լով լինէր:

Առ ի՞նչ առաջ պատահեն երթուլ
անդր.

Զի՞նչ եհարց Սաւուղ ցպատա-
նին.

Ո՞ւ ունկն զհաց.

Զի՞նչ գտաւ իսկ մերին պատահա-
նացին ամէ՞ կամ ո՞վ ի՞նչ ու ո՞վ առաջ անդր.

Ո՞ւր մանին Սաւուղ և պատահի
նորու.

Ո՞նչ ընդ առաջ նոցա.

Ո՞ւր երթայր Սամուել.

Զի՞նչ արար Սաւուղ.

Եւ զի՞նչ եհարց ցնա.

Ո՞ւ էր անսանողն.

Ընդ ում ուստեղոց էր Սաւուղ
յայնմ աւուր.

Ե՞րբ առաջ Սամուել՝ թէ արձա-
կեցէ զՍաւուղ:

Զի՞նչ խոստացաւ պատմել նմա.

Զի՞նչ վասն իշոցն երեքօքէից կո-
րուսելոց.

Ընդէր.

Զի պատմեցէ նոցա զհանուպար-
հըս իւրեանց.

Թէ զի՞նչ առնիցեն առն Աստո-
ծոյ.

Պահասեաց հաց յամանց իսր-
եանց ըրտունց բար.

Զորքորս սկեղ արծաթոց մ.

Ի քաղաքամբին.

Սամուել :

Ի Բամա:

Սամուել առ Սամուել :

Թէ որ իցէ առն անսանողին:

Մարգարէն Սամուել :

Ընդ Սամուելի:

Վաղիւսայուսաւուն մ ինչ ո՞վ առաջ անդր:

Զամենայն որ նիշ էր ի սրտի նորու.

Զի արդէն զտեալ հն,

Սի ինչ աճել զմուռ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

ՀԱՂԱԳ.

Հ. Ի՞նչ է շաղկապը.

Գ. Շաղկապ կըսուին այն անփոփօխ բառերը՝ որ խօսք
խօսքի հետ կկապեն՝ պէս պէս կերպերով:

Հ. Չաղկապները գլխաւորապէս քանի՞ տեսակ կըաժան-
փն.

Պ. Երկու, ոմանք ուորդ են, եւ ոմանք էորդ, կամ ուրիշ
բառի հետ գործածուող:

Հ. Վարդ շաղկապներու օրինակ տուր.

Պ. Եւ, թէ, եթէ, իսկ զի, կամ այլ բայց, ասկայն, եւլն:

Հ. Բարդ կամ բաղադրեալ եւ ուրիշ բառի հետ գործա-
ծուող շաղկապներու օրինակ տուր.

Պ. Թէպէտ, բայց եթէ, բայց միայն, միայն թէ, վասն զի,
այլ եւ, թող թէ, ապա թէ ոչ, մինչ զի, որպէս զի, մանա-
ւանդ զի, ապա ուրեմն, իսկ արդ, եւ արդ, եւլն:

ՏԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ.

Հ. Ի՞նչ է յայնարկութիւնը.

Պ. Զայնարկութիւն կամ միջարկութիւն կըսուին այն բա-
ռերը կամ ձայները՝ որով խօսքի մէջ այլ եւ այլ կիրք կը-
հասկըցընեմք, այսինքն ցաւ, բարկութիւն, ուրախութիւն
վախ, զարմանք եւլն:

Հ. Գլխաւոր ձայնարկութիւններէն մէկքանին ըսէ.

Պ. Ո՛հ, վաց, աց, ով, է՛տ վահ, օն, օշ, հապաւ աղէ, բա-
բէ, վաշ, աւաղ, ազնիւ, յանկարծ, իցիւ, եւլն:

ԵՐԱՆԱԿԻ ՎԵՇԱԾՈՆԵՐԻՒԹ.

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Ասէ Տէր ցՄամուէլ.
Այս զեղջիւր քո իւղով, եւ
եկ առաքեմ զքեղ առ Յես-
սէ ի Բեթղեհէմ, եւ օծ-
ցես զմի յորդւոց նորա ի
թագաւոր փոխանակ Սա-
ւաւզայ:

2. Եւ իբրեւ մտին որդի-
քին Յնասեայ, ետես Սա-
մուէլ զեղիար եւ ասէ.
Այլ եւ առաջի իսկ Յնասն
օծնալ իւր: Ասէ Տէր ցՄա-
մուէլ. Մի հայիր ընդ տե-
սիլ դորա, եւ մի ի մեծու-
թիւն հասակի դորա. զի
մարդ հայի յերեստ, եւ Աս-
տուած հայի ի սիրտ:

3. Եւ անցոյց Յեսսէ զեօ-
թանեսին զորդիսն իւր ա-
ռաջի Սամուէլի, եւ ասէ
Սամուէլ. Ոչ ընտրեաց իդո-

ԲԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Աստուած ասաց Սա-
մուէլի թէ եղջիւրդ եղով
լեցուր, ու արի յուղարկեմ
զքեղ Բեթղեհէմ քաղաքը՝
Յեսսէին, որ նորա որդւոց
մէկը թագաւոր օծեն Սա-
ւաւզայ տեղը:

2. Նրբոր Յեսսէի որդի-
քը ներս մտան, տեսաւ Սա-
մուէլ եղիարն ու ասաց.
Ահա արդէն Աստուածոյ
առջեւն է իւր օծեալը: Աս-
տուած ասաց Սամուէլի. Մի
նայիր դորա տեսպին, եւ ոչ
դորա հասակին մեծութեա-
նը. վասն զի մարդ մարդ-
կանց երեսը կնայի, Աս-
տուած օրտերը կնայի:

3. Յեսսէ իւր եօթը որ-
դիքն եւս անցուց Սամուէլի
առջեւն, բայց Սամուէլ
ասաց թէ Աստուած ատոնց-

ցանէ Ցէր. այդչափ են ման-
կրտիդ. Եւ նա ասէ. կայ
միւս եւս փոքրիկ եւ արա-
ծէ խաշն. Ասէ Սամուէլ
ցթեսսէ. Առաքեա եւ ած-
դնա. զի ոյ բազմեսցուք մին-
չեւ ի գալ նորա այսր:

4. Եւ առաքեաց Յեսսէ
եւ ած զԴաւիթ. Եւ նա Եր
կարմիր եւ աչօք գեղեցիկ եւ
ըարւոք տեսանելով: Եւ առ
Սամուէլ զեղջիւրն իւղոյ,
եւ Հրամանաւ Տեառն օծ
զԴաւիթ ի մէջ եղբարց իւ-
րօց: Եւ խաղաց Հոգի Տեա-
ռըն ի վերայ Դաւիթի յօրէ
յանմանէ եւ առ յապա:

5. Եւ Հոգի Տեառն վե-
րացաւ ի Սաւուղայ, եւ խեզ-
գէր զնա այս չար ի Տեառ-
նէ. Ասեն զնա ծառայքն
իւր. Ահա Դաւիթ որդի Յես-
սեայ Բեթղահեմացւոյ: այր
իմաստուն եւ պատերազ-

մէ մէկն ալ չընտրեց. այդ-
քան են տղաքդ: Նա պա-
տասխանեց թէ ուրիշ մէ-
կըն ալ կայ' ամենէն փոքր,
որ ոյխար կարծեցընէ. Սա-
մուէլ ասաց Յեսսէին.
Մարդ յուղարկէ բեր զին-
քը. վասն զի մինչեւ նա այս-
տեղ չգայ' պիտի յնստիմք:

4. Մարդ յուղարկեց Յես-
սէ ու բերաւ Դաւիթը, որ
կարմիր էր, աչքերը գե-
ղեցիկ եւ տեսքը միրուն:
Խակոյն առաւ Սամուէլ ե-
զին եղջիւրը, եւ Աստու-
ծոյ Հրամանաւը օծեց Դա-
ւիթը եղբարցը մէջ. Այն
օրէն Աստուծոյ Հոգին ի-
ջաւ Դաւիթի վերայ մինչեւ
վերջը:

5. Աստուծոյ Հոգին վեր-
ցաւ Սաւուղէն, ու չար Հո-
գի մի կտանջէր զինքը Աս-
տուծոյ Հրամանաւը: Ասին
իրեն ծառաները. Ահա Դա-
ւիթ՝ Բեթղահեմացւի Յես-
սէին որդին, խելացի ու

մող, հանճարեղ եւ ճար՝
տարաբան, այս գեղեցիկ
տեսլիամբ եւ ջէր ընդնման
գիտէ սաղմոն եւ երգել քը-
նարաւ, եւ եղիցի ի հասա-
նել ի վերայ քո այսոյն չա-
րի որ յԱստուծոյ՝ երգես-
ցէ քնարաւն, եւ գիւր լիցի
քեզ.

6. Առաքեաց ՍաւուզՀըր
թեշտակս առ Յեսոէ եւ ա-
սէ. Առաքեա առ իս գիտ-
ւիթ որդին քո որ ի հօտի
քում է: Եւ առ Յեսոէ ար-
դու մի հացի եւ տիկ մի
գինւայ եւ ուկ մի յայծեաց:
եւ առաքեաց ի ձեռն Դաւ-
թի որդւոյ իւրոյ՝ Սաւու-
զայ:

7. Եմուտ Դաւիթ առ
Սաւուլ եւ կայր ի սպասու-
առաջին նորա, եւ եղեւ նո-
րա կապարճակիր: Եւ լինէր
յորժամ հասանէր այսն
չար ի վերայ Սաւուզայ առ-
նոյր Դաւիթ զքնարն եւ

քաջ մարդ, հանճարաւոր
ու ճարտասան, տեսքը գե-
ղեցիկ, եւ Աստուծուած հետը,
գիտէ սաղմոն ասել ու քը-
նար զարնել երգելով: Եր-
բոր չար հոգին քու վերադ
հասնի Աստուծոյ հրամա-
նովը, թողնա քնարովը եր-
գէ, քեզի թեթեւութիւն
կինի:

6. Մարդիկ յուղարկեց
Սաւուզ Յեսոէին ու ասաց.
Յուղարկէ ինծի Դաւիթ որ-
դիդ՝ որ ոյխարներուդ քո-
վըն է: Առաւ Յեսուէն մէկ
արգու մի հաց, տիկ մի գի-
նի եւ այծու ձագ մի, եւ
իւր Դաւիթ որդւոյն ձեռ-
քովը Սաւուզին յուղար-
կեց:

7. Գնաց Դաւիթ Սաւու-
զին քով նորա առջեւը ծա-
ռայութիւն կանէր, ու նո-
րա կապարճակիրն եղաւ, եւ
երբ չար հոգին Սաւուզայ
վերայ կհասնէր, Դաւիթ
քնարը ձեռք կառնուր ու

Նուտգէր ձեռամբ իւրով,
Եւ հանգուցանէր զՍաւուզ-
եւ դիւրանայրնմա, Եւ մեկ-
նէր ի նմանէ այսն չար:

կղարնէր, անով Սաւուզը
կհանգուտանար, թեթեւու-
թիւն կիմանար, Եւ չար հո-
գին քովէն կհեռանար:

ԴԱՍ Բ.

ՀԱՏԼՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Կց զեղիւր քո իւրով.
Եկ առաքեմ զքեղ առ Ենաէ.
Օեցես զմի յօրըւոց Ենսեց ի
թագուոր
Եռաջի խեկ Ենան օճեալ իւր:

Եղով լեցուր եղիշիրէ ամանդ:
Երի յուղարկեմ զքեղ Յեսուկին:
Յեսուկի որդուց մէկը թագուոր օ-
ծես:

ՄԷ Հոյիր ընդ աեսիլ դորա.
ՄԲ Հոյիր ի մեծութիւն հասակի
դորա.
Մարդ Հոյիր յերես Աստուած
Հոյի ի սիրաս.

Ասոււծոյ առջև ահա կնցած է
իւր օժեալը:
ՄԲ Հոյիր դորա տեպին,
ՄԲ Հոյիր դորա հասակին մեծու-
թիւնը:

Մարդ մարդկանց երեսները ճառին
Աստուած սրաները:
Եւր օրդին առջևէն անցուց:
Ասունցէ մէկն ալ չընարեց Աս-
տուած:

Միոյն ոյդքան են ազուրդ:
Կոյ միւս ևս փոքրիկ որ արածէ
խաշն.
Առաքես և ած զնա.
Ոչ բազմացուք մինչև ի զալ նորա.
Կարմիր էր Դաւիթ և աշցք զե-
ղեցիկ.
Առ Սամաւել զեղինըն իւզոյ.

Օծ Սամանէլ զԴաւիթի ի մեջ եղ-
բարց իւրաց.
Խաղաց Հոգի Տեսան ի վերայ
Դաւիթի.

Յօրէ յայնմանէ և առ յապա.
Հոգի Տեսան վերացաւ ի Սաւու-
դայ.

Խեղգեր զՍաւուդ այս չար ի
Տեսանէ.

Այր իմաստուն և պատերազմող,
Այր հանճարեղ և ճարտարաբան.

Այր գեղեցիկ տեսլեամբ.

Տէր ընդ նմա.

Գիտէ երգել քնարաւ.

Ի հասանել ի վերայ քո այսոյն
շարի.

Երգեց Դաւիթ քնարաւն.

Դիւր լիցի քեզ.

Առաքեց Սաւուդ հրեշտակս առ
Ցեսէ.

Առաքեա առիս զԴաւիթ որդի քո.

Արդու մի հացի և արկ մի զինւց.

Ի ձեռն Դաւիթ որդու իւրաց.
Դաւիթ ի սպասու կայր առաջի
Սաւուդայ.

Դաւիթ եղէ նորա կապարձակիր.

Օծց Սամանէլ Դաւիթը նորա
եղբարցը մեջ:
Սատուծոյ Հոգին Դաւիթի վերայ
իջաւ.

Այն օրէն մինչև վերջը:
Սատուծոյ Հոգին Սաւուդի վեր-
դաւ.

Զար հօգի մի կըխղդեր Սաւուդը
Աստուծոյ Հրամանավը:

Խեղցին ու քաջ մարդ:
Բարակամիտ ու խօսի վարսես
մարդ:

Գեղեցիկ կերպարանքով մարդ:
Աստուծան նորա հետն է:

Գիտէ երգ երգել՝ քնար զարնե-
լով.

Երբոր չար հօգին վերադ հասնի,

Դաւիթ քնարավը թող երգէ:
Թեթևութիւն կինի քեզի.

Սաւուդ մարդ յուղարկեց Ցես-
սին:

Յուղարկէ ինծի քու Դաւիթ որ-
դիզ.

Մէկ չափ մի պինկ և արկ մի
զինի:

Իւր Դաւիթ որդուցն ձեռքավը:

Դաւիթ ծառայութիւն կանէր Սա-
ւուդին առջևը:

Դաւիթ նորա կապարձակիրն ե-
դաւ.

Առնօյր Դաւիթ զքնարն.
Նուտգէր ձեռամբ իւրով.
Հանգուցանէր Դաւիթ զՍաւուլ.

Դիւրանայր Սաւուղսյ.
Մեկնէր ի նմանէ այսն չար.

Դաւիթ քնարը ձեռք կտանէր:
2եռքովը կդարներ քնարը.
Դաւիթ հանգստութիւն կտատար
Սաւուղնն.
Սաւուղն թեթևութիւն կլինէր:
2ար հոգին քովն կհեռանար.

ԳԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հարցմանն.

Պատճենն.

Ի՞ւ ելից Սամուել զեղջիւր իւր.
ԶԲ՞նչ ելից իւղով.
ԶԲ՞նչ առնելց էր իւղովն.

ԶԲ՞նչ հոյէր Սամուել.

ՅԲ՞նչ հոյի մարդ և ՅԲ՞նչ Աս-
տուած.
Ո՞րշափ կնն մանկան Սամուելի.
ԶԲ՞նչ առնէր փոքրիկն.
Մինչև ցերք ոչ կամեր Սամուել
բաղմել.

Որպիսի՞ էր անշետամբ Դաւիթ.
ԶԲ՞նչ էտա Սամուել.
Ո՞ր էօծ զԴաւիթ.
ԶԲ՞նչ եղև ընդ Դաւիթ.

Ե՞րբ
Եւ զի՞ եղև Սաւուղսյ.

Իւղով:
Զեղջիւր իւր:
Օծանելց էր զԴաւիթ ի թագա-
ւոր:
Ընդ անին Եղիարայ և ի մեծո-
թիւն հասակին նորա:
Մարդ հոյի յերես և Աստուած
ի սիրառ:
Եօթն և միւս ևս փոքրիկ:
Արածէր խաշնւ:
Մինչև ցգալ Դաւիթ:

Կարմիր և գեղեցիկ աշօք:
Զեղջիւրն իւղոյ:
Ի մէջ եղբարց իւրոց:
Խաղաց ի վերայ նորա Հոգի Տես-
ուըն:
Յօրէ յայնմանէ և առ յապա:
Հոգի Յետոն վերացաւ ի նմանէ:

Արագիոնի՞ ոք էր Դաւիթի՛.

Զի՞նչ զիտէր Դաւիթի՛.

Զի՞նչ կամ ո՞ հասանէր ի վերայ
Սաւուղայ.

Զի՞նչ լինէր Սաւուղայ յերգելն
Դաւիթի.

Զ. առաքեաց Սաւուղ առ Յեսսէ.

Զի՞նչ առաքեաց Յեսսէ առ Սա-
ւուղ.

Յըր ձեռն առաքեաց.

Զի՞նչ դործ էր Դաւիթի առ Սա-
ւուղայ.

Զի՞նչ առնէր Դաւիթ յայսահա-
րելն Սաւուղայ.

Եւ զի՞նչ շահ լինէր պնու Սա-
ւուղայ.

Այսր իմաստուն և պատերտղմող:
Դիտէր Սաղմոս և երգել քնարաւ:
Այս չար ի Տեսունէ:

Դիւրանայր Նմա:

Հրեշտակս:

Երգու մի հացի և ափէ մի զինոց
և ուշ մի յայծեաց:
Ի ձեռն որբոց իւրց Դաւիթի:
Կայր ի սպասու առաջի նորա:

Երգէր քնարաւն և հանգուցանէր
զնա:

Դիւր լինէր Նմա:

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ՅԵՒԳ ԲԱԼԱՏ.

Հ. Բառերուն գլխաւոր ձեւերը որմնք են.

Պ. Բառերուն գլխաւոր ձեւերն են պարզութիւն եւ բար-
դութիւն:

Հ. Պայլ բառերը որմնք են.

Պ. Պայլ կըսուին այն ամենայն բառերը օք ուրիշ բառի
կամ նշանական մասնըկի հետ կապուած չեն. զոր օրինակ՝
լոյս, ջուր, սէր, մեծ, սուրբ, արար, բեր, եւլն:

Հ. Բարդ բառերը որմնեք են.

Պ. Բարդ կըսուին անոնք որ ուրիշ անունի կամ ո՞ր եւ իցէ բառի հետ կապուած են՝ փոքր փոփոխութեամբ, եւ երբեմն առանց փոփոխութեան. զոր օրինակ՝ լուսատու, ջրակիր, մարդասէր, մեծամիտ, սրբակաց, բարերար, պաղաքեր, — վրէժինդիր, հացկատակ, ձեռնտու, կաթնկեր, եւլն.

Հ. Պարզ բառերէն բարդ շինելու սովորական կանոնները որմնեք են.

Պ. Ա, Բառերը կկապուին և ձայնաւորով, երբոր առաջին բառը կվերջանայ բաղաձայն. սովորաբար առաջինը ուղղական կամ սեռական կդրուի, եւ երկրորդը անփոփոխմնայ. զոր օրինակ՝ բանագէտ, մարդասէր, կարճամիտ, սիրոբուն, տիրասէր, ատենադպիր.

Բ, Նոյնպէս և տառով կկապուին՝ երբոր առաջին բառը ձայնաւորով կվերջանայ. զոր օրինակ՝ մարդարէշրաշ, դիտարդ, ազնուագութ, լումայափոխ.

Գ, Երբոր առաջին բառը բազմավանկ է ու չ կվերջանայ, բարդուելու ժամանակ շատ անգամ է կամ չ կդառնայ ինին, երբեմն ալ և. զոր օրինակ՝ բարէգործ, գերէգարձ, որդէգիր կամ որդէգիր, թերէհաւատ, կամ թերահաւատ, հեռաբնակ, եւլն.

Դ, Երբոր առաջին բառը բաղաձայնով վերջանայ, ու երկրորդը ձայնաւորով սկսի, առանց կապող ձայնաւորի կրարդուին. զոր օրինակ՝ բանտարգել, մարդատեաց, մեծանուն, եւլն.

Այս կանոնները զանազան խոտորմունքներ եւս ունին.

ԵՇԹՆԵՑԿ ԵՇԹՆԵԽՑԱՑՆԵՐՈՒՄ.

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Ժողովեցին այլազգինքն զբանակս իւրեանց ի պատերազմ, եւ գումարեցան ի Սոկրով հրէաստանին. Սաւուղ եւ արք Խորայէլի ժողովեցան եւ նոքա ի Հովիտան, եւ ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն:

2. Եւ ել այր զօրաւոր ի ճակատէ այլազգեացն, Գողիադ անուն ի Գէթայրարձրութիւն. նորա վեց կանգուն եւ թղաւ, եւ սազաւարտ ի գլուխ նորա, եւ զրահս վերտո զգեցեալ. կը շիռ զրահից նորա հինգ հազար սիկդ պղնձոյ եւ երկաթոյ. սռնապանք պղնձիք ի վերայ բարձից նորա, եւ վահան պղնձիք ի վերայ թիկանց նորա. բուն գե-

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Այլազգիներն իրենց բանակները պատերազմի ժողովեցին, ու հաւաքուեցան Նրէաստանի Սոկրով ասուած տեղը. իսկ Սաւուղըն ու Խորայէլացիք ժողովուեցան Հովիտներուն մէջ, եւ այլազգիներուն դէմ պատերազմի շարուեցան:

2. Այն ատեն այլազգիներուն բանակէն ելաւ զօրաւոր մարդ մի Գողիադ անունով՝ Գէթ քաղաքէն. բարձրութիւնը վեց կանգուն ու մէկ թիզ էր, գլուխը սազաւարտ դրած, ու վերան հիւսուած զրահ հազար. զրահներուն ծանրութիւնն էր հինգ հազար սիկդ՝ պղնձնձ ու երկաթազգրերուն վերայ պղնձէն սռնապաններ ունէր, եւ

դարդան նորա իրրեւ զստորի սստայնանկաց, եւ տէգ նորա ի վեց հարիւր սկեղէ երկաթոյ. եւ զինակիր նորա առաջի նորա երթայր.

կռնակը պղնձէ վահան. նիզակին կոթը՝ կաւա գործողներուն սալմինին նման, եւ տէգը վեց հարիւր սիկղ ծանրութեամբ երկաթ. եւ զինակիրը (սէլհորտն) առջեւէն կերթար:

3. Եկն եկաց, ձայն ետ ի ճակատն Խորայէլի եւ աօէ. ընդէք ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր. ընտրեցէք դուք ձեզ այր մի, եւ իջցէ առ իս. եթէ կարասցէ կռուել ընդ իս եւ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից եւ հարից զնա, դուք եղիջիք մեզ ի ծառայս:

4. Իբրեւ լուաւ Սաւուզ եւ ամենայն Խորայէլ զբանը այլազգւոյն, զահի հարան եւ երկեան յոյժ. Խոկ այլազգին կանխեալ եւ անազանեալ՝ արձանանայր աւուրս քառասուն, եւ անէր. Ահաւասիկ ես նախա-

3. Եկաւ կանգնեցաւ, կանչեց գէպի Խորայէլացւոց բանակին ու ասաց. ինչո՞ւ ելնէք մեզի գէմ պատերազմ անելու. ընտրեցէք ձեզի մարդ մի որ ինծի գայ, թէ որ կարողանայ հետս կըռուել ու զարնել զիս, մեք ձեզի ծառայ լինիմք. իսկ թէ որ ես յաղթեմ ու զարնեմ զինքը, դուք մեզի ծառայ լինիք:

4. Սաւուզ եւ բոլոր Խորայէլացիք երբ լսեցին այն այլազգւոյն խօսքերը, խիստ վախցան ու սարսափեցան: Խոկ այլազգին ամէն առաւոտ եւ իրիկուն կելնէք կը-կանգնէք մինչեւ քառասուն օր ու կասէք. Ահա ես

տեցի զճակատդ. Խորայէլիք-
տուք այր մի, եւ մենամար-
տեսցուք երկոքեան:

նախածտինք արի Խորայէ-
լացւոց բանակիդ. մարդ մի
տուէք, որ երկուքս մինակ
կըռուըտիմք:

ԴԱՍ. Բ.

ՀԱՏԷՆՑԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Ժաղավեցին աղաղգիքն զբանակո-
իւրեանց.

Գումարեցան այլազիքն ի պատ-
րազմ.

Սաւուղ և արք Խորայէլիք ժողո-
վեցան ի հովիտան.

Ճակատեցան ընդդէմ այլազիքացն.

Ել ի ճակատէ այլազիքացն այր
զօրաւոր.

Քարձրութիւնն Գողիադու վեց
կանգուն և թշաւ.

Սաղաւորս ի զըսւս նորա.

Զիցեալ էր զրահս վերտառ
նշիռ զրահից նորա հինգ հազար
սիկդ.

Սունապանք պղնձիք կն ի վերս
քարձից նորա.

Աւահան պղնձիք էր ի վերս թի-
կանց նորա.

Բուն զեղարդան նորա իրրե զստո-
րի ոստոյնանկաց.

Այլազիներն իրենց զօրքերը ժող-
վեցին.

Այլազիները պատերազմի ժող-
վեցան.

Սաւուղ և Խորայէլացիք հավիա-
ներուն մէջ ժողվաւեցան:

Այլազիներուն զէմ պատերազմի
շարուեցան.

Այլազիներուն բանակէն ելաւ
ուժով մարդ մի.

Դողիազու քարձրութիւնն էր վեց
կանգուն՝ մէկ թիզ.

Պղուիը սաղաւորս կար:

Հիւսուան զրահներ հազար էր:

Նորա զրահներուն ծանրութիւնն
էր հինգ հազար սիկդ:

Ազգներուն վերս պղնձէ սունա-
պաններ կոյին:

Պղնձէ վահան ուներ կոնակը:

Նիզակին կոթը կտաւ զօրծողնե-
րուն սալմինին պէս էր:

Տեղ նորա ի վեցհարիւր սկզբն էր.

Կոթոց:

Զինակիրն Դողիադու տուաջի նո.
րա երթոյր.

Եին եկաց Դողիադ.

Զոյն ես Դողիադ ի ճակատն Իս.
բոյլի.

Ընդէր ելանէք պատերազմի ընդ.
դէմ մըր.

Ընտրեցէք պյր մի և իշցէ ոռ խո.

Եթէ հարասցէ կռուել ընդ իս և
հարկանել զիս.

Եցիցուք մեք ձեզ ի ծառոյս.

Ազա թէ ես հարից զնո.

Լուս Սաւուշ զրանս այլազգ.
ոյն.

Զահի հարու և երիեաւ յոյժ.

Անինէր և անազանէր այլազգին
աւուրս քառասուն.

Արձանանոյր և ասէր.

Ես նախատեցի զճակատդ Իսրա.
յլի.

Տուք պյր մ.

Ես և նա մնամարտեցուք երկո.
քեռն.

Նօրա ակզր վեց հարիւր սկզբն
ծանրութեամբ երկաթ էր:
Դողիադու զինակիրը առջնէն կեր.
թար:

Եկաւ կանգնեցաւ Դողիադ:

Դողիադ կանչեց դեպ ի Խորայէլաց.
ոց բանակը:

Խնչու մեզի գէմ պատերազմի կել.
նէր:

Մարդ մի ընտրեցէք թող ինձի
գայ:

Թէ որ կարենայ հետս կռուիլ ու
զիս մեռցընել:

Մէք ձեզի ծառոյս լինիմբ:

Իսկ եթէ ես զարնեմ մեռցընեմ
զնոքը:

Լսեց Սաւուշ այլազգուն խօս.
քեռը:

Սարտիկ վախցաւ ու սարսափե.
ցաւ:

Քառասուն օր առաւօտ և իրի.
կռւն կենէր:

Կիանգնէր ու կասէր:

Ես նախատինք արի Խորայէլացոց
բանակին:

Մարդ մի առւէք,

Ես ու նա մինակ կռուցտիմք եր.
կուքս:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ՐԵՋՄԱՆՔ.

ԶԲՈՒՆ ժողովնեցին պլազմիքն։
Առ ի՞նչ գումարեցան.
Ուր գումարեցան.
Ուր ժողովնեցան Սաւուզ և արք
Խորսոյեցի.

Ո՞ւ ել ի ճակատէ նորա.
ԶԲՈՒՆ անուն էր նորա.
Յորմէ քաղաքէ էր.
Ո՞ւշափի էր բարձրութիւն նորա.
ԶԲՈՒՆ իսյր ի զուխն նորա.
ԶԲՈՒՆ զգեցեալ էր Գողիադ.
Ո՞ւշափ էր կշիռ զրահից նորա.
ԶԲՈՒՆ իսյր ի վերայ բարձից նորա.
Եւ զի՞նչ ի վերայ թիկանցն.
Որպիսի՞ էր բուն զեղարգան նորա.
Որպիսի՞ էր տէզն.
Ո՞ւ երթայր առաջի Գողիադու.
ԶԲՈՒՆ արար Գողիադ.

Առ ո՞ւ ձայն եա.
Զօ՞ւ առաց ընտրել Խորսոյեցւոցն.
Որպիսի՞ ոյր ընտրել առաց.
Եւ զի՞նչ եթէ հարկանէր զնա
ոյրն.

Առա թէ ինքն հարկանէր զայրն
զայն.

Գ-ՌԵՋՄԱՆՔ.

Ժ-ՌԵՋՄԱՆՔԻՆ զբանակս իւրեանց
Ի պատերազմ ընդ Խորսոյելի:
Ի Սոկըռվ հրեաստանի:
Ի հովհանն:

Այլ զօրաւոր:
Գողիադ:
Ի Գեթայ:
Վեց կանգուն և թզաւ:
Սաղանարա:
Զրահս վերաս:
Հինգ հազար սիկզ:
Սոնապանք պղնձիք:
Վահան պղնձի:
Երրու զստորի սստայնանկաց:
Ի վեց հարիւր սկեղէ երկաթայ:
Զինակիր նորա.
Եկն եկաց և ձայն եա ի բանակն
Խորսոյելի:
Ի բանակն Խորսոյելի.
Այլ մի:
Որ կարասցէ կռուել ընդ նմա և
հարկանել զնա:
Եղիցուք ասէ մը ձեզ ի ծառայս

Դուք եղիշիք, ասէ մեզ ի ծառայս
Հայություն մատուց անձնայի բայց

Զի՞նչ լուաւ Սաւուզ և ամենայն
Խորսոց էլ.

Աւ զի՞նչ տասցին.

Ո՞րչափ ժամանակու եղանէր Գո-
ղիադ և արձանանայր.

Զի՞նչ ասէր ի կալ իւրում՝ առա-
ջի Խորսոցին.

Զ. ասէր ցնուաւ տալ.

Աւ զի՞նչ կամէր առնել ընդ նա.

Զբանս պյլտղուց:

Զարհութեցան և երկեան շցժ.
Աւուրս քառասուն:

Ես նախատեցի, ասէր, զմակատդ
Խորսոցին.

Տուք, ասէր, պյր մի:

Ես և նա մնամարտեցուք, ասէր,
երկոքեան.

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԱՅԼ ՔԱՅԼԻՑ.

Հ. Բարդերը ի՞նչ տեսակ բառերէ կձեւանան.

Պ. Բայից արմատներէն, գերբայերէ ու բայերէ, նախդիր-
ներէ եւ մակրայներէ:

Հ. Բայից արմատներէ ձեւացածներուն օրինակ տուր.

Պ. Չարախնդաց, դիւրիմաց, հայրատեաց, զօրահատոյց,
զէնընկէց, այրեացաւեր:

Հ. Դերբայերէ ու բայերէ ձեւացածներուն օրինակ տուր.

Պ. Շիցելափառ, ընտրելակից, ամենօր հնեալ, բազմերգելի:

Հ. Դերանուններէ ձեւացած բարդերուն օրինակ տուր.

Պ. Խելնաբոյս, նոյնագոյ, քոյինաշունչ, մերասեռ, իւ-
բաստեղծ:

Հ. Նախդիրներէ ձեւացած բառերու օրինակ տուր.

Պ. Ընդարձակ, ցերեկ, ցայզ, ընդասուն, ընդունակ, զառիվայր:

Հ. Մակրայներէ ձեւացած բարդերու օրինակ տուր.

Պ. Ոչէ, այժմածին, հանապազասուտ:

Հ. Անուանց կամ ուրիշ մասանց բանի մը հոլովներով կձեւանան բարդութիւններ.

Պ. Սովորաբար սեռականով, վերջաւորութիւնը ձգելով զօր օրինակ՝ սիրաբուն, գիւտահար, տեառնապարգեւ, բղձակաթ, առնակերպ, հօրաքոյր, արենապարտ, եւլն. բայց եւ միւս հոլովներով շատ բարդեր կձեւանան, մանաւանդ ուղղականով:

Հ. Ուղղականով ձեւացած բարդերու օրինակ տուր.

Պ. Հայրանենգ, եղբայրասպան, ձիւնափայլ, քաղցրաճաշակ, սերմնացան, արիւնարրու եւլն:

Հ. Ցրականով ձեւացած բարդերու օրինակ տուր.

Պ. Առունկնձառ, առձեռնպատրաստ, ընդխօսրահար, ընդունչսարկու:

Հ. Գործիականով բարդուած բառերու օրինակ տուր.

Պ. Զերբակալ, ձերբաձգութիւն, մեօքակերպ:

Հ. Հայցականով բարդուածներու օրինակ տուր:

Պ. Բանսարկու, կենսատու, օրէնսգէտ, մեղսաօէր, զայլոցկերութիւն:

ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՑԱՌՄՆԵՐԱՐԴ

ԳԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Դաւիթ գնացեալ դարձաւ ի Սաւուզայ՝ արածել զաշխարս հօր իւրոյ ի Տեթղահէմ։ Ասէ ցնա Յեսսէ։ Ա՛ռ գու զարդու փոխնգոյս եւ զտասն նկանակս զայսոսիկ, պնդեա ի բանակն եւ տուր եղբարց քոց։ Եւ զտասն մաճառակս զկաթին տարցես հազարապետին։ Եւ տեսցեա զողջոյն եղբարց քոց, եւ եթէ պէտք ինչ իցեն նոցա՝ իմասցիս։

2. Կանխեաց Դաւիթ ընդառաւոտն, եթող զոչխարսըն ի տուարածականսն, եւ եկն ի զօրն։ Եւ ճակատեցան Խորայէլացիքն եւ այլազգիքն հանդէպ միմեանց ճակատ առ ճակատ։

ՔԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Դաւիթ դարձաւ գընաց Սաւուզին քովիէն Բեթղահէմ՝ որ հօրը ոչխարներն արծեցընէ։ Յեսսէն տուցանոր. Ա՛ռ այս չափով փոխինդը եւ այս տասը հատհացը, գնա շուտով բանակըն ու եղբարցդ տուր. Այս տասը գլուխ պանիրն ալ հազարապետին կտանիս. Նայէ ինչպէս է եղբարցդ առողջութիւնը, եւ թէ որ բանի մի կարօտութիւնն ունին՝ հասկըցիր։

2. Դաւիթ առաւոար կանուխ ելաւ, թողուց ոչխարները անասուն նայող պահապաններուն ու եկաւ մըտաւ զօրքին մէջ այն միջոցին որ Խորայէլացիքն ու այլազգիներն իրարու դէմ պատերազմի շարուեցան։

3. Նթող Դաւիթ գկարասին յինքենէ ի ձեռն վանապանին, եւ ընթացաւ ի ճակատն, եւ եկն եհարց զողջաւնէ եղբարցն իւրօց, եւ մինչդեռ նա խօսէր ահա ելանէր այրն Փղըշտացի, եւ խօսեցաւ ըստ նմին բանից. եւ լուսու Դաւիթ։

4. Խօսեցաւ ընդ արմն որ շուրջ կային զնովաւ եւ ասէ. Զի՞նչ առնիցէ արքայ առն՝ որ հարկանիցէ զայլազգին. զի զի՞նչ է այլազգին այն անթլիփատ՝ որ նախատեաց զճակատս Աստուծոյ կենդանւոյ. Ասեն. Մեծացուացէ զնա արքայ յոյժ, եւ զգուստը իւր տացէ նըմա կնութեան, եւ զտուն հօր նորա արասցէ ազատ ի մէջ նորայէլի։

5. Իրբեւ լուաւ Նղիաբ եղբայր Դաւիթի երէց զինո-

3. Թողուց Դաւիթ իւր հետը բերած բաները բանակի պահապանին քովը, վաղեց գնաց պատերազմին տեղն ուեղբարցը առողջութիւնը հարցուց իմացաւ, Նրբոր նա խօսելու հետ էր անդիէն Փղշտացի մարդը ելաւ, ու առաջուան խօսքերն ասաց, որ Դաւիթ եւս լսեց։

4. Դարձաւ ասաց իւր քովն եղած մարդկանց. Բնչ կանէ թագաւորը այն մարդուն որ զարնէ մեռցընէ այդ այլազգին. ովկ է կամ Բնչ մարդ է այդ անթլիփատ այլազգին որ Աստուծոյ կենդանւոյ բանակին նախատինք կանէ. Պատասխան տուին թէ թագաւորը այն մարդը շատ պիտի մեծցընէ, իւր աղջիկը անոր կնութեան պիտի տայ, եւ հօրը տունը ազատ պիտի անէ բոլոր նորայէլացւոց մէջ։

5. Նրբոր լսեց Նղիաբ՝ Դաւիթի մեծ եղբայրը, նորա

սել նորա ընդ արսն, բարկացաւ Դաւթի եւ ասէ. ընդէ՞ր ընաւ իջեր այսր, եւ յոյր ձեռն թողեր զսակաւ ոչխարակն յանապատի անդ. ես գիտեմ զհպարտութիւն քո եւ զշարութիւն սրտի քոյ, զի վասն աեսանելոյ զպատերազմն իշեր:

6. Ասէ Դաւթիթ. եւ արդ զի՞նչ արարի. ոչ ապաքէն բանք իցեն. Նւ գարձաւ ինմանէ ի միւս կողմն եւ խօսեցաւ ըստ նմին բանից. եւ պատմեցին առաջի Սաւուզայ, եւ առ զնա առ ինքն.

այն մարդոց հետ խօսածը, բարկացաւ վերան ու ասաց. ի՞նչ բանի համար ելար եկար այս տեղ. որո՞ւ ձեռքը թողուցիր խեղճ ու քիչւոր ոչխարները այն անապատին մէջ. ես գիտեմ քու հպարտութիւնդ որ սրտիդ չարութիւնը որ այս պատերազմը տեսնելու համար եկեր ես:

6. Դաւթիթ պատասխանեց թէ հիմա ի՞նչ յանցանք է արածս. ոչ ապաքէն խօսք է. Անկից գարձաւ միւս կողմն ու նոյն կերպով խօսեցաւ. այնպէս որ գնացին Սաւուզայ պատմեցին. եւ նա իւր քովն առաւ Դաւթիթը:

ՀԱՅԵՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Դաւթիթ գնացեալ զարձաւի Սաւուզայ.

Դնաց արածել զոչեաբս հօրինոյ.

Դաւթիթ Սաւուզին քովն դարձաւ զնաց:

Դնաց իւր հօրն ոչխարները արծեցնելու.

Առ զարդու վամինգըս.

ԱՌ զտան նկանակս զայսոսիկ
պնդես ի բանակն.

Զմանձառակս կաթին տարցես հա-
զարապետին.

Տեսցես զողջոյն եղբարց քոց.

Նթէ պէտք ինչ իցն նոցա՝ ի-
մասցիս.

Կանխեաց Դաւիթ ընդ առաւօտն.
Եթող զոշարան ի տուարածա-
կանման.

Ճակատեցան հանդէս միմեանց.

Նթող զկարասին ի ձեռն վանա-
պանմին.

Եհարց զողջունէ եղբարցն իւրոց.

Խօսեցաւ Գողիադըստ նմին բանից.

Խօսեցաւ ընդ արսն որ շուրջ կա-
յին զնովաւ.

Զի՞նչ առնիցէ արքայ առն որ
հարկանիցէ զայլադդին.

Զի՞նչ է այլազդին այն անթլիաստ.

Նախատեաց զճակաստ Աստանց
կենդանւոյ.

Մեծացուոցէ արքայ զայրն յայժ.

Զգուստը իւր տացէ նմա կնու-
թեան.

Զտուն հօր նորա արտացէ ազտու-

Առ այս չափով վախինդը:

Այս տասը հաս հացը առ:

Գնա շուտով բանեկը:

Քամած պանիրը (կամ մածունը)
տար հազարապետին:

Տես եղբարցդ առողջութիւնն ինչ-
պէս է:

Նթէ բան մի պէտք է նոցա՝ հա-
կրցիր:

Դաւիթ առաւօտը կանուխ եղաւ:
Ոչխարները թողաց պահապան
հովիւներուն:

Դիմացէ դիմաց պատերազմի շոր-
ւեցան:

Հետը բերած բաները թողաց բա-
նակի պահապանին քով:

Եղբարցը առողջութեանը տեղե-
կացաւ:

Նոյն կերպով խօսեցաւ Գողիադ:

Եւր չորս դին եղած մարդոց հետ
խօսեցաւ:

Ի՞նչ կուտայ թագաւորը՝ այն այ-
լազդին մեռցնող մարդուն:

Ի՞նչ բան է այն անթլիաստ այ-
լազդին:

Նախատինը արաւ անմահին Աս-
տանց զօրքերուն:

Թագաւորը այն մարդը իսխատ պի-
տի մածցընէ:

Եւր աղջիկը նորա կին պիտի այս:

Նորա հորը տունն աղաս պիտի անէ:

Եղիար՝ եղրայր Դաւթի երեց.
Առաւ զիստիլ նորա ընդ արսն.
Ընդէր բնաւ իշեր այսր.
Յոյր ձեռն թողեր զատկաւ ոչխա-
րական.
Յանապատի անդ.
Ես գիտեմ զհպարտութիւն քո.
Գիտեմ զշարութիւն օրտի քո.
Առան տեսանելոյ զպատերազմն ի-
ջեր.
Ոչ ապաքն բանք իցն.
Դարձաւ ի նմանէ ի միւս կողմն.
Պատմեցին առաջի Սաւուզայ.
Առ Սաւուզ զԴաւիթ առ ինքն.

Եղիար՝ Դաւթի մած եղրայրը,
Նորա մարդոց հետ խօսածը լսեց:
Ի՞նչ պէտք էր քեզի այստեղ զար
Որու ձեռքը թողուցիր քանի մի
խեղճ ոչխարները,
Անապատին մեջ.
Գիտեմ ես քու հպարտութիւնդ:
Քու սրտիդ չարութիւնը զիտեմ.
Այս պատերազմը տեսնելու եկար,
Հետո մասն առաջ առաջ առաջ.
24 որ խօսք է որ կանեմք,
Դարձաւ անկից միւս կողմն.
Սաւուզին առջևը պատմեցին,
Սաւուզ Դաւիթն իւր մօտ առաւ.

ԴԱՍ 4.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-Ե-Ր-Յ-Ա-Ն-Կ-.

Պ-Պ-Ա-Բ-Ա-Ն-Կ-.

Յո զարձաւ Դաւիթ.
Առ ի՞նչ զարձաւ ի Բեթղահէմ.
Զի՞նչ առաց Յեսէառուլ Դաւ-
թի.
Քանի՞ն կանակու առաջ առաջ առաջ
Զի՞նչ առաց եր հազարապե-
տին.
Առ ի՞նչ զնաց ի բանակն.
Զի՞նչ ոյլ ինչ պարտէր իմանալ
Ե՞րբ յարեաւ Դաւիթ.
Յո եթով զոշետրան.

Ի Բեթղահէմ:
Արածել զետային հօր իւրոց,
Արդու մի փոխնդոց:

Տասն:
Մաճառակս կաթին:
Յետէ ապագա նույն իցեն նոցա:
Ընդ առաւոտն:
Ի առարածականնեն:

Ո՞րպէս կացին Խորայէլացիքն և այ-
լոզգիք.

Զի՞նչ արար Դաւիթ զիարասին
յորժամ են ի զօրն.

Զի՞նչ Եհարց.

Զի՞նչ Խոսեցաւ Փղշտացին Դո-
վիադ.

Զի՞նչ արար Դաւիթ յորժամ
լուաւ զբանս Նորա.

Զի՞նչ ասաց յնոսա.

Զո՞ ասաց Դաւիթ թէ Նախատեր
Դողիադ.

Զի՞նչ Խոսուացեալ Էր արքայ առ-
նել առն՝ որ Հարկանիցէ զայ-
լոզգին.

Զի՞նչ կամեր տալ նմա.

Եւ զի՞նչ առնել զտուն Հօր Նորա-
Ռ՝ լուաւ զիսոսել Դաւիթի ընդ ար-
ալն.

Զի՞նչ յանդիմանեաց զնա.

Զի՞նչ ասաց Թողեալ Նորա յա-
նապատի անդ.

Զի՞նչ ասաց Եղիար թէ զիտիցէ.
Ընդէր եկեալ ասէր զնա ի բա-
նակն.

Զո՞ր պատասխանի արար նմա Դա-
ւիթ.

Յո՞ զարձաւ ի նմանե.

Ո՞ւմ պատմեցին զիրօն.

Զի՞նչ արար Սաւուղ.

Կացին հանդէպ միմեանց ճակատ
առ ճակատ.

Եթող ի ձեռու վանապանին.

Զողջունէ Եղիարց իւրոց:
Ըստ նմին բանից:

Խոսեցաւ ընդ արսն որ շուրջ կա-
յին զնովաւ.

Զի՞նչ է ասէ այլազդին այն ան-
թիւիատ.

Զճակատս Ասուուծոյ կենդանուց:

Մեծացնւցանել զնա:

Զդուուար իւր կնութեան.

Առնել ազատ ի մէջ Խորայէլի:
Եղիար՝ Եղիար Դաւիթի երեց.

Ընդէր ասէ, բնաւ իջեր ոյսոր.

Զօսկաւ ոչխարակսն.

Զհպարտութիւն նորա:

Տեսանել զպատերազմ:

Ո՞ւ ապաքէն, ասէ, բանք իցնա:

Ի միւս կողմն.

Առաջի Ասուուղոյ:

Էառ զԴաւիթ առ թիքն,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԶԵԽԻ Բ Ա Շ Ա Տ -

Հ. Բարդ բառերուն մը կտորն է փոփոխական .

Պ. Ընդհանրապէս առաջին կտորը, իսկ երկրորդը կմնայ միշտ անփոփոխ եւ անհողով . միայն քանի մի բառեր կան որ այս կանոնէն կխոտօրին, զոր օրինակ՝ միամօր, չեղոք, հինաւուրց, վատարանց .

Հ. Երբոր ածականն ու գոյականը բարդուին, մը առաջ կըդրուի .

Պ. Սովորաբար ածականը, քիչ անգամ գոյականը . զոր օրինակ՝ ծանրաձայն, շատախօս, յօժարակամ, յաղթանգամ . մոտահարուստ, կամայօժար, եւլն :

Հ. Բառերը միայն երկու պարզ բառէ կրարդուին .

Պ. Կան նաեւ երեք կամ չորս բառէ բարդուածներ, որ յատահար կըսուին . զոր օրինակ՝ ընդդիմամարտ, առառուածընդդէմ, առստուերագիր, ամանորաբեր, անաչառատես, եւլն :

Հ. Պարզ բառերը բարդուելով՝ գոյականն կլինին թէ ածական .

Պ. Սովորաբար ածական կլինին, մանաւանդ երբոր երկրորդը բայի կամ դերբայի զօրութիւն ունի . զոր օրինակ՝ արծաթասէր (արծաթ. սիրող), աշխարհագիր, մասկեր, եւլն . բայց երբ երկրորդ բառը բայի նշանակութիւն չունենայ՝ երկու գոյականէ բարդուածը գոյական կմնայ . զոր օրինակ՝ ժամանակակէտ, անձրեւաջուր, ջրշեղջ, եւլն :

Հ. Անեղական անունները ի՞նչ կանոնով կբարդուին.

Պ. Գրեթէ ամենն եւս եղակի կդառնան, զոր օրինակ՝ փառասէր, հրաշափառ, կամակար, մոտակորոյս, միամիտ, եւլու

ԵՐԹՆԵԾԻ ԽՆԵԽՑԾՆԵՐՈՐԴ.

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻԲ.

1. Ասէ Սաւուզ ցԴաւիթ.
գուցէ ոչ կարիցես երթալ
կոռուել ընդ այլազգւոյն,
զի դու մանուկ ես, եւ նա
այր պատերազմօղ ի ման-
կութենէ իւրմէ։ Ասէ Դա-
ւիթ։ Արածէր ծառայ քո
զխաշինս հօր իւրոյ ։ Եւ յոր-
ժամ գայր առիւծ կամ
արջ եւ առնոյր ոչխար ի հօ-
տէ անտի, ելանէի զհետ
նորա եւ հարկանէի զնա,
եւ կօրզէի ի բերանոյ նո-
րա. եւ եթէ յառնէր ի վե-
րայ իմ, ունէի զփողից նո-
րա եւ հարկանէի զնա։ Տէր
Աստուած, որ ապրեցոյց
զիս ի ձեռաց առիւծուն եւ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ.

1. Ասաց Սաւուզ Դաւ-
իթ։ կարելի է որ չկարենաս
երթալ կոռուիլ այլազգւոյն
հետ. վասն զի դուն տղայ
ես, իսկ նա պզտիկուց պա-
տերազմի վարժած։ Դաւիթ
ասաց թէ ծառադ իւր հօրը
ոչխարները կարածեցնէր.
ու երբօր առիւծ կամ արջ
գար ու ոչխար առնէր հօ-
տէն, ետեւէն կրնկնէի կը-
զարնէի, ու բերնէն ոչխա-
րը կքաշէի կհանէի. եւ թէ
որ իմ վերաս ելնէր, կըըռ-
նէի վզէն ու կսպաննէի։ Տէր
Աստուած որ ազատ պահեց
զիս առիւծին ու արջին ձեռ-
քէն՝ ինքը ողջ կպահէ զիս

արջոյն՝ նոյն ապրեցուացէ
զիս ի ձեռաց այլազգւոյն
անթլիփատին այնորիկ:

2. Ասէ Սաւուղ. Երթ,
եւ Տէր եղիցի ընդ քեզ:
Եւ զգեցոյց Դաւթի զվարա-
պանակս իւր, եւ սաղա-
ւարտ պղնձի ի գլուխ նո-
րա, եւ ագոյց նմա զրահս
եւ ած Դաւթի զօռւսեր իւր:
Եւ զթեաց ի գնալն մի ան-
գամ եւ երկիցս, եւ ասէ.
Ոչ կարեմ երթալ սոքօք, զի
չեմ հմուտ: Եւ հանին զայն
ի նմանէ:

3. Ա՛ռ Դաւիթ զցուալն
իւր ի ձեռին իւրում, եւ
ընտրեաց իւր հինգ քարի-
նըս ողորկս ի հեղեղատէն,
եւ եղ զնոսա ի հովուական
մախաղին յոր սովոր էր ըզ-
քարն ժողովել, եւ զպարսն
ի ձեռին իւրում, եւ մեր-
ձեցաւ առ այրն այլազգի:

Նաեւ այն անթլիփատ այ-
լազգւոյն ձեռքէն:

2. Սաւուղ պատաօխա-
նեց թէ գնա, Աստուած
Հետդ լինի: Հրամայեց որ
հագցընեն Դաւթի իւր
հիւսուած պղնձէ շապիկը,
եւ պղնձէ սաղաւարտը գը-
նեն գլուխը, զրահ հագցուց
Դաւթի եւ իւր թուրը կա-
պեց նորա մէջըը: Բայց Դա-
ւիթ երթալու ատենը մէկ
երկու անգամ ընկնելու
պէս եղաւ, ու ասաց. Չեմ
կրնար ասոնցմով քալել,
վասն զի վարժ չեմ: Ուստի
հանեցին վերայէն:

3. Դաւիթ ձեռքն առաւ
իւր գաւաղանը, ձորին մէ-
ջէնալ հինգ հատ սղորկ քար
ընտրեց, դրաւ զանոնք հո-
վուական տոպրակին մէջ՝
ուր որ սովորութիւն ունէր
քարերը ժողվելու, պարսա-
տիկնալ ձեռքն առաւու գը-
նաց մօտեցաւ այլազգւոյն:

4. Խըրեւ հայեցաւ այլ-
ազգին եւ ետես զԴաւիթ,
արհամարհեաց զնա եւ ա-
սէ. Զիանդ, շուն եմ ես, զի
ցպով եւ քարամբք գաս ի
վերայ իմ: Եւ ասէ Դաւիթ.
Նա եւ վատթար եւս ես քան
զշւն:

4. Երբ այլազգին նայե-
ցաւ ու տեսաւ Դաւիթը,
արհամարհեց զինքն ու ա-
սաց. Այդ ի՞նչ է, ես շուն
եմ որ գաւազանով ու քա-
րերով կուգաս վերաս: Դա-
ւիթ պատաօխանեց թէ շու-
նէն ալ աւելի անպիտան ես:

ԴԱՍ Բ.

ՀԱՑԲՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Գուցէ ոչ կարիցես կռուել ընդ
այլազգուցն.

Դու մանուկ ես և նա այր պատե-
րազմօղ.

Արածէր ծառայ քո զիսաշին հօր
իւրց.

Յորժամ գոյր առիւծ կամ արջ-
Առնցը ոչխար ի հօաէ անափ.

Ելանէի զիսա նորա.

Կորզէի զոշխարն ի բերանց նորա.

Ունէի զիսոյից առիւծուն.

Տէր Աստուած ապրեցցց զիս ի
ձեռաց արջոյն.

Ապրեցուացէ զիս ի ձեռաց այլազգ-
ոյն.

Երթ, և Տէր եղիցի ընդ քեզ.

Վախեմ թէ չես կրնար այլազգ-
ոյն հետ կռուիլ.

Դուն աղայ ես, իսկ նա պատերազ-
մի ոռվրած մարդ.

Մառադ իւր հօրը ոչխարները կա-
րածեցըներ.

Երբոր առիւծ կամ արջ գար,

Ոչխար առնէր հօտէն.

Ետէն կվազէի.

Ոչխարը նորա բերնէն կքաշէն
կառնէի.

Առիւծուն վզէն կրոնէի.

Աստուած ազատեց զիս արջուն
ձեռքէն.

Կազատէ զիս այլազգոյն ձեռքէն.

Գնա, Աստուած հետդ լինի:

Սաւուղ զգիցոց Դաւթի զվարա-
պանակն իւր.

Սաղաւարտ պղնձի ի զլուխ նորա-
Նզցց Դաւթի զրահս.

Ած նմա զսուսեր իւր.

Գթեաց Դաւթի ի դնալ.

Աւ կարեմ երթալ սոքօք.

Տեմ հմաւա.

Հանին զզրահսն ի նմանէ.

Առ Դաւթի զցուպն իւր ի ձե-
ռին իւրում.

Ընտրեաց հնդ քարինս ողորիս.

Եղ զքարինսն ի հովուական մա-
խաղին.

Սովոր էր զքարն ժողովել ի մա-
խաղն.

Առ զպարսն ի ձեռին իւրում.

Մերձեցաւ Դաւթի առ ոյրն ոյլ-
ազգի.

Նոյեցաւ ոյլազին և ետես զԴա-
փիթ.

Արհամարհեաց Գողիադ զԴաւթի.

Զիսարդ շնչն եմ ես.

Յզով և քորամբը դաս ի վերսց իմ:

Նա և վատթար ևս ես քան զցուն.

Սաւուղ իւր զմնուորական վերար-
կուն հազցուց Դաւթի.

Պղնձէ սաղաւարտ զրաւ զլուխը:

Զրահ հազցուց Դաւթի:

Իւր թուրը նորա մէջը կապեց:
Դաւթի քաղած ժամանակն ընկ-
նելու պէս եղաւ.

Չեմ կրնար ասոնցմով քալել:

Սովորած չեմ:

Զրահները վերսցէն հանեցին:

Դաւթի իւր զաւազանը ձեռքն ա-
ռաւ:

Հինգ հատ ողորկ քար ընտրեց:
Քարերը հովուական տօպրակին
մէջ զրաւ:

Սովորութիւն ունէր քարերը տօպ-
րակին մէջ ժողովելու:

Պարսատիկը (— էնը) ձեռքն ա-
ռաւ:

Դաւթի զնաց մօտեցաւ ոյլազգ-
ւոցն:

Այլազին նոյեցաւ ու տեսաւ
Դաւթիթը:

Գողիադ Դաւթիթը արհամարհեց:

Այլ ինչ է. միթէ ես շնչն եմ:

Դաւազանով ու քարերով կու-
զաս վերսց:

Մանաւանդ թէ շունէն ևս ցած ես:

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ըշման+.

Ընդ ում կռուելոց էր Դաւիթ.
Որպիսի՞ ոք էր Դաւիթ, և որպիսի
այլազդին.

Զի՞նչ արածէր Դաւիթ.
Ո՞ առնցը ոչեար ի հօտեն.
Զի՞նչ առնէր Դաւիթ.
Զի՞նչ առնէր զոշխարն.
Եւ զի՞նչ յորժամ յառնէն ի
վերոյ նորա.

Ո՞ աղբեցոց զնա ի ձեռաց առիւ-
ծուն և արջոյն.

Յոյր ձեռաց ևս յուսոյր թէ ապ-
րեցուցէ.

Որպիսի՞ բանիւք արձակեաց Սա-
ւուզ զԴաւիթ.

Զի՞նչ զզեցոց նման.
Զի՞նչ եղ ի զուսի նորա.
Զի՞նչ ազոյց նման.
Զի՞նչ Էած ընդ մեջ նորա.
Եւ զի՞ եղև ընդ Դաւիթ.
Քանիցո անգամ զմեռաց.
Ընդէր չկարաց երթալ նորօք.
Զի՞նչ հանին ի նմանէ.
Զի՞նչ էառ Դաւիթ ի ձեռին իւ-
րում.

Գ-ու-սկան+.

Ընդ Փղշտացւոյն.
Դաւիթ մանուկ էր, և նո այր պա-
տերազմող ի մանկութենէ իւր-
մէ.

Զիաշինս հօր իւրց.
Ասիւծ կամ արջ.
Ելանէր զչեա նորա.
Կորզէր ի բերանց առիւծուն:
Ունէր զփողից նոցա.

Տէր Աստուած:

Ի ձեռաց այլազգույն:

Երթ, ասէն և Տէր Եղիցի ընդ քեզ:
Զմարապանակս իւրի.
Սաղաւարա պղնձի:
Զրահս.
Զսուսներ իւրի.
Գմեռաց ի զնալն իւրի.
Մի անգամ և երկիցու
Զի չէր հմուտ:
Զզրահսն:
Զցուալն իւրի.

Զի՞նչ ընտրեաց ի հեղեղատէն.
Ա՞ւ եղ զքարինսն.
Ա՞ր սովոր եր զքարինսն ժողովն.
Զի՞նչ այլ ևս առ ի ձեռին.
Առ ո՞մերձեցաւ Դաւիթ.
Զա՞ն ետես այլազգին.
Ո՞րոգէս վարեցաւ ընդ նմա.
Եւ զի՞նչ ասաց ցնա.
Ընդէր շան նմանեցցց զանձն իւր.
Զի՞նչ արար նմա Դաւիթ պատասխանի.

Հինգ քարինս ողորկու:
Ի հովուական մախաղին:
Ի մախաղին:
Զպարսն:
Առ այլազգին Գողիազ:
ԶԴաւիթ:
Արհամարհեաց զնա:
Զի՞նըդ ասէ. շնչն եմ ես:
Զի ցպով և քարամիք երթայր Դաւիթ ի վերայ նորա:
Նաև վատթար ևս ես, ասէ, քան զշուն.

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ-

ԱՎԱՆՑՈՒՆՔ ԲԱԼԻՏ.

- Հ. Ածանցական բառերը որո՞նք են.
 Պ. Ածանցական կասուին այն պարզ կամ բարդ բառերը՝
 որ իրենց սկիզբը կամ վերջը, կամ երկու ծայրն եւս, ան-
 նշան մասնիկներ առնելով, իրենց նշանակութիւնը քիչ կամ
 շատ կփոխեն. զար օրինակ՝ գեղ բառէն կլինին այսպիսի
 ածանցականներ. տգեղ, տգեղութիւն, գեղանի, գեղեց-
 կութիւն, եւլն. կմաստառէր բառէն՝ անիմաստառէր, իմաս-
 տասիրութիւն, իմաստասիրել, եւլն.
 Հ. Բառերուն սկիզբը դրուող սովորական մասնիկները
 որո՞նք են.

Պ. Այս երեքը, ան, ու չ զոր օրինակ՝ անարի, անարատ,
աննենդ. տգեղ, տգետ, տկար. չքահանայ, յաղգ, չժողո-
վուրդ, եւլն:

Հ. Բառերուն վերջը գրուող ածանցական մասնիկները
քանի՞ են.

Պ. Խիստ շատ են, որ ընդարձակ Քերականութեանց եւ
Բառարանի մէջ կարելի է տեսնել:

Հ. Հաստատուն կանոններ կան բառերուն ածանցմանցը.

Պ. Ընդհանրապէս գրեթէ նոյն կանոններով կածանցին
բառերը իրարմէ՝ որոնցմավ եւ պարզ բառերը կրարդուին,
ոմանք կապող ձայնաւորով՝ եւ ոմանք առանց ձայնաւորի.
զոր օրինակ՝ առաքինի, առաքինական, առաքինութիւն. եր-
կին, երկնային, երկնաւոր. խաւար, խաւարին, խաւարային.
ընտանենամ, թշնամութիւն, եւլն:

ԵՐԹՆԵՐԻ ՀԱՇՆԵՐՈՒԹԻՒՆ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Նզովեաց այլազգին
զԴաւիթ դիօքն իւրովք եւ
ասէ ցնա. Եկ առ իս եւ տաց
զմարմին քո թռչնոց երկ-
նից եւ գաղանաց երկրի. Ա-
սէ Դաւիթ ցայլազգին. Դու

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Այլազգին իւր կուռ-
քերուն անունովը նզովեց
զԴաւիթն ու առաց անոր.
Եկ ինծի որ մարմինդ տամ
երկնքի թռչուններուն ու
երկրիս գաղաններուն. Դա-

դաս ի վերայ իմ սրով եւ
գեղարդեամբ եւ տսպարաւ,
եւ ես գամ ի վերայ քո ա-
նուամբ Տեառն զօրու-
թեանց ճակատուս Խորա-
յէլի՝ զօր նախատեցիր այ-
սօր:

2. Յարեաւ այլազգին եւ
եկն եւ մերձեցաւ ընդդէմ
Դաւթի. եւ Դաւիթ աճա-
պարեաց եւ ընթացաւ ընդ-
դէմ այլազգւոյն. ձգեաց
զձեռն իւր ի մախաղն, առ
անտի քար մի, եւ պարսա-
քարեաց' եհար զճակատ
այլազգւոյն. եւ եմուտ քա-
րըն ընդ սաղաւարտն ի ճա-
կատն, եւ անկաւ Գողիադ
ի վերայ երեսաց իւրոց յեր-
կիր.

3. Ընթացաւ Դաւիթ եւ
Հարաւ ի վերայ այլազգւոյն
եւ առ զնորին սուսեր, եւ
մերկաց զնա ի պատենից
իւրոց, եւ եհատ զգլուխն
Գողիադու. Խըրեւ տեսին

ւիթ պատասխանեց այլազ-
գւոյն թէ՛ Դու իմ վերաս
կուգաս թրով՝ նիզակով ու
վահանով, եւ ես կուգամ
քու վերադ այս Խորայէլա-
ցւոց բանակիս Աստուծոյն
անունովը, որ դուն այսօր
անարգեցիր:

2. Ոտք ելաւ այլազգին
ու մօտեցաւ Դաւթի. Դա-
ւիթ արտորաց ու վազեց
այլազգւոյն գէմ. Խօթեց
ձեռքը տօպրակը, քար մի
տռաւ անկից, նետեց պար-
սատիկուն ու զարկաւ այլ-
ազգւոյն ճակատին, սաղա-
ւարտէն անցաւ մտաւ քա-
րը ճակատը, եւ Գողիադ ե-
րեսի վերայ ընկաւ գետին:

3. Վազեց Դաւիթ, ելաւ
այլազգւոյն վերայ, տռաւ
նորա թօւրը, հանեց պա-
տենէն ու կտրեց Գողիադու
գլուխը, Երբոր տեսան այլ-
ազգիներն որ իրենց զօրա-

այլաղգիքն՝ թէ մեռաւ զօրաւորն նոցա, փախեան:

4. Եւ արք Խորայէլի աղաղակեցին եւ յարձակեցան զհետ նոցա մինչեւ ի դրունս Ասկաղօնի. Եւ անկան վիրաւորք այլաղգեաց զճանապարհայնն մինչեւ ցդրունս Ակկարօնի:

5. Խոկ Դաւիթ առ զգըլուխ այլաղգւոյն, եւ երեր յերուսաղէմ, եւ զգէն նորա եղ ի վանս իւրում: Եւ ելին պարաւորք ընդ առաջ Դաւիթի յամենայն քաղաքացն Խորայէլի՝ երգել պար առնուլ թմբկօք եւ ծնծղայիւք. Եւ նուագէին կանայք խաղալիկք եւ ասէին. Եհար Սաւուղ դհաղարս, եւ Դաւիթ զրիւրս:

ւորը մեռաւ, ձգեցին փախան:

4. Աղաղակեցին Խորայէլացիք ու վաղեցին նոցա ետեւէն մինչեւ Ասկաղօն քաղաքին դուռը՝ եւ այլաղգիներուն վիրաւորներն ընկան բոլոր ճանապարհին վերայ մինչեւ Ակկարօնի գոները:

5. Խոկ Դաւիթ առաւ այլաղգւոյն գլուխը ու բերաւ նրուսաղէմ, եւ նորա զէնքը դրաւ իրեն իջեւանը. Ելան պար բռնողները Դաւիթի առջեւը Խորայէլի ամեն քաղաքներէն՝ երգելով ու պարելով, թմբուկներով ու ծնծղաներով. Խաղացողինիկ մարդիկն ալ կերգէին ու կասէին. Սաւուղ ջարդեց հաղար հոգի, Դաւիթ տասը հաղար հոգի:

ՀԱՏԵՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Նզովեաց այլազդին շԴահթ դիօ-
քըն իւրովք.

Տաց զմարմին քո թռչոց երկնից.

Դու զաս ի վերայ իւր սրով և գե-
ղարդեամբ և ասպարաւ.

Ես զամ ի վերայ քո անուամբ
Տեառն զօրութեանց;

Յարեաւ այլազդին և մերձեցաւ
Ըսդդէմ Դաւթի.

Դաւիթ աճապարեաց և ընթացաւ
Ըսդդէմ այլազգւցն.

Զգեաց Դաւիթ զձեսն իւր ի մա-
խաղն.

Առ ի մախաղն քար մի.

Պարսպարեաց՝ եհար զճակատ
այլազգւցն.

Նմուտ քարն ընդ սաղաւարան ի
Ճակատն.

Անկաւ Դողիադ ի վերայ երեսաց
իւրոց յերկիր.

Հարաւ Դաւիթ ի վերայ այլազգւցն.

Առ Դաւիթ զնորին սուսեր.

Մերկաց զուսերն ի պատենից իւ-
րոց.

Եհատ զզււին Դողիագու.

Մեռաւ զօրաւորն այլազգեաց.

Այլազգին Դաւիթը նզովեց՝ իւր
կուռքերովը:

Մարմինդ երկնիքի թռչուններուն
ոյիսի տամ:

Դուն կուզաս վերաս թրով՝ նի-
զակով ու վահանով:

Ես կուզամ վերադ՝ Տեառն զօ-
րութեանց անունովը:

Ոտք ելաւ այլազգին ու առաջ ե-
կաւ դէպ Դաւթին:

Արտորաց Դաւիթ ու վազեց այլ-
ազգւցն գէմ:

Դաւիթ ձեռքը տօպրակին մէջ
խօթեց:

Քար մի տառ տօպրակէն,
Պարսպարիկը նեսեց զարկաւ այլ-
ազգւցն ճակատը:

Քարը Սաղաւարտէն անցաւ մնաւ
ճակատը:

Դողիադ երեսի վերայ զնորին ըն-
կաւ:

Աազեց Դաւիթ այլազգւցն վերայ,
Դաւիթ նորա թուրն առաւ.

Հանեց թուրը պատեանէն,
Այլազգիններուն ուժով մարդը մն-
առւ:

Դողիազին զլուխը կտրեց,
Այլազգիններուն ուժով մարդը մն-

Զի՞նչ արար այլազգին ի լուր բա-
նիցն Դաւթիւ.

Զի՞նչ զեաց Դաւթիւ ի վերայ այլ-
ազգւոցն.

Յա ձգեաց զձեռն իւր.

Զի՞նչ առ անահ.

Ա՞րաքէս եհար զ՞ողիադ.

Ա՞ր եմնւոտ քարն.

Զի՞նչ անկաւ այլազգին.

Զի՞նչ արար Դաւթիւ յանկանել
այլազգւոցն.

Զի՞նչ էառ ի նմանէ.

Զի՞ արար զսուսերն.

Զի՞նչ արար նովաւ.

Ա՞ր որ մեռաւ.

Զի՞նչ արարին յայնժամ այլազգիւքն.

Եւ զի՞նչ արիք նորոյէլի.

Մինչև ուր հալածեցն զայլազգին.

Ա՞ր անկան վիրաւողը նոցա.

Զի՞նչ էառ Դաւթիւ.

Ա՞ր երեր զայն.

Ա՞ր եղ զզէն նորա.

Ա՞լ ընդ առաջ Սաւուզայ և
Դաւթիւ.

Ուստի ելին պարաւողըն.

Եւ զի՞նչ առնէին.

Զի՞նչ առնէին կանայք նխաղալիկը.

Քանի՞ս ոմանս եհար Սաւուզ.

Եւ քանի՞ս Դաւթիւ.

Յարեաւ և մերձեցաւ ընդդէմ
Դաւթիւ.

Աձառաքարեաց և ընթացաւ ընդ-
դէմ նորաւ.

Ի մախաղն հովու ական.

Քար միւ.

Պարաքարեաց զնաւ.

Ընդ սաղաւարան եմուտ ի ճակա-
տըն Գողիադու.

Ի վերայ երեսաց իւրօց յերկիր.

Հարաւ ի վերայ նորաւ.

Զնորին առ աեր.

Եհաս նովաւ զզուսին Գողիադու.

Մերկաց զայն ի պատենից իւրօց.

Զօրաւորն այլազգեաց.

Փախեան.

Յարձակեցան զչես նոցաւ.

Մինչև ի դրունս Ասկաղընի.

Զձանազարհայնն.

Զզուսին Գողիադու.

Եերուսաղէմ:

Ի վանս իւրօւմ:

Պարաւորըն:

Յամմնայն քաղաքաց նորայէլի.

Երգէին՝ պար առնուին թմրկը և
ծնծղայիւք:

Նուազէին.

Զհազարս:

Զրիւրս:

ԴԱՍ Գ.

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԽՈՒԹՅԱՆ ԸՆՏ ԱԽԱՋՆՈՅ ՄԱՍԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ.

ՆԵՐԱԾՄԱԳ.—	բայ ներդ. սահմ. կատ. եղ. երրորդ. գէմ.
ԵՎԼԱՊՀԵՒՆ.—	բարդ անուն ած. գոյականի տեղ, եղ. ուղղ.
Օ. ԴԱՍ-ԷՒՆ.—	յատուկ անուն եղ. հայց.
ԴԵՇԴՆ.—	անուն գոյ. յոգն. գործ. վերջի և տառը գիմորոշ:
ԻՆԻ-ՇՆ.—	գերան. ստաց. յոգն. գործ:
ԵՇ.—	շաղկապ:
ԱՆԷ.—	բայ ներդ. սահմ. ներկ. եղ. երրորդ. գէմ.
ՑՆԱ.—	դերան. ցուց. եղ. տրակ:
ԵՒ.—	բայ չէղ. (դամ), հրամ. եղ. երկրորդ. գէմ:
ԵՐ- Է-.—	գերան. էակ. (Ե-), եղ. տրակ:
ՏԱՄ-.—	բայ ներդ. (դամ), սահմ. ապ. եղ. առաջին գէմ:
Օ. ՖԱՐԺԵՒՆ.—	անուն գոյ. եղ. հայց:
ԻԲ-.—	գերան էակ. (Ի-), եղ. սեռ:
ԹԻ-Ա-ԾՄԱԳ.—	անուն գոյ. ածանց. (ԹԻ-Ա-Ն), յոգն. տրակ.
ԵՐԵՒՆԵՐ.—	անուն գոյ. յոգն. սեռ:
ԳԱ-ԱՂԱՆԱԳ.—	անուն գոյ. յոգն. տրակ:
ԵՐԵՒԵՒ.—	անուն գոյ. եղ. սեռ:
ԴԱ-Տ-ԷՒՆ.-	յատուկ անուն, եղ. ուղղ:
ՑԱՅԼԱՊՀԵՒՆ.—	բարդ անուն ած. եղ. տրակ:
Դ-Ա-.—	գերան. էակ. երկրորդ. գէմ, եղ. ուղղ:
Գ-Ա-.—	բայ չէղ. սահմ. ներկ. եղ. երկրորդ. գէմ:

Ի ԱՐՄՅ.	նախագիր:
ԻՄ.	գերան. էակ. (ես), եղ. սեռ.
ՈՒՆԴ.	անուն գոյ. (ասուց), եղ. գործ:
ԳԵՂԱՐՔԵԱԺԸ	անուն գոյ. (գԵՂԱՐՔՆ), եղ. գործ:
ՍԱՊԱՐԱՆ.	անուն գոյ. եղ. գործ.
ԵՀ.	գերան. էակ. առաջին դէմ, եղ. ուզզ:
ԱՆԱՍԻ.	անուն գոյ. (անսուն), եղ. գործ:
ՏԵՐԱՆ.	անուն գոյ. (տէն), եղ. սեռ.
ՕՉՈՒՆԵԱՆց	ածանց. անուն գոյ. յոգն. սեռ.
ԵՒՆ.	

ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՒԴԻ

ԽՈՒՆՆԱԿ ՀԱՅՆԵՐՈՒԴԻ ՇԽԱՉՆԵՐՈՒԴԻ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Իբրեւ վախճանեաց Դաւիթ զիսօսելն ընդ Սաւուղայ, ոգի Յովնաթանու կապեցաւ ընդ ոգւոյն Դաւթի, եւ ոիրեաց զնա Յովնաթան ըստ անձին իւրում. մերկացաւ զլոդիկն որ զիւրեւ՝ եւ ետ զայն Դաւթի, եւ զվարապանակս իւր՝ մինչեւ ցսուսեր իւր եւ ցաղեղն եւ ցկամար իւր:

2. Եւ Սաւուղ կացոյց զԴաւիթ ի վերայ արանց պատերազմի, եւ հաճոյ եղեւ Դաւիթ առաջի ամենայն ժողովրդեանն. երթայր ամենայն ուրեք ուր եւ առաքէր զնա Սաւուղ, եւ իմաստութեամբ գործ կտեսնէր:

1. Սրբոր վերջացուց Դաւիթ Սաւուղին հետ խօսելը, Յովնաթանու սիրուղ կապուեցաւ նորա հետ, եւ Յովնաթան իւր անձին պէս սիրեց Դաւիթը. հանեց իւր վերայէն վերարկունու Դաւթի տուաւ, նոյնպէս եւս իւր զինուորական շապիկը՝ մինչեւ իւր թուրն ու ազեղն ու գօտին:

2. Իսկ Սաւուղ գրաւ Դաւիթը պատերազմի մարդոց գլուխ, եւ Դաւիթ բոլոր ժողովրդեան աչքը մըտաւ. ամեն տեղ՝ ուր որ Սաւուղ յուղարկէր՝ կերթար, եւ իմաստութեամբ գործ կտեսնէր:

3. Բայց Սաւուղ դյարեցաւ վասն բանին այնորիկ զոր պարաւորքն ասէին, եւ ասէ. Դաւթի ետօւն զբիւրըս, եւ ինձ ետօւն դշաղարըս. եւ արդ զի՞նչ պակասէ նմա՝ բայց եթէ թագաւորութիւնս. Եւ ընդ ակամք հայէր Սաւուղ ի Դաւթի:

4. Ի վաղիւ անդր հարաւ այս չար յԱստուծոյ ի վերայ Սաւուղայ, եւ մինչդեռ Դաւթիթ երգէր ձեռամբ իւրով, որպէս եւ հանապազն, ասէ Սաւուղ. Հարից կարեցից զԴաւթիթ գեղարդեամբս ընդ որմն. Եւ ձըգեաց զգեղարդն. բայց Դաւթիթ խոյս ետ յերեսաց նորա երկիցս:

5. Երկեաւ Սաւուղ յերեսաց Դաւթի, զի Տէր էր ընդ նմա, եւ ի Սաւուղայ վերացեալ էր. ի բաց արար զնա յիւրմէ, եւ կացոյց ըզնա իւր հազարապետ. եւ

3. Բայց Սաւուղայ գէշ երեւեցաւ այն խօսքն որ պար բոնողները կասէին. Դաւթի տասը հազար աըւմն, կասէր, ու ինծի հազար. ուրիշ ինչ բան կպակսի անոր, բայց եթէ այս իմ թագաւորութիւնս. Եւ սկըսաւ Սաւուղ ծուռ աչքավնայելու Դաւթի:

4. Երկրորդ օրը չար հոգի մի եկաւ Սաւուղի վերայ Աստուծոյ հրամանովը, այն միջոցին որ Դաւթիթքնար զարնելով կերգէր ինչպէս ամեն ժամանակ, ասաց Սաւուղ. Զարնեմ կարեմ Դաւթիթը պատին այս իմ նիզակովս. բայց Դաւթիթ երկու անգամ փախաւ ազատեցաւ:

5. Սաւուղ վախցաւ Դաւթին, վասն զի Աստուծնորա հետ էր, ու Սաւուղէն վերացած էր. հեռացուց զինքը քովին, եւ հազարապետ դրաւ. Եւ բոլոր իս-

ամենայն Խօրայէլ սիրէք
զԴաւիթ։ Եւ ետ Սաւուղ
զՄեղքող դռւստր իւր Դաւ-
թի կնութեան, զի եղիցի
նմա ի գայթակղութիւն։

բայէլացիք կոիրէին զԴա-
ւիթ։ Յետոյ Սաւուղ իւր
Մեղքող աղջիկը ամսւօին
տուաւ Դաւթի՝ որ որոգայթ
լարէ անոր։

ԳԱՅՈՒՄ

ՀԱՅԸՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Վախճանեաց Դաւիթ զիսօսելն ընդ
Սաւուղաց։

Ոզի Յովեաթանու կապեցաւ ընդ
ոգոյն Դաւթի։

Սիրեաց զնա ընդ անձին իւրում։

Մերկացաւ զրօդիկն որ զիւրեւ։

Ետ Դաւթի զվարապանակս իւր։

Սաւուղ կացոյց զԴաւիթ ի վերայ
արանց պատերազմի։

Հաճոյ եղև Դաւիթ առաջի ամե-
նայն ժաղավարքեան։

Ամենայն ուրեք ուր և առաքեք ըդ-
նա Սաւուղ։

Երթայր Դաւիթ և իմաստնանայր։

Սաւուղ զչարեցաւ վասն բանին
պյնորիկ։

Վասն բանին զոր պարաւորքն ա-
սէին։

Դաւիթ Սաւուղի հետ խօսիլը վեր-
ջացուց։

Յովեաթանու սիրու Դաւթին հետ
կասպուեցաւ։

Իւր անձին պէս սիրեց զնուքը։

Վերայի վերարկուն հանեց։

Տուաւ Դաւթի իւր զնուուրական
շապիկը։

Սաւուղ զրաւ Դաւիթը պատե-
րազմական մարդկանց դլուիւ։

Դաւիթ բոշոր ժողովրդեան աշխը-
մուաւ։

Ամն տեղ՝ ուր որ Սաւուղ զին-
քը յուղարկեր։

Դաւիթ քանի կերթար՝ աւելի ի-
մաստուն կլինէր։

Սաւուղ պյն խօսքին համար խիստ
բարկացաւ։

Այն խօսքին համար որ պար լըռ-
նողները կասէին։

Դաւթի ետուն զբիւրու և ինձ ե-
տուն զհազարս.

Զի՞նչ պակասէ նմա, բայց եթէ
թագաւորութիւնս.

Ընդ ակամք հայէր Սաւուղի Դա-
ւթի.

Հարաւ ոյս չարի վերոյ Սաւու-
ղոյ.

Մինչզեռ երգեր Դաւթի.

Երգէր Դաւթի ձեռամբ իւրով.

Հարից կարեցից զԴաւթի գեղար-
գամբս ընդ որմն.

Զգեաց Սաւուղ զգեղարդն.

Խոյս ետ Դաւթի և զերծաւ.

Նրկեաւ Սաւուղ յերեսաց Դաւթի.
Տէր էր ընդ նմա.

Տէրի ի Սաւուղայ վերացեալ էր.

Սաւուղի բաց արար յիւրմէ ըդ-
Դաւթի.

Կացչց Սաւուղ զԴաւթի իւր հա-
զարապես.

Ամենայն Խորսցէլ սիրէր զԴաւթի.

Ետ Սաւուղ զշուար իւր Դաւթի
կնութեան.

Զի եղիցի նմա դուսար իւրի զայ-
թակդութիւն.

Դաւթի տուին տասը հազար, և
ինծի միայն հազար:

Ի՞նչ կպակսի մնոր՝ բայց եթէ
թագաւորութիւնս:

Սաւուղ ծուռ աշքով կնոյէր Դա-
ւթին,

Չար հողի եկաւ Սաւուղի վերոյ:

Երբոր Դաւթի երգելու հետ էր:

Դաւթի ձեռովով կերգէր:

Զարնեմ կարեմ Դաւթի նիզա-
կովս պատին:

Սաւուղ նիզակը նետեց:

Մէկդի քաշուեցաւ Դաւթի ու
փախաւ:

Սաւուղ Դաւթի վախցաւ:

Աստուած նորա հեռան էր:

Աստուած Սաւուղն հեռացած էր:

Սաւուղ Դաւթի քովն հեռա-
ցաւ:

Սաւուղ Դաւթի իրեն հազար-
պես զրաւ:

Բոլոր Խորսցէլացիք Դաւթի կա-
րենն:

Սաւուղ իւր աղջիկը Դաւթի կին
տուաւ:

Որպէս զի իւր աղջիկը նորա զըլ-
խուն փորձանք բերէ:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆՆ.

Հ-ՀՀՀՀ-Հ-Հ.

ԶԲՄՆԸ Վախճանեաց Դաւիթ.

ԶԲՄՆԸ Եղև ընդ Յովաման.

Ո՞րպէս սիրեաց Յովաման զԴա-
ւիթ.

ԶԲՄՆԸ մերկացաւ.

ԶԲՄՆԸ Ետ Յովաման Դաւիթի.

Յոր դործ կացոյց Սաւուղ զԴա-
ւիթ.

Առաջի ցը հաճոյ Եղև Դաւիթ.

Ո՞ր երթայր Դաւիթ.

Ո՞րպէս վարէր Դաւիթ ամենայն
ուրեր.

ՅԲՄՆԸ միտս Եղև Սաւուղ զԴաւիթէ.

Վասն Էր զչարեցաւ.

ԶԲՄՆԸ ասէր թէ ետուն Դաւիթի
և ինքնեան.

ԶԲՄՆԸ պակասել ասէր Դաւիթի.

Ո՞րպէս հոյէր Սաւուղ ի Դաւիթ.

ԶԲՄՆԸ հարաւ ի վերայ Սաւուղայ.

ԶԲՄՆԸ առնէր յայնժամ Դաւիթ.

Ո՞րպէս երգէր.

Դ-Հ կամք Սաւուղ հարկանել
զԴաւիթ:

Պ-Պ-Պ-Պ-Պ-Պ.

Զիսօսելն ընդ Սաւուղայ:

Ոդի նորա կապեցաւ ընդ հոգի ցն
Դաւիթի:

Ըստ անձին իւրում:

Զ-Զ-Զ-Զ-Զ-Զ-Զ.

Զ-Զ-Զ-Զ-Զ-Զ-Զ.

Կացոյց զնա ի վերայ արանց պա-
տերազմի:

Առաջի ամենայն ժողովրդեանն:

Ամենայն ուրեր՝ ուր և առաքէր
զնա Սաւուղ:

Կմաստնանայր:

Զչարեցաւ:

Վասն բանին զոր պարաւորքն ա-
սէին:

Թէ Դաւիթի ետուն ըիւրա և ին-
քեան հազարա:

Զթագաւորութիւն իւր:

Ընդ ակամի:

Այս չար յԱստածոյ:

Երգէր առաջի Սաւուղայ:

Զեռամի իւրով:

Կեղարգեամբն:

ԶԲՌՆՀ ձգեաց.

ԶԲՐ արար Դաւիթի՛.

Յումմէն երկեաւ Սաւուղ.

Ո՞ էր ընդ Դաւիթի.

Ո՞րպէս էր Տեառն ընդ Սաւուղայ.

ԶԲՌՆՀ արար Սաւուղ զԴաւիթ.

ՅԲՌՆՀ կացցց զնա.

Ո՞ սիրէր զԴաւիթ.

ԶԱՌ ետ Սաւուղ Դաւիթի ինու-
թեան.

ՅԲՌՆՀ միտ ետ Սաւուղ Դաւիթի
զզուսար իւր.

ԶԲՌՆՀ անուն էր զտաերն Սաւու-
ղայ.

Զգեղարդն:

Խօս ետ և զերծաւ.

Եերեսաց Դաւիթի:

Տէր.

Գերացեալ էր ի նմանէ.

Ի բաց արար զնա յիւրմէ.

Հազարապետ իւր.

Ամենայն Խօսայէլ.

Զգուստը իւր.

ԶԻ եղիցի նա Դաւիթի ի գայթակ-
դութիւն:

Մեղքող.

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ՄԱՍ Բ.

ԵՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԱՆՑ ԲԱՆՆ.

ԱՆՈՒՆ ԲԱՆԻ ԵՎ ԲԱՑ.

Հ. Ի՞նչ է շարադրութիւնը.

Պ. Շարադրութիւն կըսուի բառերուն կանոնաւոր կեր-
պով իրարու քով դրութիւր՝ որ բան կամ իմաստ ձեւանայ:

Հ. Շարադրութեան մէջ գիտելու գլխաւոր մասունքը ո-
րո՞նք են.

Պ. Անուն կամ Տէր բայի, բայ եւ խնդիր, խնդիր ան-
ուանց, Անուն յատկացուցիչ եւ յատկացեալ, Անուն բացա-

յայտից եւ բացայացտեալ, Անուն ածական եւ գոյական,
Յարաբերական դերանուն, Դիմորոշ յօդք, եւ Նախդիրք:

Հ. Բային անունը կամ տէրը մըն է.

Պ. Այն բառն որ կցուցընէ թէ այս ինչ բանն ընողը կամ
եղողը ով է կամ ինչ է. զոր օրինակ՝ ծառ բարի՝ պտուզ
բարի առնէ: Տողար առ արմին ծառոց դնէ: Խորեւ Յուշէն
երազ: Օ՞նաւ Մուշէն, եւլին:

Հ. Դիմաւոր բային տէրը կամ անունը ի՞նչ հոլով կդրուի.

Պ. Ուզզական. զոր օրինակ՝ Անձուկ է դուռնոն, եւ նեղ՝
ժոհապարհն որ դանչ ի կեանս, եւ առիտու նու ոչ դանչն զնա:
Ես ընդէցէ զձեզ: Ենունս մեր ճառացչ ժամանակաւ:

Հ. Բայը ի՞նչպէս կդրուի.

Պ. Թուով եւ դիմօք անունին համաձայն. զոր օրինակ՝
Զփառո իմաստունք ժառանձնուցին:

Հ. Կրբոր անուն բային անեղական է, բայը ի՞նչ թուով
կդրուի.

Պ. Սովորաբար յոգնակի. զոր օրինակ՝ բարձր էն երիւնաւ,
խոր էն դժոխւ: Յաշէցէն մանկուի եւ խաղացչն:

Ծաճօր.—Թէ այս կանոնաց և թէ հետադայ կանոններուն օրինակներ պէտք
է գտնեն աշակերտը իրենց արդէն սովորած բնադիրներուն մէջ, եւ վարժա-
պետին ցուցընեն զրով կամ խօսքով: — Այս կրթութեամբ շատ կդիւրանայ ա-
շակերտաց կանոնաւոր պարզ և ընտիր շարադրութիւն սովորիլը:

ԵՐԱՌԱՋԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՐԱՐԻ

ԴԱՅ Ա.

ԲՆԱԳԻՒՐ.

1. Եւ յաւել եւո Սաւուղ խնդրել հարկանել զԴաւիթ, եւ նա խուսեաց, ել եւ գնաց եւ զերծաւ։ Ի գիշերին յայնմիկ առաքեաց Սաւուղ հրեշտակս ի տուն Դաւթի՝ պահել զնա, զի սպանցէ զնա ընդ առաւօտըն։ Եւ պատմեաց Դաւթի Մեղքող կին իւր, եւ իջոյց զնա ընդ պատուհանն փախեաւ գնաց եւ ապրեաց։

2. Եւ առ Մեղքող պաճուճապատանո՛ եւ եղ ի վերայ մահնացն, եւ լեարդ այծեաց եւ կծիկ մաղոյ եղ իսնարէ, եւ ծածկեաց հանդերձիւ։ Առաքեաց Սաւուղ հրեշտակս՝ ունել զԴաւիթ, եւ ասեն թէ խօթ է, Ասէ հանէք զնա մահնօքն առիս, եւ սպանից զնա։

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Ուրիշ անգամ նորէն ուղեց Սաւուղ Դաւիթը զարնել, իսկ նա մէկդիք քաշուեցաւ, ելաւ գնաց ազատեցաւ։ Այն գիշերը մարդիկ յուղարկեց Սաւուղ որ Դաւթի տունը պահպանեն, եւ առաւօտուն մեռցընէ զինքը։ Դաւթի կինը Մեղքող հասկցուց անոր, եւ իջեցուց զինքը պատուհանէն փախաւ գնաց ազատեցաւ։

2. Իսկ Մեղքող խումաճիկ (Պէլլն, շինծու մարդ) առաւ, դրաւ անկողնին վերայ, գլխուն կողմն ալ այծու լերդ ու մազի կծիկ, եւ վերան հագուստով ծածկեց։ Մարդիկ յուղարկեց Սաւուղ որ Դաւիթը բռնեն. ասին թէ հիւանդ է։ Պատասխանեց թէ անկողնովը մէկտեղ բերէք ինծի որ սպաննեմ։

3. Եկին հրեշտակըն, եւ
ահա պաճուճապատանքն ի
վերայ մահճացն, եւ լեարդ-
այծեաց եւ կծիկ մազոյ ի
սնարօն։ Ասէ Սաւուզ ցը-
Մեղքող. ընդէ՞ր այսպէս
խաբեցեր զիս եւ արձակե-
ցեր զթշնամին իմ։ Եւ ասէ
Մեղքող. Խնդն ասաց թէ
արձակեա զիս, ապա թէ
ոչ՝ սպանանեմ զքեզ։

4. Եւ եկն Դաւիթ առ
Սամուէլ յԱրիմաթեմ, եւ
պատմեաց նմա զամենայն
ինչ զոր արար նմա Սաւուզ։
Ապա չոգաւ առ Յովնաթան
եւ ասէ. Զի՞նչ արարի, կամ
զի՞նչ զնաս է իմ, եւ զի՞նչ
մեղայ առաջի հօր քոյ՝ զի
խնդրէ զանձն իմ։

5. Ասէ ցնա Յովնաթան.
Քաւ քեզ, ոչ մեռանիցիս.
զի ահա ոչ առնէ հայր իմ
բան մի մեծ կամ փոքր՝ զոր
ոչ յայտնէ յունկն իմ. եւ

3. Եկան յուղարկուած
մարդիկը, տեսնեն որ ան-
կողնին վերայ խումաճիկ է,
գլխուն կողմն ալ այծու
լերդ եւ մազի կծիկ։ Սաւուզ
ասաց Մեղքողին. ինչո՞ւ
այսպէս խաբեցիր զիս ու
իմ թշնամիս թաղուցիր որ
փախչի. Մեղքող պատաս-
խանեց թէ ինքն ասաց ին-
ծի որ արձրկէ զիս, ապա
թէ ոչ՝ կսպաննեմ զքեզ։

4. Գնաց Դաւիթ Սամու-
էլին՝ Արիմաթեմ քաղաքը,
եւ ինչ որ արած էր իրեն
Սաւուզ՝ ամենն ալ պատ-
մեց։ Յետոյ զնաց Յովնա-
թանին ու ասաց. ի՞նչ եմ
արած, կամ ի՞նչ է յան-
ցանքս, ի՞նչ մեղք գործեր
եմ հօրդ առջեւն որ զիս
մեռցընել կուզէ։

5. Յովնաթան պատաս-
խանեց. Քաւ լիցի, չես մեռ-
նիր. ինչու որ հայրս բան
մի յաներ՝ ոչ մեծ եւ ոչ փո-
քըր՝ որ ինծի չիմացընէ.

զիմբրդ իցէ զի թաքուցա-
նիցէ հայր իմ յինէն զբա-
նըդ դայդ չէ այդպէս:

ուրեմն ի՞նչպէս կարելի է
որ ծածկէ ինձմէ հայրս այդ
բանը այդպէս չէ:

ԴԱՍ Բ.

ՀԱՏԵՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

Խնդրել յաւել Սաւուղ հարկա-
նել զԴաւիթի.

Խռասեաց Դաւիթ և զերծաւ.

Ի զիշերին յայնմիկ.

Առաքեաց Սաւուղ հրեշտակս ի
տուն Դաւիթի.

Կամէր սպանանել զնա ընդ առա-
ւան.

Մեղքող իջսց զԴաւիթ ընդ պա-
տուհանն.

Դաւիթ փախեաւ զնաց և ազ-
րեաց.

Եղ Մեղքող ի վերայ մահճացն
պաճու ճապատանս.

Եղ ի սնարէ լեարդ այծեաց և կը-
ծիկ մազոյ.

Մածկեաց զպաճու ճապատանս
հանգերձիւ.

Ասեն հրեշտակքն ցՍաւուղ թէ
Դաւիթ խօմէ է.

Հանէք զԴաւիթ մահճաքն առ խ-

նորէն զարնել ու զեց Սաւուղ
Դաւիթի.

Մէրդի քաշուեցաւ Դաւիթ ու ա-
զատեցաւ.

Այն զիշերը.

Սաւուղ մարդիկ յաւղարկեց Դաւ-
իթ տունը.

Առաւօտուն սպաննել կու զէր զին-
քը.

Մեղքող պատու հանէն իջեցուց
Դաւիթը.

Դաւիթ գրախաւ զնաց ու ազատե-
ցաւ.

Մեղքող անկողնին վլրոյ խումա-
ճիկ զրաւ.

Գլխուն կողմը զրաւ այծու լերդ և
մազէ կծիկ.

Խռասեաւ հազուսառի ծածկեց.

Մարդիկն ասին Սաւուղի թէ Դա-
ւիթ հիւանդ է.

Անկողնովը մէկտեղ ինձի բերէք
Դաւիթը.

Ընդէր այսպէս խարեցիր զիս.
Ընդէր արձակեցիր զմշնամին իմ:
Ինքն առաց թէ արձակեն զիս.
Առա թէ ոչ՝ սպանանեմ զբեղ.
Եկն Դաւիթ առ Սամուել յԱրի-
մամեծը.

Պատմաց Սամուելի զամնայն ինչ.
Զամնայն ինչ զոր արար նմա
Սաւուղ.

Չոգաւ Դաւիթ առ Յովաննան.
Զի՞նչ արարի կամ զի՞նչ վնաս
է իմ.
Զի՞նչ մեղայ առաջի հօր քոյ.
Հայր քո Սաւուղ ինդրէ զանձնիմ.
Քաւ քեղ, ոչ մռանիցիս.
Ոչ առնէ հայր իմ բան մի մեծ
կամ փոքր.
Ոչ յայտնէ յունին իմ.
Զի՞արդ իցէ զի թաքուցանիցէ յի-
նէն հայր իմ զբանդ զոյդ.
Չէ այլպէս.

Խնչու այսպէս խարեցիր զիս:
Խնչու արձակեցիր իմ թշնամիս:
Խնչն առաց թէ արձակէ զիս:
Առա թէ ոչ՝ կմնացընեմ զբեղ:
Դաւիթ Սամուելի քովն եկաւ
Արիմանինմ քաղաքն:

Ամեն բան պատմեց Սամուելի:
Խնչ որ Սաւուղ իրն արած էր:
Դաւիթ Յովաննան քով զնաց:
Խնչ արեր եմ; կամ յանցանիս
ի՞նչ է,
Խնչ մեղք արած եմ հօրդ առջևը:
Հայրդ Սաւուղ հոգիս առնել կու զէ:
Քաւ լիցի, չես մռանիր,
Հայրս բան մի չաներ՝ ոչ մեծ և
ոչ փոքր.
Զիմացըներ ինծի:
Խնչպէս կարելի է որ պահէ ինձէ:
Հայրս այդ բանը:
Այդպէս չէ:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ՀՀՀՀՀՀՀՀ.

Զի՞նչ յաւել ինդրել Սաւուղ.
Զի՞նչ արար Դաւիթ.
Երբ առաքեաց Սաւուղ հրեշտա-
կըս ի տուն Դաւիթի.

Գ-Գ-Գ-Գ-Գ-Գ-

Հարկանել զԴաւիթ.
Խուսեաց և զերծաւ
Ի զիշերին յայնմիկ:

Զա՞ առաքեաց.

Առ ի՞նչ առաքեաց հրեշտակա.

Եւ առ ի՞նչ առար պահել զառան.

Զի՞նչ արար Մեղքող.

Եւ զի՞նչ Դաւիթ.

Զի՞նչ եղ Մեղքող ի վերայ մահ-
ճացն.

Եւ զի՞նչ ի սնարէ.

Ի՞ւ ծածկեաց զպաճու ճապատան-
սըն.

Զի՞նչ ասացին հրեշտակըն Սա-
ւուզայ զԴաւիթէ.

Ի՞ւ ասաց Սաւուզ հանել զԴա-
ւիթ առ նա.

Զի՞նչ եհարց Սաւուզ ՅՄեղքող.

Զա՞ր յանցանու եղիս ի նմա.

Ո՞ւ ասաց ասէր, արձակել.

Ասա թէ ոչ.

Առ ո՞ւ եկն Դաւիթ և ուր.

Զի՞նչ ասաց ցնա.

Զի՞նչ պատմեց Սամուելի.

Առ ո՞ւ չողաւ անտի Դաւիթ.

Զի՞նչ եհարց ցնա.

Ո՞յր առաջի հարյաներ թէ մեղաւ.

Զի՞նչ առներ Սաւուզ.

Զի՞նչ քաջակերեաց Յովաթան
զԴաւիթ.

Զի՞նչ ասաց թէ ոչ առնէ հոյրն
իւր.

Ո՞ւմ յայտներ Սաւուզ զամնայն
թնչ.

Հրեշտակն:

Պահէլ զնա և զտունն:

Զի սպանցէ զնա ընդ առաւուն:

Իջոց զԴաւիթը ընդ պատուհանն:

Փախեաւ և ապրեաց:

Պահու ճապատանս:

Լեարդ այծեայց և կծիկ մողոյ:

Նանդիբաժիւ:

Թէ իրութ է:

Մահճարն հանդերձ:

Բնդէր ասէ խորիցեր զիս:

Զի արձակեաց զթշնամին իւր:

Ինքն ասաց, ասէր:

Սոյանանեմ զքեզ, ասէ:

Առ Սամուելը յԱրիմովթեմ:

Պատմեաց զամնայն:

Զա՞ր ի՞նչ արար նմա Սաւուզ:

Առ Յավեթան:

Զի արարի, ասէ կամ զի՞նչ վը-
նաս է իմ:

Առաջի հօր նորա:

Խնդրէր զանձն Դաւիթի:

Քաւ քեզ, ասէ ոչ մեռանիցիս:

Մեծ կամ փոքր:

Յունին իւր:

ԻՄ իմբ ոչ հաւատայր Յովեա.
Բան.

Եւ զիամրդ միատեղ.

Թէ թաքրուցանիցէ Սաւուղ զբա-
նըն զայն:
Ոչ ուշողէս, առէր:

ԴԱՍ Դ.

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԱՆՈՒՆ ՏԱՅԻ ԵՒ ՏԱՅ.

Հ. Անուն բային երբ կղրուի սեռական հոլովով.

Պ. Սովորաբար սեռական կղրուի՝ երբոր քովինը անորիշ
եւ անցեալ գերբայ է. զոր օրինակ՝ մինչ նաուին ծանչիւ յա-
լեաց անտի:

ՅԵՌՆԵԼ դիւխն խօսեցաւ համրն:

ՏԵՌԵԱԼ Յէսուսի զհաւատս նոցա:

Հ. Անուն բային տրական հոլովով կրնաց գրուիլ.

Պ. Այս, երբոր ինքը գերանուն է կամ միջակ անուն, եւ
քովինը անորիշ գերբայ. զոր օրինակ՝ երիալ անցանել ինչ
յաշխարհ իմ:

Ընտրեաց զմեղ՝ լինել մեղ սուրբս եւ անարատս:

ԴՐԱՆԴԻԵԼ ի քէն էից ի սոցանէ՝ չառնում յանձն:

Հ. Ինչո՞ւ համար կըսուի, Յարդարանալ իմ. յերիալը +ու. չ
ձնանիւն Յէսուսի, եւլին:

Պ. Ասոնց մէջ անորիշ գերբայը անունի տեղ առնուած է:

Հ. Երբոր անորիշ գերբայը էական բային եղակի երբորդ
դէմին հետ դրուած է, անուն բային ի՞նչ հոլով կղրուի:

Պ. Սովորաբար սեռական. զոր օրինակ,

Իմ, +ու, Եոր կամ նորս ուեսեալ է, ուեսեալ էք, ուեսեալ էցէ.
Զի՞նչ գործ գործեալ է +ու:
Չէ+ Եւեսեալ քեզ Ասդուշոյ:
Նոցա թէ յէք զմանուկն ուեսեալ:
Զի ուսեալ բնաւ չվէ:

ՅՈՒՆԵԾԿ ԳՈՅՆԵՐՈՐԴ ԱՐՐԱՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Յովնաթան երդմնեցց զԴաւիթ առ օէք նորա, եւ ասէ. վաղիւ ամսամուտ է, եւ խնդրեսցի աթոռ քուարդ գու եկեսցես եւ թաքիցես ի գաշտի աստ, եւ եօ երեքինեցից վփնօք յորս՝ ձգել յամատտարայն, եւ եթէ ասացից ցպատանեակըն, ի քէն եւ այսր է վփինըն, եկեսջիր, զի խաղաղութիւնն է քեզ, Ապաթէ ասացից ցպատանին, ի քէն եւ անդր է վփինն, զնասջիր, զի արձակեաց զքեզ Տէր.

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Յովնաթան երդուքնեցուց Դաւիթը իւր սիրոյն վերայ, եւ յետոյ ասաց. վազը ամսագլուխ էւ եւ քուտեղդ կհարցուի. ուստի դուն եկ ու պահուըտէ այս գաշտիս մէջ. ես երեք անգամ նետ կնետեմ՝ իբր թէ որսի վերայ, որ նպատակին զարնեմ, թէ որ ասեմ տղղուն՝ թէ քեզնէ ասդին էնէտը, եկ, վասն զի հանգըստութիւնն է քեզի. իսկ թէ որ ասեմ տղուն թէ նետը քեզնէ անդին է, զնա,

2. Իբրեւ եհաս ամսամուտն, եմուտ արքայի սենեակն ուտել հաց, եւ նըստաւ յաթոռ իւրում յորմայեցն, եւ Աքեններ նստաւ ի կողմանէ Սաւուղայ: Ասէ Սաւուղ ցՅովնաթան: Զի՞ն է զի ոչ եկն որդին Յեսեայ ի սեղանս:

3. Ասէ Յովնաթան: Հըրաժարեաց յինէն երթալ ի Բեթղահէմ քաղաք իւրզի զոհ է, ասէ, ցեղին մերոյ ի քաղաքին: Բարկացաւ Սաւուղ ի վերայ Յովնաթանու եւ ասէ: Ես ոչ գիտեմ զի դաշնաւոր ես զու որդւոյն Յեսսեայ: արդ առաքեա կալ զպատանին, զի որդի մահու է նա:

4. Յովնաթան ասէ: ընդէջ մեռանիցի: զի՞նչ գոր-

ասելէ թէ Աստուած արձը-կեր է զքեզ:

2. Ամսագլուխն որ եկաւ, թագաւորը սենեակը մտաւ կերակուր ուտելու, եւ իւր աթոռը նստաւ պատին կութընած, Աքեններն ալ նստաւ Սաւուղին մէկ կողմը: Հարցուց Սաւուղ Յովնաթանու թէ Այս ի՞նչ է որ Յեսսէի որդին սեղան չեկաւ:

3. Յովնաթան պատասխանեց: Ինծմէ բաժնուեցաւ որ երթայ Բեթղահէմ: իւր քաղաքը, վասն զի մեր ցեղը զոհ ունի, ասաց, այն քաղաքին մէջ, Բարկացաւ Սաւուղ Յովնաթանու վերայ եւ ասաց: միթէ ես չեմ գիտեր որ դուն խօսք գրած ես Յեսսէի որդւոյն հետշուտ, մարդ յուղարկէ բըռնէ զինքը, վասն զի մահապարտ է նա:

4. Պատասխանեց Յովնաթան: ինչո՞ւ պիտի մեռ-

ծեաց: Վերացոյց Սաւուղ զգեղարդն ի վերայ Յովնաթանու՝ սպանանել զնա, եւ դիմեաց Յովնաթան ի սեղանոյ անտի արտաքս բարկութեամբ, եւ ոչ եկեր յաւուր յայնմիկ հաց, զի բեկաւ վասն Դաւթի, եւ վճարեաց վասն նորա հայր իւր:

Նի, ի՞նչ արաւ: Վեր վերցուց Սաւուղ նիզակն որ զարնէ մեռցընէ զՅովնաթան բայց նա վազեց գուրս ելաւ սեղանէն բարկութեամբ, եւ այն օրը բան չկերաւ, վասորն զի սիրտը կոտրեցաւ Դաւթի համար, որովհետեւ հօրը կողմանէն նորա բանը վերջացած էր:

ԳԱՍՏ.

ՀԱՏԼՆՑԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ:

Յովնաթան երդմեցոյց զԴաւիթ.

Վաղին ամսամուտ է.

Խոզեցի ամոռ քո.

Եկեսցես և թաքիցես ի դաշտի աստ.

Երեքնեցից փընք յորս.

Ի քն և այսր է փընն.

Խաղաղութիւն է քեզ.

Ի քն և անդր է փընն.

Գնաշիրո զի անտիեաց զքեզ Տէր.

Դրեւ եհաս ամսամուտն.

Եմուս Սաւուղ ի սենեակն ուտել հաց.

Յովնաթան երդում անել առաւ Դաւիթի:

Վաղը ամսաղընին է:

Տեղդ պիտի փնտառուի.

Եկ պահուըտէ այս դաշտիս մզ.

Երեք անզամ նետ ինեսեմ որսի վերաց:

Քեզնէ ասղին է նետը.

Բանդ աղէկ է.

Քեզնէ անդին է նետը:

Գնա, վասն, զի Աստուած արձը կեր է զքեզ:

Երբոր հասու ամսաղըւխը:

Սաւուղ սենեակը մասւ՝ հաց ու ակու:

Նստաւ արբաց յոմսոս իւրում
յարմայեցն.

Արձններ նստաւ ի կողմանէ ար-
քայի.

Զի՞ է զի ոչ եկն Դաւիթ ի սե-
ղանս.

Հրաժարեաց յինէն երթալ ի
Իեղահէմ.

Զահ էր ցեղին իւրց ի քաղաքին.
Բարկացաւ Սաւուղ ի վերայ Յով-
նաթանու.

Ես ոչ զիտեմ զի դաշնաւոր ես
դու Դաւիթի.

Առաքեա կալ զպատանին.

Որդի մահու է նա.

Ընդէլ մեռանիցի.

Զի՞նչ գործեաց.

Վերացոց Սաւուղ զգեղարդն ի
վերայ Յովնաթանու.

Դիմաց Յովնաթան ի սեղանց
անտի արտաքս.

Ոչ եկեր յաւուր յայնմիկ հաց.

Ինկաւ Յովնաթան վասն Դաւիթի.

Վճարեաց վասն Դաւիթի հոյրիւր:

Թագաւորը իւր աթոռը նստաւ՝
պատին կոթնած.

Արձնները նստաւ թագաւորին մէկ
քովու.

Խշու համար Դաւիթ սեղան չե-
կաւ պյառը.

Մնաս բարով ըստու ինծի, որ եր-
թայ Իեղահէմ.

Իւր ցեղը զոհ ունէր քաղաքին մէջ,
Սաւուղ Յովնաթանու վերայ բար,
կացաւ.

Միթէ ես չեմ զիաեր որ խօսք զը-
րած ես Դաւիթի չետ.

Մարդ յաւզարիկ բռնէ աղան.

Մահապարս է նա.

Ինչու պիտի մեռնի.

Ինչ արաւ.

Վերցուց Սաւուղ զեղարդը Յով-
նաթանու վերայ.

Յովնաթան վազեց սեղանին՝ ե-
լաւ դուրս.

Այն օրը հաց չկերաւ.

Յովնաթանու սիրու կոտրեցաւ

Դաւիթի համար.

Իւր հոյրը Դաւիթի բանը վերջա-
ցուց.

ԶՐՈՒԾԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ըշտանեւ.

Պ-ու-ս-կ-ա-ն-է-ւ.

Առ ԲՌՆՀ ԵՐԵՄԵցցց ՅՈՂԱԲԱՆ
զԴԱԿԻԾ.

Առ սկր ՆՈՐԱ:

ԶԲՌՆՀ Էր ՎԱՂԻՆՆ.

Ամսամուս Էր:

ԶԲՌՆՀ ԱԲԱԼՈՑ Էր ՅԱՄԱՄԱԲԻՆ.

Խ ՎՐԵՄԱՆ ԱԲԱ:

ԱՌՆ պարտէր ԹԱՐԺԵԼ ԴԱԿԻԾ.

Խ ՊԱՉՈՒ ԱՆԴ:

ԶԲՌՆՀ Նշան ապյօք ՅՈՂԱԲԱՆ ԴԱՎ.
Թի.

Երկինքից ասէ ՎԻՐՆՈՔ:

ՅԲՌՆՀ ՃԳԷՐ ՊՎԵԲԻՆՆ.

Յամատարպյն:

ԱՌՆ անկանէր ՎԻՐԲԻՆ.

Խ պատանւոյն և այսր:

ԶԲՌՆՀ ՅԱՊՆԺԱՄ.

Խաղաղութիւն է քեզ, ասէ Եկես-

Եւ զԲՌՆՀ թէ ասէր, ի քեն և ան-
դըր է վիրբնն.

Զի արձակեաց զՔԵՊ ՑԵՐ:
Ամսամուսոն:

ԸՆԴԵՐ.

Խ սննեալին:

ԶԲՌՆՀ ԵՀԱՄ.

Ուտել Հաց:

ԱՌՆ Եմուս Սաւուղ.

Յամոռ յորմայեցն:

ԱՌՆ Եմուս սեղանն.

Խ կողմանէ արբոյի:

Եւ Եմուս սեղան.

Խ ԲԵՐԴՊԱՀԵՄ:

ԱՌՆ Էր ԴԱԿԻԾ.

ԶԱՀ Էր ՖԵՐԲԻՆ ՆՈՐԱ:

ՅՆ գնաց.

Բարկացաւ ի վերայ ՅՈՂԱԲԱՆՈւ:

ԶԲՌՆՀ Էր ի քաղաքին.

ԶԻՀ Էր ՖԵՐԲԻՆ ՆՈՐԱ:

ԶԲՌՆՀ արար Սաւուղ ի լուր բա-
նիցն.

ԶԻՀ Էր ՖԵՐԲԻՆ ՆՈՐԱ:
Բարկացաւ ի վերայ ՅՈՂԱԲԱՆՈՒ:

Եւ զԲՌՆՀ ասաց թէ զիսիցն.

Զի զաշնաւոր է ՅՈՂԱԲԱՆ որ-
դոյն Յեսսեաց.

Զ. Հքամայեաց ունել.

Խ. աղաքաւ.

Զ. Ի՞նչ եհարց Յովնաթան ցհայրն.

Զ. Ի՞նչ արար յայնժամ Սաւուղ.

Յ. Դիմեաց Յովնաթան.

Ո. Բըշափ էր տրտմութիւն նորա.

Զ. Ի՞նչ եղև Յովնաթանու վասն Դաւ-

թի.

Ըստեր.

Զպատանին:

Զ. որդի մահու է, ասէ:

Յ. ընդէր մեռանիցի Դաւթիթ.

Ա. Երացոյց զգեղարդն ի վերա
Յովնաթանու:

Դիմեաց ի սեղանոյ անտի արտօքս:

Ինկաւ վասն Դաւթի:

Ու եկեր յաւուր յայնմիկ հաց:

Զ. Վճարեաց հոյրն նորա վասն
Դաւթի:

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԱՆՈՒՆ ԲԱՏԻ ԵՒ ԱԱ.

Հ. Կարելի՞ է որ անունը բային հետ չհամաձայնի թուռվ.

Պ. Այս. ա, Անեղական անուններուն բայը սովորաբար
եղակի կըդրուի, զոր օրինակ.

Ակսաւ Տարդին բազմանալ:

Գարեւանն յամննայն աշխարհաց ժամանակաւու:

Իւան+ իմ ի դժոխս Արքիւսաւ:

Ապաշխարութեան արդասաւու աւազան լինէ:

Է, Հաւաքական անուններուն եւ որ եւ իցէ ընդհանուր
եւ ընդարձակ անուններուն բայը շատ անդամ եղակի կը-
դրուի, շատ անդամ ալ յօդնակի. զոր օրինակ.

Յարեւան այլ աղջ՝ որ ոչ հանաչին զՑեր:

Բազում ժամանակ լեւ նմա.

Բազում ժաղսվարդ գային առ նա:

Դ, Միջակ անուններէն ոմանք՝ հաւաքականաց պէս կը-
դրուին, այս ինքն երբեմն բային հետ թուով համաձայն,
երբեմն անհամաձայն, զոր օրինակ.

Եսէ կամ առէն խրատանշվո՞ց ցեղբայր իւր:

Գնացին այշ խրատանշվո՞ց ի տեղի իւր:

Տանէին դ դ ի նոցանէ մարս երկօւս:

Եսէն այշ ցընկեր իւր:

Դ, Ռ.յա, այդ, այն գերանունները՝ երբոր շատ քան մէկէն
կցուցընեն, եղակի կըդրուին յոգնական բայի հետ, զոր օրի-
նակ.

Ե.յա Են աղք+ որդւոց նոյի:

Ե.յա Են դանչ+ արդարութեան:

Ե.յա ոչ եթէ բնածին բար+ Են:

Ե, Երբոր քանի մի եղական անուններ Լով կապուած են,
բայր սովորաբար յոգնակի կըդրուի, շատ անգամ ալ եղա-
կի, զոր օրինակ.

Պատախանի Էրաւան Ուշըստ+, Մշաս+ և Աքւշնադուլ:

Մարդարէկանային Ընդիւս+ և Օւատարէս+:

Փուր+ և Դէշ անդ Են:

Ե.յա և Ադ շուրջ է զնովաւ:

Կոստան և գոշին հարաւ:

ՅՈՒԹՆԵՑԱԿ ՀԱՇՎԵՐՄԱԴԻ ԶՈՐՈՐԴԻ.

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Ել Յովնաթան ընդ առաւօտն յանդն, որպէս ժամագիր եղեւ Դաւթի. եւ ասէ ցպատանեակն. ընթագիտ զփքինն զոր ձգեցից. Խըրեւ ձգեաց զփքինն, յոգաւ պատանեակն մինչեւ ցտեղի փքնին. եւ աղաղակեաց Յովնաթան զկնի պատանեկին եւ ասէ. ի քէն եւ անգրէ զփքինն, փութացեալ արագեա եւ մի կացցեօ:

2. Եւ ետ Յովնաթան ըգգործին իւր ցպատանեակն, եւ հրամայեաց նմա մոտանել ի քաղաքն. Յայնթամ յարեաւ Դաւիթ ի տեղւոջէն յորում թաքուցեալ կայր, եւ երկիր եպագ. Յովնաթանու երիցս անգամ. եւ համբաւրեաց իւրաքանչիւր զըն-

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Յովնաթան ելաւ գընաց առաւօտուն դաշտը, ինչպէս որ խօսք գրած էր Դաւթի հետ. ասացիւր հետը եղած տղուն. վազէ գըտիր նետը որ պիտի նետեմ: Խըրոր նետեց, գնաց տղան մինչեւ նետին տեղը. Յովնաթան կանչեց տղուն ետեւէն ու ասաց. քեզնէ անգին է նետը, շուտ արագնա, մի կենար:

2. Յետոյ Յովնաթան իւր գործիքը (աղեղն ու նետերը) տուաւ տղուն ու ասաց որ քաղաք մտնէ. Այն տեն ելաւ Դաւիթ իւր պահուըտած տեղէն, եւ երեք անգամ երկրպագութիւն արաւ Յովնաթանու. պագւորեցան իրարու հետ, ու

կեր իւր, եւ լացին երկոքին,
մինչեւ ցմեծ վախճան:

3. Առէ Յովնաթան ցԴա-
փիթ. երթ ի խաղաղու-
թիւն. եւ որպէս երդուաք
մեք երկոքին յանուն Տես-
ուըն, Տէր լիցի վկայ ընդ իս
եւ ընդ քեզ, ի մէջ զաւակի
իմոյ եւ ի մէջ զաւակի քոյ
մինչեւ ցյաւիտեան:

4. Յարեաւ Յովնաթան
եւ եմուտ ի քաղաքն, եւ
Դաւիթ գնաց առ Աքիմելէք
քահանայ, էառ ի նմանէ
զսուօերն Գողիաղու, եւ
փախեաւ առ Անքուս արքայ
Գեթայ. Եւ իբրեւ չարախօս
եղեն զնմանէ ծառայքն Ան-
քուսայ առ նա, երկեաւ
յոյժ Դաւիթ յերեսաց նո-
րա, այլակերպեաց առաջի
նորա զերեսս իւր, ծորեցու-
ցաներ զլորձունս իւր ի վե-
րայ մօրուաց իւրոց, եւ
յափսիթերս խաղայր:

երկուքն ալ լացին երկար
ժամանակ:

3. Յովնաթան ասաց
Դաւիթի. բարով երթաս-
եւ ինչպէս որ մեք երկուքս
երդում արած եմք Աստու-
ծոյ անունովը, Սատուած
վկայ լինի իմ մէջս ու քու
մէջդ, նմանապէս իմ զա-
ւակիս ու քու զաւակիդ մէջ
մինչեւ յաւիտեան:

4. Ելաւ Յովնաթան, մը-
տաւ քաղաքը. իսկ Դաւիթ
գնաց Աքիմելէք քահանա-
յին, առաւ անկից Գողիա-
դու թուրը, եւ փախաւ Գե-
թացւոց Անքուս թագաւոր-
ին քով. Երբոր Անքուսայ
ծառաները չարախօսու-
թիւն արին իբրեն վերայ թա-
գաւորին, վախցաւ անկից
Դաւիթ, կերպարանքը այ-
լափոխեց ծումոկեց նորա
առջեւը, բերնէն շողիքները
կվաղցընէր, ու երեսի վե-
րայ սողալով կխաղար:

5. Ասէ Անքուս ցծառայս
իւր. ընդէ՞ր մուծէք առ իս
զայրդ այսահար. միթէ կա-
րօտ ինչ իցեմ ես այսահա-
րօք. մի մտցէ գա ի տուն.
Եւ գնաց անտի Դաւիթ.

5. Անքուս ասաց իւր ծա-
ռաներուն. ի՞նչ բանի հա-
մար քովս բերիք այդ դի-
ւահար մարդը. միթէ ես
կարօտ եմ դիւահարներու.
Թող չմտնէ դա տունս. Դա-
ւիթ ալ գնաց անկից.

ԴԱՍ. Բ.

ՀԱՏԵՆՏԻՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

ԵԼ Յովաթան յանդն.
Ժամադիր եղն. Դաւիթ.

Ընթա զիտ զփրինն.

Զգեաց զփրինն.

Տոզաւ պատանեակն մինչև յաեղի
փրնին.

Աշաղակեաց Յովաթան զիտի
պատանեկին.

Իքն և անդր է փրինն.

Փութացեալ արագեա և մի՛ կաց-
ցեա.

Ես զգործին իւր ցպատանեակն.

Յարեաւ Դաւիթ ի տեղւոքին յո-
րում թաքուցեալ կայր.

Երկիր եպագ Յովաթանու երկի-
ցըս անզամ.

Համբուրեաց իւրաքանչիւր զըն.
կեր իւր.

Յովաթան ելաւ անդը կամ զաշող,
Դաւիթի հետ ժամանակ որոշեց,
խոռք զրաւ.

Վազէ զոիր նետը.

Նետը նետեց.

Դնաց տղան մինչև նետին տեղը.

Յովաթան տղուն եռև էն կանչեց.

Քեզնէ անդին է նետը.

Սրտորալով զնա ու մի՛ կճնար.

Իւր գործիքը տղուն տուաւ.

Դաւիթ իւր պահուըտած տեղն
ելաւ.

Երկիր անզամ երկրպագութիւն-
րաւ. Յովաթանու.

Երկուքն ալ մէկ զմէկ համբուրե-
ցին.

Եացին երկոքին մինչև ցմեծ վախ-
ճան.

Երթի ի խաղաղութիւն.

Երգուաք մէք երկոքին յանուն
Տեառն.

Տեր լիցի վկայ ընդ իս և ընդ քեզ-

Ի մէջ զաւակի իմայ և ի մէջ զա-
ւակի քշ.

Եմուս Յավեաթան ի քաղաքն.

Դաւիթ զնաց առ Արիմնէք քա-
հանայ ի Նոսրա.

Էտու ի նմանէ պաշար և զաւակին
Գողիազու.

Փախեաւ առ Անքուս արբայ Գե-
թայ.

Չարախօս եղին զԴաւիթէ ծառայ-
քըն Անքուսայ.

Երկեաւ յոյժ Դաւիթ յերեսաց
նորա.

Այլակերպեաց առաջի նորա զե-
րես իւր.

Շորեցուցանէք զլորձունս իւր ի
վերայ մօրուաց իւրոց.

Յափսիթերս խաղայր.

Ընդէր մուծէք առ իս զայրդ ոյ-
սահար.

Միթէ կարօն ինչ իցեմ ես պյառ-
հարք.

Մի մոցէ դա ի տուն.

Դնաց անտի Դաւիթ.

Երկուքն ալ լացին երկար ժամա-
նակ.

Բարով երթաւա.

Երկուքն երգում արինք Աստու-
ծոյ անունովը.

Աստումն վկայ լինի իմ ու քու
մէջդ.

Իմ զաւակիս ու քու զաւակիդ մէջ.

Յովնաթան քաղաքը մոտաւ.

Դնաց Դաւիթ Աքիմնէք քահա-
նային՝ Նոսրա քաղաքը.

Առաւ անկից ճամբռու պաշար ու-
Գողիապին թուրը,

Փախաւ Գեթացւոց Անքուս թա-
գաւորին քովը.

Անքուսայ ծառաները Դաւիթի վե-
րայ չարախօսութիւն արին.

Սաստիկ վախցաւ Դաւիթ անկից.

Կերպարանքը այլափոխեց նորա
առջելը.

Ծողիքները կը վաղցընէք մօրուքին
վերայ.

Երեսի վերայ սողալով կխաղար.

Ի՞նչ բանի համար բերիք քովս ոյտ
զիւահարը.

Միթէ ես զիւահարներու կարօն
եմ.

Թող չմտնէ դա իմ տուն
Դաւիթ զնաց անկից.

ԴԱՍ Դ.

ԶՐՈՒՑԱՑՐՈՒԹԻՒՆ.

Հ-ըշմանդ.

Յովել Յովնաթան ընդ առ աւօտն.
Ընդէր.

Զի՞նչ ասաց ցպատանին յետ ձը-
գելցն զիբինն.

Մինչև ուր գնաց պատանեակն.

Զի՞նչ արար յայտ ժամ Յովնա-
թան.

Զի՞նչ ասաց ցնա.

Ո՞րպէս փութացըց զնա.

Զի՞նչ ետ ցպատանեակն.

Ո՞ւր ասաց նմա մոտանել.

Ուստի յարեաւ Դաւիթ.

Ո՞րպէս երկիր եպազ Յովնաթա-
նու.

Զի՞նչ համբուրեցին զիմեանս.

Եւ զի՞նչ ի համբուրելն.

Ո՞րչափ լացին.

Զի՞նչ ասաց Յովնաթան ցնա-
փթ յորժամ արձակեաց զնա.

Յով երդուեալ կին երկոքեան.

Ո՞ւմ զի՞նչ կոչեաց զջեր.

Ո՞ւ եմուս ի քաղաքն.

Առ ո՞ գնաց Դաւիթ.

Զի՞նչ էառ ի նմանէ.

Գ-ըշմանդ.

Յանդ.

Զի՞նչ ժամապիր եղեալ կը Դաւիթի
Ընթառ ասէ զիս զվիրինն.

Մինչև ի տեղի վիքնին.

Աղաղակեաց զհետ պատանեկինն.

Թէ ի քէն և անդր է վիքինն.

Փութացեալ արագետ ասէ և մի՛
կացցեաւ.

Զգործին.

Ի քաղաքն.

Ի տեղւողէն ուր թափուցեալ կոյր,
Երիցս անդամ.

Համբուրեաց իւրաքանչիւր զըն-
կեր իւր.

Լացին երկոքեան.

Մինչև ցմնծ վախճանն.

Երէմ ի խաղաղութիւն ասէ.

Յանուն Տեսառն.

Ընդ ինքն և ընդ նաև.

Յովնաթան.

Առ Ուհիմլէք քահանայ ի Նոսրա.

Պաշար և զսուսերն Դողիազու.

Առ ո՞վախնեաւ.

Ա՞ էր Անքուաւ.

Զի՞նչ արարին ծառապքն Անքու-
ասյ.

Յումիկ էրիեաւ. Դաւիթ.

Զի՞նչ արար առաջի նորաւ.

Եւ ոչի զի՞նչ առնէր.

Զ. ասաց Անքուս մուծեալ ծա-
ռայիցն առ նաւ.

Ի՞ւ ոչ կարօտ լինել ասաց զանձ.
Նէն.

Զո՞ր արգելս եղ Դաւիթի.

Եւ զի՞նչ արար Դաւիթ.

Առ Անքուաւ.

Աըբայ Գելմայ.

Զարտախոսելին առ նա զԴաւիթէ:

Յերեսաց Անքուասայ.

Ալակերպեաց զերես իւր.

Մորեհցուցանէր զլորձունս իւր ի
վերայ մօրուաց իւրոց և յափ-
սիլմէրս խաղայր:

Զայր զիւահար:

Այսահարաց:

Մի մտանել ի տուն նորաւ:

Գնաց անտիւ:

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ.

ԱՆՈՒՆ ԲԱՏԻ ԵՒ ԲԱՏ.

Հ. Երբոր անունները այլեւայլ դէմքի լինին՝ Լով կազ-
ուած, բայը լի՞նչ դէմք կդրուի.

Պ. Սովորաբար առաջին կամ երկրորդին համաձայն եւ
յոգնակի. զոր օրինակ՝

Ե՞ս եւ դու հեծեալ էաւ ի դոյգս:

Ե՞ս եւ ձայը իմ մի էմաւ:

Յորժամ դու եւ նա միայն էցէւ:

Կեցցսաւ եւ մի մշտցսաւ եւ մէ եւ դու եւ սպացսաւ մեր:

Հ. Բայը յըկրնար համաձայնիլ մերձաւոր դէմքին.

Պ. Երբեմն, զոր օրինակ.

Զի մի հշտանէցին եւ նուա եւ դսու:

Վաղիւ դու որդիւ: քո ընդ քեզ անցին:

Արա զկամն դորա, եւ իւաց դու եւ մէ:

Հ. Երբոր այլ եւ այլ դէմք ցուցընող անունները էամ, և աւ, և մէ՛ շաղկապներով կապուած են, բայը մը դէմքին կը համաձայնի.

Պ. Միշտ մերձաւոր անուան դէմքին, զոր օրինակ.

Այլ թէ Ն+ կամ հրեշտակ յերկնից աւետարաննեցէ ձեզ աւելի քան զոր աւետարաննեցաքն ձեզ, նզովեալ լու:

Խշտիւոյէ զքեզ քո բերան, եւ ոչ իս:

Դու ի նմանէ, եւ ոչ թէ նա ի քէն հապաւ:

Գրովոյէ զքեզ ընկերն, եւ մի գու:

ԵՐԹՆԵԱԿ ՔԸՆՆԵԲՈՐԴԻ ՀԻՆԴԵԲՈՐԴԻ.

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻԲ.

1. Ժողովէին առ Դաւիթ ամենայն վշտատեաք եւ պարտապանք, իբրեւ արք չորեք հարիւր, եւ էր նոցա զօրագլուխ: Իսկ Սաւուզայ լուեալ եթէ Աքիմելէք քահանայ ետ Դաւիթի սլաշար

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Դաւիթի քով հաւաքուեցան ամեն նեղութեան մէջ ու պարտքի տակ մնացած մարդիկ՝ չորս հարիւրի չափ, եւ ինքը նոցա զօրագլուխն եղաւ: Իսկ Սաւուզերը լոեց թէ Աքիմելէք քահանայ ետ Դաւիթի սլաշար

եւ զսուսերն Գողիագու, հրամայեաց կոտորել զքահանայսն Տեառն՝ երեք հարիւր եւ հինգ այր, եւ ըդնոմբա քաղաք քահանայիցն եհար սրով սուսերի՝ յառնէ մինչեւ ցկին, ի արդայոց մինչեւ ցստնդիաց, յարջառոյ եւ յիշոյ մինչեւ ցայխար:

2. Եւ ապրեցաւ սրդի մի Աքիմելէքայ, անուն նորա Աքիաթար, եւ փախեաւ ըդհետ Դաւթի: Ասէ ցնա Դաւթիթ. Նո եմ պարտական ոգւոց տան հօր քոյ. նիստ առ իս եւ մի երկնչիր. զի ուր խնդրեցից անձին իմոյ տեղի, խնդրեցից եւ քում անձին:

3. Իսկ Սաւուղ խնդրէր դԴաւթիթ զամենայն աւուրս, եւ ոչ մատնեաց զնա Տէրի ձեռս նորա: Ազգ եղեւ նմա եւ ասեն. ահաւանիկ Դաւթիթ յանապատին Գադ-

հանայն տուեր է Դաւթի պաշար ու Գողիագու թուրը, հրամայեց որ ջարդեն Աստուծոյ քահանայթը՝ երեք հարիւր հինգ հոգի եւ քահանայից քաղաքը նումբան թրէ անցուց՝ էրիկ մարդ կնիկ մարդ, տղայ՝ կաթնկեր, կով՝ էշ՝ ոյխար, բոլորն ալ:

2. Միայն Աքիմելէքայ մէկ սրդին ազատեցաւ՝ անունը Աքիաթար, եւ Դաւթի քովը փախաւ: Դաւթիթ ասաց անոր. Քու հօրդ տանը մարդոց մահուանը ես պարտական եմ. նիստ քովը ու մի վախնար. վասն զի ուր որ ինծի համար տեղ մի գտնեմ, քեզի համար եւս կգտնեմ:

3. Իսկ Սաւուղ անդադար Դաւթիթը կուզէր գըտնել, բայց Աստուած զինքը նորա ձեռքը չտուաւ: Իմացուցին իրեն թէ ահա Դաւթիթ Գադդայ անապատին

դայ է. եւ առ ընդ իւր երիս հազարս արանց ընտրելոց յամենայն Խորայէլէ, եւ գնաց խնդրել զԴաւիթ եւ դարս նորա:

4. Անդ էր այր մի, եւ եմուտ Սաւուղ հանգչել. եւ Դաւիթ եւ արք նորա նստէին ի ներքնումն այրին. Ասին արքն Դաւթի ցնա. ահա այսօր է զորմէ ասաց Տէր ցքեղ՝ մատնել զթշնամիս քո ի ձեռս քո, եւ արասցես ընդ նոսա որպէս հաճոյ թուի յաջս քո:

5. Յարեաւ Դաւիթ եւ եհատ զտումն լոգկին Սաւուղայ գաղտ. այլ զզջացոյց զԴաւիթ սիրան իւր ընդայն, եւ ասէ ցարսն իւր. Քաւ լիցի ինձ ի Տեառնէ միսել ի նա զձեռս իմ, զի օծեալ Տեառն է:

մէջ է. իսկոյն առաւ հետը երեք հազար հոգի՝ բոլոր Խորայէլացւոց մէջէն ընտրուած մարդիկ, ու գնաց որ վնտուէ Դաւիթն ու նորա մարդիկը:

4. Այլ մի (Տաղար) կար այնտեղը, Սաւուղ մէջը մըտաւ որ հանգստանայ. այն միջոցին Դաւիթ ու անոր մարդիկը նստած էին ներսի այրին մէջ. Ասին Դաւթի մարդիկն իրեն թէ այս է այն օրը՝ յորում խոստացաւ քեզի Աստուած որ թըշնամիներդ ձեռքդ. տայ, եւ ինչ որ կուզես՝ կրնաս անել նոցաւ:

5. Ելաւ Դաւիթ ու Սաւուղայ վերարկուին ծայրը կտրեց գաղտաւկ. բայց յետոյ սիրտը ցաւեցաւ արածին, ու ասաց իւր մարդոցը. Աստուած չանէ որ ձեռքը նորա վերայ վերցընեմ, վասն զի Աստուծոյ օծեալըն է:

ՀԱՏԵՆՏԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Ժողովներն վշտատեղքն առ Դա-
միթ.

Երբեւ արք չորեկհարիւր.

Դաւիթ զօրապղուխ էր նոցա.

Աքիմելէք ետ Դաւիթի պաշար.

Ետ նմա զառւսերն Գողիադռւ.

Հրամայեաց կոտորել զքահանայսն
Տեռուն.

Երեկհարիւր և հինգ պյու.

Զնոսիա քաղաք քահանայիցն
եհար արով սուսերի.

Յառնէ մինչև ցկին.

Ի ողայոց մինչև ցառնդիաց.

Յարջառոյ և յիշոյ մինչև ցոյխար.

Ապրեցաւ որդի մի Աքիմելէքայ.

Արիաթար փախեաւ զհետ Դաւ-
թի.

Ես եմ պարտական ոգուց տան հօր
քոյ.

Նիստ առ իս և մի՛ երկնչիր.

Ուր և խնդրեցից անձին իմոց տեղի.

Խողբեցից տեղի և քում անձին.

Սաւուղ խնդրէր զԴաւիթ զամե-
նայն աւուրս.

Ոչ մատնեաց Տէր զԴաւիթի ի ձե-
ռըս Սաւուղայ.

Նեղութիւն քաշողները կժող-
վուեկին Դաւիթի քով.

Զորս հարիւր մարդու չափ.

Դաւիթ նոցա զօրապեան էր.

Աքիմելէք պաշար տուաւ Դաւիթի.

Տուաւ անոր Գողիադին թուրը.

Հրամայեց որ Աստուծոյ քահա-
նաները ըարդեն.

Երեկ հարիւր հինգ հոգի:

Քահանաներուն նոսիա քաղաքը
թրէ անցուց.

Էրիկմարդ կեհկմարդ.

Բոլոր տղաքը՝ մինչև կաթ ուտող-
ներն ալ:

Կովերը՝ էշերը, մինչև ոչխարները.

Աքիմելէքոյ մէկ որդին աղատեցաւ.

Արիաթար փախեաւ զնաց Դաւիթի
ետեն էն.

Հօրդ ցեղին մարդոցը մանելուն
պատճառ ևս եմ.

Քովս նիստ ու մի՛ վախնար:

Ուր ալ ինծի համար տեղ մի՛
միշնտռեմ:

Քեզի համար ալ տեղ կփնտռեմ:

Սաւուղ Դաւիթի ետեն ընկած էր
բոլոր ժամանակը:

Աստուծ Դաւիթը Սաւուղին
ձեռքը շտուաւ.

Ահաւասիկ Դաւիթ յանապատին
Գաղցայ է:

Առ ընդ իւր երիս հազարս արանց.
Գնաց խնդրել զԴաւիթ և զարս
Նորա.

Անդ էր այր մի.

Եմաւա Սաւուղ հանգչել յայրին.

Դաւիթ նստերի ներքնութիւն այրին.

Ահա այսօր է զորմէ ասաց Տէր
Տքեղ.

Մատնել զթշնամիս քո ի ձեռս քո.
Արասցես ընդ նոսա որպէս հաջո
Թուի յաշս քո.

Եհատ Դաւիթ զտուուն լոգին
Սաւուղայ.

Զդացցց զԴաւիթ սիրոն իւր.

Քառ լիցի ինձ ի Տեառնէ.

Մինել ի նա զմեռս իմ.

Օծեալ Տեառն է.

Ահա Դաւիթ Դավիդայ անապատին
մէջ է:

Երեք հազար հոդի առաւ հեռոց:
Գնաց փնտուելու Դաւիթը և նորա
մարդիկը:

Այս տեղը այր մի կար:

Սաւուղ ներս մոռաւ որ հանգչի այ-
րին մէջ :

Դաւիթ նստած էր ներսի այրին
մէջ :

Ահա այս է Աստուծոյ քեզի ասած
օրը:

Թշնամիներդ ձեռքք մատնելու:

Ինչ որ ուզե՞մ կրնաս անել նոցա:

Դաւիթ Սաւուղայ վերաբերին
ծայրը կտրեց:

Դաւիթին խղճմառածքը զարկու,
զղաց:

Աստուծ չանէ Աստուծած հեռու
պահէ ինծմէ:

Որ ձեռքս նորա վերայ վերցընեմ:

Աստուծոյ օծած մարդն է:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հարցուանէ.

Ոյք ոմանք ժողովին առ Դաւիթ.
Քանիք էին այնպիսիքն.

Պ-Պ-Ա-Հ-Ա-Ն-Է-

Աշտատեկը և պարտապանք:
Երք իբրև չորեքհարիւր:

Ա՞ էր զօրապուխ նոցա.
 Զի՞նչ ես Աքիմելէք Դաւիթի.
 Եւ զոր զէն ես նմա.
 Զ՞ո հրամացեաց Սաւուղ կոտորել.
 Քանի՞ էր թիւ կոտորելոցն.
 Զի՞նչ արար ընդ նումբա քաղաք
 քահանայից.
 Զ՞ո կոտորեաց ի նմա.
 Կոտորեաց և զմանկունս.
 Եւ զանասռնս.
 Ո՞ ապրեցաւ ի կոտորած և անոի.
 Զի՞նչ անուն էր նորա.
 Յ՞ո փախեաւ Աքիմառը.
 Զի՞նչ ասաց Դաւիթ զանձննս առ
 Աքիմաթար.
 Ո՞րպէս ընկալու զնա.
 Ո՞ւր խոստացաւ խնդրել նմա ան-
 դի.
 Զի՞նչ առնէր Սաւուղ.

 Զի՞նդ պաշտպանեաց Տէր Դաւ-
 թի.
 Ո՞ւր ասացին ցՍաւուղ թէ զա-
 նի Դաւիթ.
 Ո՞րչափ մարդիկ առ ընդ իւր Սա-
 ւուղ.
 Ո՞րպիսէք ոմանիք էին արքն.

 Ո՞ւր զնաց Նգբագ.

 Զի՞նչ էր յանապատին.

Դաւիթ:
 Պաշար:
 Զառուսերն Գողիտքու.
 Զգահանայն Տեառն.
 Երկը հարիւր և Հինգ.
 Եհար զայն սրով սուսնիրի.

 Յառնէ մինչև ցկին.
 Այս ի աղայոց մինչև ցանդիաց.
 Յարդառոց մինչև ցոշխար.
 Որդի մի Աքիմելէքայ.
 Աքիմաթար.
 Զէտա Դաւթի.
 Ես եմ, անձ պարտական սպաց
 տան հօր քոյ.
 Նիստ ասէն առ իտ և մի երեսչիր,
 Ուր և խնդրեցից ասէն անդի ան-
 ձին իմոյ խնդրեցից և քեզ.
 Խնդրէր զԴաւիթ զամնայն ա-
 ռուրս.
 Ու մասնեաց զնա ի ձեռս Սա-
 ւուղայ.
 Յանապատին Գաղրայ.

 Երիս հաղարս.

 Աքք ընտրեալք յամնայն Դարա-
 յելէ.
 Գնաց խնդրել զԴաւիթ և զարս
 նորա.
 Այր մի.

Ո՞ւր եմուտ Սաւուղ.

Ո՞ւր նսուէր Դաւիթ.

Զի՞նչ ասացին քնա ալքն Դաւիթի.

Զի՞նչ կարէր առնել Դաւիթը ընդ
Սաւուղ.

Զի՞նչ արար Դաւիթ.

Գո՞չ էր Դաւիթը ընդ գործն զոր
արար.

Ո՞րպէս հրաժարեաց ի սպանանե-
լց զՍաւուղ.

Ընդէր.

Եմուտ հանգել յայրին

Ի ներքնումն ոյրին

Այսօր մատնեաց ասեն, Տէր ըզ-

Թշնամիս քո ի ձեռո քու

Սպանանել զնաւ

Եհատ զտուուն լողին Սաւուղայ:

Զշշացսց զնա սիրուն իւր ընդ ոյն:

Քաւ լիցի առէ ինձ միսել զձեռո
իմ ի նաւ.

Զի օծեալ Ցեառն է,

ԳԱՍ Գ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ.

ԲԱՅ ԱՌ ԽՆԴԻՐ.

Հ. Ի՞նչ է Էնտէպ.

Պ. Խուրէի կը սուի այն հոլովեալ բառը՝ որ բային քով կը-
դրուի ու անոր նշանակութիւնը կամբոզիցնէ:

Հ. Էական բայերը ի՞նչ հոլովով խնդիր կառնուն.

Պ. Գրեթէ ամեն հոլովներով՝ ըստ իմաստից. զոր օրինակ՝
Ուղղ. Ես Եմ Տէր Առողութեաց քու. Դուք Եւ ու երկրի.

Դուքէւ լցո աշխարհի:

Սեռ. Զի՞նչ վնաս է իմ. Զի՞նչ անսւն է ու: Եշ ամաց եր-
կոտասանից:

Տը. Ընդէր է ինչ այդ. Այսօր Եղև փրկութիւն դան-
այսինքի. Անուն նաև (էր) Ցովհաննէս.

Հայց. Օ՞չի՞ւ ու ասէք զինէն՝ թէ իշեմ: — Այս անսովոր հայցականը ուղղականի մտքով է:

Դործ. Ամենայն ինչ նսկաւ եղաւ: Եղիշի հանգիստ նորադադասնել: Թանձրութիւն ծովուն (էր) նուաւ:

Բաց. Ի մէնջ էս, թէ ի լուսահեաց մերօց: Յումէ՞ է 2ընորհն: Տէգ նորա (էր) է 600 ավոն արծաթոյ:

Հ. Ներգործական բայերը լոնչ տեսակ խնդիր կառնուն.

Պ. Սովորաբար երկու տեսակ. մէկը կըսուի ինդէւ ուրիշ, միւսը ինդէւ բնութեան:

Հ. Աւուի ինդէւը մըն է.

Պ. Այն խնդիրն է որ ամեն ներգործական կպահանջէ իրեն քովը յայտնի կամ զօրութեամբ:

Հ. Բնութեան ինդէւը մըն է.

Պ. Բնութեան խնդիր կըսուի այն խնդիրն՝ որ սեռի խնդրէն զատ, կամ, նաեւ առանց անօր, կդրուի բային քով՝ այլ եւ այլ հոլովներով:

Հ. Ներգործական բայերուն սեռի խնդիրը լոնչ հոլով կըդրուի.

Պ. Հայցական. զոր օրինակ՝

Ճ'անայէմ զիման:

Գալուստեաց զըսուհաննես:

Ոչ սուտել մէս, եւ ոչ ընդէլ գինէ:

Մառ բարի պատու բարի առնէ:

Ընել պառաւ. պնիւլ այգիս, ևն:

ՆՈՐԴԵԾՈՎ ԳՅԱՆԵՐՈՐԴԻ ԱՎՑԵՐՈՐԴԻ.

ԴԱՍ Ա.

ԲԵԱԳԻՐ.

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Հաճեաց Դաւիթ զարսըն իւր բանիւքը եւ ոչ ետ նոցա սպանանել զԱւառւզ, որ յարեաւ յայրէ անտի եւ էջի ճանապարհն։ Աղաղակեաց Դաւիթ զհետ նորա եւ ասէ. տէր իմ արքայ։ Եւ իրքեւ հայեցաւ Սաւուզ ի թիկունս իւր, անկաւ Դաւիթի վերայ երեսաց իւրոց յերկիր, եւ եպագ նմա երկիր։

2. Ասէ Դաւիթ ցԱւառւզընդէ՞ր լսես բանից ժողովրդեանն՝ որ ասեն թէ Դաւիթ խնդրէ զանձն քոտես՝ հայր իմ ահա տտուն լոդկի քո ի ձեռին իմում. ես հատի զսա, եւ ոչ սպանի զքեզ, ծանիր եւ տես՝ զի ոչ գոյ յիս չարութիւն, եւ դու պաշարես զանձն իմ։

1. Դաւիթ խօսք անցուց իւր մարգոցը, եւ լթողուց որ մեռցընեն Սաւուզը, որ ելաւ այրէն ու ճանապարհըն իջաւ։ Աղաղակեց Դաւիթ նորա ետեւէն ու ասաց. տէր իմ թագաւոր, նրբոր Սաւուզ գարձաւ էտին նայեցաւ, Դաւիթ երեսի վերայ գետինն ընկաւ ու երկրպագութիւն արաւ անոր։

2. Ասաց Դաւիթ Սաւուզի. ինչո՞ւ մտիկ կանես ժողովրդեան խօսքերուն՝ որ կասեն թէ Դաւիթ զքեզ մեռցընել կուզէ. տես հայր իմ, ահա վերաբերեաւ ծայրը ձեռքո է. ես կտրեցի այս, եւ զքեզ չմեռուցի. հասկըցիր ուրեմն որ իմ սիրոս չարութիւն չկայ, իսկ զու

առնուլ զնա: Դատ արասցէ
Տէր ընդ իս եւ ընդ քեզ,
եւ առցէ զվրէժ իմ ի քէն,
եւ ձեռն իմ մի եղիցի ի
քեզ:

3. Եւ արդ զմյր զհետ ե-
լեալ ես արքայդ Խորայէլի,
եւ զմ՞ հալածես. — զհետ
շան միոյ մեռելոյ եւ զհետ
լուոյ միոյ. տեսցէ Տէր եւ
արասցէ ինձ իրաւունս ի
ձեռաց քոց:

4. Առէ Սաւուղ. Այդ քմ՞
ձայն իցէ, որդեակ իմ Դա-
ւիթ. — եւ ամբարձ զձայն
իւր եւ ելաց. — Դու արգար
ես, ասէ, քան զիս. զի դու
հատուցեր ինձ բարիս, եւ
ես հատուցի քեզ չարիս:

5. Եւ արդ գիտեմ զի
հատուատեսցի թագաւորու-
թիւնն Խորայէլի ի ձեռս քո-
երգուիր ինձ ի Տէր, զի մի

զիս կպաշարես որ ձեռք ձը-
գես: Աստուած կտրէ իմ ու
քու դատաստանդ, եւ իմ
վրէժս ինքը հանէ քեզնէ,
թող իմ ձեռքս վերադ
ցինի:

3. Բայց եւ որո՞ւ ետեւէն
ընկեր ես ով իսրայէլի թա-
գաւորը, ով է որ դուն կը-
հալածես. — մեռած շանմի,
լուի մի ետեւէն ես. Աստ-
ուած տեսնէ ու դատաս-
տանս կտրելով ձեռքէդ
ազատէ զիս:

4. Սաւուղ պատասխա-
նեց. Այդ քո՞ւ ձայնդ է, որ-
դեակ իմ Դաւիթ. — այս
ասաց ու ձայնը բարձրա-
ցուց՝ լացաւ. — դու քան
զիս արդար ես, ասաց, վա-
սըն զի դուն ինծի բարիք
արիր, եւ ես քեզի չարիք
հատուցի:

5. Այժմ լաւ գիտեմ որ
իսրայէլացւոց թագաւորու-
թիւնը քու ձեռքդ պիտի
անցնի. երդում արա ինծի

սատակեցես զգաւակ իմ
զկնի իմ; եւ մի եղծցես զա-
նուն իմ ի տանէ հօր իմոյ;
Եւ երդուաւ Դաւիթ Մա-
ւուղայ:

Աստուծոյ անունովն որ
ինձմէ ետքը իմ սերժնդո
ցցնցես, եւ հօրս ցեղին մէ-
ջեն անունս չփնացընես:
Դաւիթ ալ երդում արաւ
Մաւուղին:

ՊԱՍ

ՀԱՏԸՆՑԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Հաճեաց Դաւիթ զպրսն իւր բա-
նիք.

Ոչ ես նոցա սպանունել զՄաւուղ-
Յարեաւ Սաւուղ և էջ ի ճանա-
պարհն.

Աղաղակեաց Դաւիթ զչես նորա.
Հայեցաւ Սաւուղ ի թիկունս իւր.
Անկաւ Դաւիթ ի վերայ երեսաց
իւրոց յերկիր.

Ընդէր լսես բանից ժողովրդեանն.

Ասեն թէ Դաւիթ խնդրէ զանձն
քո.

Ահա տառուն լողին քո ի ձեռին ի-
մում.

Ես հասի զատ.

Ոչ սպանի զքեզ.

Մանիր զի ոչ զոյ միս շարու-
թիւն.

Դաւիթ իւր մարդիկը համզեց
իրուրով:

Զմողուց որ Սաւուղը սպաննենս
Սաւուղ եղաւ ու ճանապարհն
վերայ իջաւ:

Դաւիթ նորա ետևէն կանչեց:
Սաւուղ ետևը նայեցաւ:
Դաւիթ երեսի վերայ զետինն ըն-
կաւ:

Խնդր մտիկ կանես ժողովրդեան
իրուրուն:

Կասեն թէ Դաւիթ կուզէ կեանք
առնուլ:

Ահա քու վերարկուիդ ծովը իմ
ձեռքս է:

Ես կարեցի զայս:

Զմողուցի զքեզ:

Հասկըցիր որ իմ սիրտս շարու-
թիւն չկայ:

Դու պաշարես զանձն իմ՝ առ-
նուլ զիս.

Դաս արացէ Տէր ընդ իս և ընդ
քեզ.

Ասցէ Տէր զվրէժ իմ իբէն:

Տեսն իմ մի եղիցի ի քեզ.

Զշը զհետ ելեալ ես ալբայդ Խօ-
բայէլի:

Զմ հալածես.

Զհետ շան միոյ մեռեց և զհետ
լուս միոյ.

Տէր արացէ ինձ իրաւունս ի ձե-
ռաց քոց.

Այդ քո՞ ձայն իցէ, որդեակ իմ
Դաւիթ.

Ամբոք Սաւուղ զձայն իւր և ե-
լոյց.

Դու արզար ես քան զիս.

Դու հասուցիր ինձ բարիս:

Ես հասուցի քեզ չարիս.

Հաստատեցի Թագաւորութիւնն
Խօրայէլի ի ձեռս քո.

Երդուիր ինձ ի Տէր.

Մի սատակեացես զզաւակ իմ ըզ-
կնի իմ.

Մի եղեցես զանուն իմ ի տանէ
հօր իմայ.

Երդուաւ Դաւիթ Սաւուղոյ.

Դու զիս անդրագար կպաշարես որ
ձեռք ձգես:

Աստուած տեսնէ իմ ու քու զա-
տաւասանք:

Աստուած իմ վրեժն հանէ քեզնէ,
Իմ ձեռքս քու արիւնդ չմտնէ:

Որու եաւէն ընկեր ես, ով թա-
զաւոր Խօրայէլի:

Զմ հալածես:

Մեռած շան մի ետևէն, լուի մի
ետևէն:

Աստուած զատաստանս կորէ՝ ա-
զատէ զիս ձեռքեդ:

Քո՞ ձայնդ է այդ որդեակ իմ
Դաւիթ:

Սաւուղ ձայնը բարձրացուց լա-
ցաւ:

Դու քան զիս արզար ես:

Դուն ինձի աղէկութիւն արիբ:

Ես քեզի շարիք հասուցի:

Խօրայէլացուց թագաւորութիւնը
քու ձեռքդ պիտի անցնի ու մը-
նայ:

Երգում արա ինծի Աստուծոյ ա-
նունովը:

Իմ զաւակս ինձմէ եոպը մի զըն-
ջեր:

Անունս իմ հօրս ցեղն մի ընջեր,
մի հաներ:

Դաւիթ երդում արաւ Սաւուղին:

ԴԱՍ Գ.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ԵՐԵՎԱՆԻ.

Գ-ԴՐԱԽԱՆՔ.

Խ. Համեաց Դաւիթ զարսն իւր.
 Զի՞նչ ոչ ես թշլ նոցա.
 Զի՞նչ արար յայնժամ Սաւուղ.
 Եւ զի՞նչ Դաւիթ.
 Ո՞ւր հայեցաւ Սաւուղ.
 Զո՞ր մեծարանս եցոյց առ ևս Դա-
 ւիթ.
 Ո՞ւմ լոէր Սաւուղ.
 Զի՞նչ ասկին ժողովուրդքն.

 Զի՞նչ կոյր ի ձեռին Դաւթի
 Ո՞ւ եհատ զայն.
 Զի՞նչ ոչ արար Դաւիթ ընդ Սա-
 ւուղ.
 Զի՞նչ ասաց ցնա զի ծանիցէ.
 Զի՞նչ առներ Սաւուղ յիւրմէ
 կողմանէ.
 Ո՞ւմ թողոյր Դաւիթ զբառ իւր.
 Զի՞նչ ասեր թէ արացէ Աս-
 տուած.
 Խըն զի՞նչ չկամեր առնել.
 Զի՞նչ հարցաներ Դաւիթ յալքոցն
 Կորոյելի.
 Զի՞նչ զի՞ն ելեալ ասաց զնա.
 Զի՞նչ առնելոց եր 8կր.
 Զի՞նչ եհարց Սաւուղ.

Բանիք:

Սպանանել զՍաւուղ.

Յարեաւ և էջ ի ճանապարհն:

Աղաղակեաց Դաւիթ զի՞ն նորա:

Ի թիկունս իւր:

Անկաւ ի վերաց երեաց իւրոց
 յերկիր:

Բանից ժողովը զեանն:

Թէ Դաւիթ խնդրէ զանձն Սաւու-
 ղոց:

Տառաւ լոգինն Սաւուղոց:

Դաւիթ.

Ոչ սպան զնաւ:

Զի ոչ զոյր ի նմա չարութիւն:

Հատուցաներ Դաւթի չարիւ:

Առունեցու:

Դաս արացեւ ընդ իս և ընդ
 քեզ:

Առնուլ զվրէօֆ իւր ի նմանէ:

Զոյր զի՞ն մանեալ ես արքոյդ իւ-
 րոյէլի:

Շան մից մեռեց կամ լուց մից:

Երաւունս ի ձեռաց Սաւուղոց:

Այդ քո ձայն իցե ասէ, որդեակ
 իմ Դաւիթ:

Զի՞նչ կուեաց զԴաւիթ.

Ա՞րպէս ելաց Սաւուղ.

Զի՞նդ համեմատեաց զանձն իւր
ընդ Դաւիթ.

Զի՞նչ հատոց Դաւիթ Սաւուղ.

Եւ զի՞նչ Սաւուղ Դաւիթ.

Զի՞նչ գուշակեաց նմա.

Զի՞նչ պահանջեաց ի Դաւիթ.

Զի՞նչ եր երդումն.

Եւ զի՞նչ վասն անուան իւրոյ.

Եւ զի՞նչ պար Դաւիթ.

Որդեակ իւր:

Ամբարձ զձոյն իւր և ելաց:

Արդար ասաց զնա քան զինքն:

Բարիս:

Հարիս:

Թէ հաստատեցի թագաւորու-
թիւն իսրայէլի ի ձեռս նորա:

Երգնուղ նմա ի Տէր:

Զատակել զզաւակ նորա զինի
նորա:

Մի եղծանել զոյն ի տանէ հօր
իւրոյ:

Երգուաւ նմա:

ԳԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԲԱՑ ԵՎ ԱՆԴԱՐ.

Հ. Կրաւորական բայերուն սեռի խնդիրն ի՞նչ հօլով կը-
զրուի.

Պ. Բացառական. զոր օրինակ՝

Ճ'անաչմ յիմոցն. Ալէեսցէ է հօչէ իմմէ:

Պատուեմք զհայրն մեր, եւ պատուիմք է նմանէ:

Հինգն յիմար՝ յորոց լառաւ ողորմութեան իւղ ամա-
նաւ:

Հ. Ուրիշ ի՞նչ հօլով կրնայ գրուիլ կրաւորական բային
սեռի խնդիրը.

Պ. Երբեմն գործիական, եւ քիչ անգամ սեռական կամ
տրական - զոր օրինակ՝

Գյշելըն հարդարէլու-:

Պղծէլ նույն-:

Գյշեալու արոյ:

Լուսովարտ խառաջէ եւ իւնիանէնեալ + երկայն գէներու:

Նկեղեցի փրկեալ քո սուլըբ:

Ոչ ախանջաց լոյն, եւ ոչ մուաց չմանին:

Հ. Ներգործական՝ կրաւորական եւ լեզոք բայերը թնջ
հօլովով կուզեն բնութեան խնդիր.

Պ. Զանազան հոլովներով՝ ինչպէս որ նոցա նշանակու-
թիւնն ու տեղը պահանջէ - զոր օրինակ՝

Ի պարզ անտի ծառն ճանաչի:

Ի պարզ նոցա ծանիջիւ + զնոսա:

Գյշեցան յերիւր օտար:

Ո-ոչէ՞ հաց առանց աղի:

Առաջնորդէւած դու է խառաջէ և լու:

Անցանել առ ո՞ւ, յերիւր, ընդ ուղիւր զօրինութիւն և լուսութիւն եւն:

Ճշականաց

Ճշական

այս պատճեն արարակա՞՞յ

այս առանց մասնաւուր

բառու ու մասնաւուր մին:

Այ նայ ու ի՞ն ճիշտա՞յ

այս ամերիկա պատճեն

ի ու դժուար որո նախոյ

պատճեն թշուամն դիպոյլու ըմելի

ու առաջ պատճեն ոգ

պատճեն նոց առաջ

գույքա՞ ամերիկա՞ ոգ

առաջ պատճեն ոգ

ու առաջ պատճեն ոգ

ամերիկա՞ նայ պատճեն

պատճեն մեջ յանձնակրաց

լածու

այ պատճեն ոգ պատճեն

ամերիկային պատճենադ

Դաստիարակության և պատմական գործառնությունների համար մասնակից աշխատավորությունը առաջանձնական է այս դաստիարակության մեջ:

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Կուաւ Դաւիթ Եթէ կարուել նաքաղ կարմելացի զհօտս իւր, եւ առաքեաց առ նամանկունս տասն. ասէ. Հարցէք յանուն իմ զողունէ նորա եւ առաս- ջիք. Աւասիկ լուայ եթէ կր- տուրք են հօտից քոց որը ընդ մեզ էին յանապատի աստ- գացեն մանկունքդ շնորհա- տուածի աչաց քոց, զի ի բա- րի աւուր եկին, եւ տացես որչափ ինչ եւ գացէ ձեռն քո ծառայից քոց, եւ որ- դոյ քում Դաւիթի:

2. Ըմբոստացաւ նաքաղ, եւ ետ պատասխանի ծառա- յիցն Դաւիթի եւ ասէ. Ո՞ Դաւիթ, կամ ո՞ որդին Յես- սեայ. բազմացեալ են այսօր ծառայք գնացականք իւ- րաքանչիւր յերեսաց տես-

1. Լոեց Դաւիթ որ նա- բադ կարմելացին իւր ոչ- խարները կխօսւզէ. տասը կըտրին յուղարկեց անոր ու ասաց. իմ կողմանէօ իրեն ողջութիւնը հարցուցէք ու ասէք, ահա լոեցի որ այսօր կխօսւզուին քու ոչխարներդ՝ որ մեզի հետ էին անապա- տիս մէջ թող քու շնորհքդ լինի այս տղոց վերայ, որ աղէկութեան օրդ եկան, ու սրտէդ ինչ որ բխէ՝ տուր ծառաներօւդ, եւ Դաւիթ որդւոյդ:

3. Նաքաղու սիրտը ելաւ, պատասխան տուաւ Դաւ- իթի ծառաներուն ու ասաց. Դաւիթ ո՞վ է, կամ թէ Յեսսէի որդին ո՞վ է. այսօրուան օրս շատցեր են ի- րենց տիրոջը ձեռքէն փախ-

ալն իւրոյ: Արդ առնու-
ցմէմ զհացիմ եւ զգինի իմ
եւ զգենիս իմ զոր զենի
կտրողաց իմոց պատրու-
ճակու եւ տայցեմ արանց
զորս ոչ գիտիցեմ ուստի ի-
ցեն:

3. Դարձան մանկունքն
Դաւթի, եւ պատմեցին նմա
ըստ բանիցն այնոցիկ: Ասէ
Դաւթ ցարսն իւր: Ածէք
ընդ մէջ իւրաքանչիւր ըզ-
սուր իւր: Եւ Արիգեա կին
նարազու առատ էր իմաս-
տութեամբ եւ գեղեցիկ
տեղեամբ յոյժ: Պատմեաց
նմա մի ոմն ի մանկուոյ
անտի եւ ասէ: Ահա առա-
քեաց Դաւթ հրեշտակո
յանապատէն օրհնել զաէր
մեր, եւ նա խուսեաց ի նո-
ցանէն: Եւ արքն երախտա-
ւոր էին մեզ յոյժ ոչ ար-
գելին զմեզ, եւ ոչ իւիք
խուսեցին զմեզ՝ որչափ ե-
ղեաք ընդ նոսա ի բացի:

Հող ծառաները: Հիմա ետ
միթէ պիտի առնո՞ւմ իմ
հացս ու գինիս, եւ իմ
ոչխարներս խուզողներուն
համար մօրթած գառներս
եւ լերս, ու պիտի տամ այն
մօրդկանց որ չեմ գիտեր
թէ ուսկից են:

3. Դարձան Դաւթի ծա-
ռաներն ու այն խօսքերը
պատմեցին իրեն: Ասաւ Դա-
ւթիւր մարդոցը թէ ամեն
մարդ թութը կապէ մէջըը:
Խոկ նարազու կինը Արիգեա
մեծ խելքի տէր էր, տերա-
քովին ալ խիստ գեղեցիկ:
Ծառաներէն սէկը պատմեց
անոր ու ասաց թէ ահա
Դաւթ մարդիկ յուղաբ-
կեր էր անապատէն որ մեր
տիրոջը բարեմազթութիւն,
անեն: Կա անզնցմէ երեսը
պահեց, մինչդեռ այն մար-
դիկը մեզ շատ աղէկութիւն
արած էին, ոչ արգելք մի
արած են մեզի, եւ ոչ զըր-
կանք կամ նեղութիւն:

ուն անկա պահանջանք այս
ամ նենամա վայր Առիլ
ամ ամ տակա առ առաջ
4. Խակ տէրն մեր նա-
բաղ այր ժանտ է եւ խիստ
եւ յար խորհրդովք, եւ ոչ
զոյ խօսել ընդ նմա, եւ արգ-
գիտացես եւ տեսցես զինչ
գործեցես:

պղծառով մշտ առ մշտառ
առ առամ ունդ մշտառար առ
մաս էն պարանուզ առ
ողջան ճառա

ԳԱՅՈՒՄ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Կարենարաշ Կարմըցի զհամ
իւր ճառա ունդ յա ճառ
Դաւիթ տարեաց առ նու ման
կունս տասն.

Հարցեր յանուն իմ զողջունէ
նորա.

Վառը են հօմից քոց.

Ընդ մեզ էին յանապատի առա.

Քոցնե մանկութք շնորհս առաջի
ռաջոց քոց առ ամիս ու շնորհ
իրացի առուր ենին.

Տացես որամի ինչ և զոցէ ձեւն
քոց.

Ըստուածաւ նարաշ.

Ոչ Պարիթ.

տուած են՝ որքան ժամա-
նակ որ նոցա մօտ կեցած
եմք դաշտը:

4. Խսկ մեր տէրը նաբազ
ժանտ մարդ է, խստաբարոյ
ու չարամիտ, եւ հետը խօ-
սել լիինիր: Այժմ դուն այս
գիտցիր ու նայէ թէ ինչ
պիտի անես:

անձ մեջ անուած ու մթւամ
շամ պիտու անդառ ուսու
ու ան ուսու անդառ ուսու

Կարաշ Կարմըցին իւր ովհար
մեր կիսու զէ:

Դաւիթ տարը կորիմ յուղարկեց
անոր:

Կարենարաշ Կարմըցին իւր ովհար

ման բարեւ արէք իրեն,

Ովհարներուն խուզելու օրն է:
Սեղի չեմ Եթո այս անոպատին մէջ
Այժ աղաքը արժանի լիին քու
տղեկութեանզեր, ու մէնաց
Բարի օր եկուն, ուս մէջ զա

Խու որ սրտեց ըմին տաս իրենց,
ու մէն ոչ է:

Բարկացաւ նարաշ:
Դաւիթն ոչ է, առան ունց զաւը

Բարձրացեալ են ծառոյք զնացա-
կանք իւրաքանչիւր շերեսաց
տեսան իւրց:

Առնուցում զհաց իմ և զբնի իմ.
Առնուցում զզենդիս իմ զոր զենի
կտրողաց իմնց:

Զենի պատրումակո.

Տայցեմ արանց զորս ոչ զիտիցեմ:

Ոչ զիտեմ ուստի իցեն.

Պատմեցին մանկունքն Դաւ Թի ըստ
բանիցն այնոցիկ.

Ածէք ընդ մէջ իւրաքանչիւր ըդ
սուր իւր:

Արիգեա առաս եր ինձառու-
թեամբ.

Գեղեցիկ եր տեղեամբ մըց.

Պատմաց մի ոմն ի մանկուս ան-
տի.

Առաքեաց Դաւիթ հաւշտակո յա-
նապատճեն.

Օրհնել զուր մը.

Նա խուսեաց ի նոցանեն.

Արքն երախտառը եին մէջ մըց.

Ոչ արգելն զմեզ.

Ոչ իւրի խուսեցին զմեզ.

Ըստցեր են իրենց տէրերուն ձեռն
քեն փախած ծառ աները:

Եմ հացո ու զինիս տղնում:

Առնում իմ ոչիսաքներս խզողնեն
բուն համար մորթան կենցանի-
ներս:

Գեր ու համեղ կենդանիներ մոր-
թեցին:

Այնպիսի մարդկանց տամ որ չեմ
խռնչաւր:

Չեմ զիտեր թէ ուսկից են:

Պատմեցին տղաքը Դաւթի ոյն
խօսքերը:

Ամեն մարզ թուրը մէքը թուր
կապէ:

Արիգեա շատ խելացի եր:

Տեսքը շատ զեղեցիկ եր:

Տղոքը մէկը պատմաց ան-

պատճեն:

Մեր տիրովը ըստինացթութիւն
անելու:

Նա երեսը պահեց անոցմեն:

Մարդիկը մէզի շատ աղկութիւն
արած են:

Մեզի արգելք չեղան:

Ամենենին պրեսոր լուրին մէզին:

Արշափ եղեաք ընդ նոսա ի բացի.
Համա ուստ հաւառակ է այս.

Տերն մեր նարալ այր ժանա է և
Խիստ և չար խորհրդավը.

Աչ զոյ խօսել ընդ նմա.

Տեսակն զինչ գործեցնեա.

Ո՞րշափ ժամանակ որ նոցա հետ
Եկաց անապատը.

Մեր ակրը նարալ ժանա մարդ
է, և բանաւոր և չարամիտ.

Նորա հետ խօսել չլինիր,
Նայէ թէ բնչ պիտի անես.

ԳԱՍ Գ.

Նմէ որ նոսա զոյ անապատ հայէ մաս.

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Զինչ առներ նարալ Կարմալացի.
Հոր կորցնեան.

Զինչ առաքեաց առ նա Դաւիթ.
Առ բնչ առաքեաց զնոսա.

Զինչ գործ Էր յայնմ առոր
նարապու.

Ո՞ր էին հօտքն նարապու ուստ ուստ

Զինչ հայց էր Դաւիթ վասն
մանկուցն.

Երբ եկեալ առեր զնոսա.
ոճուար

Զինչ ինորդէր առլ նոցա. ուն Ա

Զինչ արար նարալ .

Ո՞րպէս նախատեաց զԴաւիթ և
զարս նորա. ուն որոն անձրսալ

Զինչ առեր թէ առնոցու. ուստ

Ո՞րպէս եղեն նա զզնովիս իր. ուն Ա

Զինչ էին զենլիքն.

մարդ առառ նամակ մարդ
ուստ ուն Պարունակու մարդաւու

Կորէր զհօտա իր,
Մանկուն առան.

Հարցանել զողջունէ նարալու:
Կառուրք էին հօտից նորա:

Յանապատի անդ, ուն վիրարու

Զի գոցին շնորհս առաջի աշաց
նորա:

Կ բարի առոր

Ո՞րշափ թէ և զոցէ նեսն նորա
Ըմբուտացաւ:

Ո՞վ Դաւիթ առէ, և ով որին
Ենսանց:

Զզնին զորս եղեն կարողաց իւ-
րոց:

Կորողաց իւրոց, մըս առաջ զի և Ա
Պատրուժակիք:

Ո՞ւ մ չկամեր տալ զնոսին.

Զի՞նչ ոչ զիտէր զնոցանե.

Զիտէր պատմեցին մանկունքն
Դաւթի զիրան.

Զի՞նչ հրամայեց Դաւիթ արան.
Տըն իւրոց.

Ո՞ւ էր Արիզեա.

Որպիսի՞ ոք էր ուսմանան մասա-

Որպիսի՞ էր առաջանաբ.

Ո՞ւ պատմեց նմոն.

Ուստի՞ առաքեց Դաւիթ Հօնե.

տակս.

Առ ի՞նչ առաքեալ ասաց Դաւիթ
զիրեշական.

Զի՞նչ արար նարազ.

Զի՞ բարիս արարեալ իմն նոնցա-

արքն ը լուսա վզմի ուս.

Արգելի՞ն երբէք զնոսա.

Խուեցի՞ն կիւթ զնոսա.

Որլափ ժամանակս.

Որպիսի՞ ոք էր նարազ.

Ո՞րպէս հարկ էր խօսել ընդ նմա.

Զի՞նչ պարտ էր Արիզեայ ապնիշ.

Կա ն առասով անձնաւուի սարմի դմի է արցու զիշու զիւմու.

(անձնաւուի միջու լոյնու մարտ այս)

Հաղումամ և ա վայ լուսու մարտ մարտ անձնաւուի (

անձնաւուի մարտ անձնաւուի մարտ անձնաւուի)

~~~~~

անձնաւուի պայու մարտ անձնաւուի մարտ անձնաւուի .

. մարտ անձնաւուի մարտ անձնաւուի

Արանց զորս ոչ զիտիցեւ.

Թէ ուստի՞ իցնն.

Ըստ բանիցն այնոցիկ:

Ածել իւրաքանչիւր զսուր իւր

ընդ մէջ.

Կի՞ն նարազու.

Առատ էր իմաստութեամբ.

Գեղցիկ յոյժու զոզոր մասի.

Ա՛յ ոմի իւ մանկուցն առաջ դասու.

Յանապատէ անտի.

Առ ի՞նչ առաջան ի նոնցանէն, լո՞յն որդի

Օրինել զնարազ.

Առ ի՞նչ առաջան ի նոնցանէն, լո՞յն որդի

ԴԱՍ Դ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ԽԵՇԻՐ ԱՆՈՒԱՆ.

Հ. ԱՆՈՒԱՆՆԵՐԸ Ե՞ՐԸ Եւ ԲՌԱՋԱԾԵՍ ԽՆԴԻՔ ԿԱՌԱՆՈՒՆ.

Պ. Նաև գոյականն եւ ածական անուաններ խնդիք կառանուն՝ երբոր բայի նշանակութիւն ունին. զար օրինակ՝ ծընունդ բառը կինշանակե ծնունեն, ցնանին, եւ նմաւը լիւ էլլի իւնիւն՝ էլլին, էլլին, էլլիո. ուստի կրօսուի, ցնունդն Արքահամու զիստհակ. ծնունդն է իւստին. ծնունդ իւստին եւլի.

Հ. Ներգործական բայի նշանակութիւն ունեցաղ անուանները լինչ հոլովով խնդիք կառանուն.

Պ. Սովորաբար սեռական; եւ երբեմն հայցական, զար օրինակ, Յարելունիւն նշանամոյն (այս ինքն յատել զթշնամին):

Յետ ընդունելունիւնան գիտունիւնան ճշմարտունիւն (այս ինքն ընդունելոյ զգիմութիւն ճշմարտութեան):

Տարանելու բարանցն:

ՃՌԱՀԱՆԻՆ ՊՐԵՂԻՆ: անձ պահ չկառաջ ոչ հրաշ սկզբով ՇԱՄԱՐՏԻՆ աբուրու լուսոյն ճշմարտիւնը ոչ այսպ չկարող լուսմք իւսից նոցա ի մեր լեզուս զմեծութեծո Աստուծոյ (այս ինքն խօսելոյ նոցին զմեծամեծո):

ՕՐԻՆԱԿԻՆՆ իսահակայ զՅակուս, եւ Յակոբայ զՅա-

րուս:

Հ. Ածականներն լինչ խնդիք կառանուն՝ երբոր բաղդատութիւն ցուցընեն.

Պ. Սովորաբար հայցական խնդիր կառնուն՝ +ան քառավ, եւ երբեմն սեռական կամ բացառական. զոր օրինակ՝

Ա՞ե՞ծ +ան զՅԱՀՆԱՆՀԱ:

Ոչ է ծառայ ՆԵծ +ան զԴԵՇ իւր:

ԶԵՄ աՆՄՐԱՖՈՅՆ +ան զՅԵՂ:

Ոչ է աշակերտ լաւ +ան զՔԱՐՔԱՊԵՐ իւր:

Ամենայն նախաբարեցն առաջ:

Ոյինչ նստաղ էր կոյսն արքային հասան, (այս ինքն քան դհասակ արքային):

ՅԵՐԻՇԱՆՆԵց զԵՐԱԲՈՅՆ է:



### ԵՐԹՆԵՑԿ ՔԱՅՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ.

#### ԴԱՍ Ա.

##### ԲՆԱԳԻՐ.

1. Աճապարեաց Արիգեա  
եւ առ երկերիւր նկանակ  
եւ երկերիւր ամանս զի-  
նւոյ, եւ հինգ ոյխար հա-  
սուցեալ եւ հինգ արգու-  
փոխնդոյ եւ կայթ մի չա-  
միչ եւ պաղատիտս երկեր-  
իւր, եղ ի վերայ իշոց, եւ  
ասէ ցմանկախն իւր. եր-  
թայք յառաջագոյն քան

##### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Արտորաց Արիգեան ու-  
տառաւ երկուհարիւր հաց,  
երկուհարիւր աման զինի,  
հինգ պատրաստած ոյխար,  
հինգ չափ փոխինդ, մէկ  
քթոց չամիչ, երկուհարիւր  
կապ կոխած թուզ, զբաւ  
էշերու վերայ եւ ասոց իւր  
ծառաներուն. զուք ինծմէ  
առաջ զնացէք, ես ալ ձեր

դիս, եւ ես գամ զկնի ձեր,  
Եւ առն իւրում ոչ եհան ի  
վեր:

2. Եւ ահա Դաւիթ եւ  
արք նորա իջանէին ընդ  
զանխուլ լերինն ընդ առաջ  
նորա: Ասէ Դաւիթ. զուր  
ուրեմն պահեցի զամենայն  
ինչ Նաբաղու յանապատի  
անդ, զի հատոյց ինձ չար  
երախտեաց իմոց:

3. Փութացաւ Արիգեա  
եւ վազեաց յիշոյն, անկաւ  
առաջի Դաւիթի իվերայ երե-  
սաց իւրոց եւ երկիր եպադ-  
նմա եւ ասէ. Յիս, տէր,  
վնաս իմ. մի դիցէ տէր  
իմ զսիրտ իւր ի վերայ առն  
ժանտի Նաբաղայ. զի ըստ  
անուան նորա եւ ինքն է.  
եւ ես աղախին քո ոչ տեսի  
զմանկունս քո զոր առաքե-  
ցեր:

4. Եղիցին իրբեւ զնա-  
բաղ թշնամիք քո եւ որ

ետեւէն կուգամ: Իսկ իրեն  
էրկանը չիմացուց:

2. Նոյն միջոցին Դաւիթ  
ու նորա մարդիկը լեռան  
չերեւցած կողմէն կիջնէին  
դէպ ի նորա առջեւը: Դա-  
ւիթ ասաց թէ ուրեմն զուր  
տեղը պահպանութիւն արի  
Նաբաղու ամեն բանին այն  
անապատին մէջ, որ իմ  
աղէկութեանցս վոխարէն  
յարիք արաւ ինծի:

3. Արիգեան շուտով վար  
ցատքեցիշուն վերայէն՝ ըն-  
կաւ Դաւիթի առջեւը երեսի  
վերայ, երկրպագութիւն  
արաւ անոր ու ասաց. Յան-  
ցանքո գիտեմ, տէր. Բող  
ձեր սիրտը չզայրանայ Նա-  
բաղայ պէս ժանտ մարդուն  
վերայ, վասն զի ինքն ալ իւր  
անուանը պէս է. իսկես քու  
աղախինդ՝ յուղարկած ծա-  
ռաներդ տեսած չունիմ:

4. Բող Նաբաղու նման  
լինին քու թշնամիքդ, եւ

խնդրիցեն տեառն իմում  
չարիս: Եւ արդ առ զօրհ-  
նութիւնս զոր երեր աղա-  
խին քո տեառն իմում, եւ  
տացես մանկտւոյդ. եւ  
բարձ զվնաս աղախնոյ քոյ:  
Եղիցի անձն տեառն իմոյ  
ծրարեալ ի ծրարի կենաց  
Տեառն Աստուծոյ, եւ զան-  
ձըն թշնամեաց քոց պար-  
սպարեսցես ի մէջ պար-  
սպոկաց:

5. Ասէ Դաւիթ ցԱրի-  
գեա. Օրհնեալ Տէր Աստ-  
ուած Խորայէլի, որ առա-  
քեացն զքեզ այսօր ընդ-  
տուած իմ. եւ օրհնեալ լի-  
ցիս դու որ արգելեր զիս  
այսօր աստ չերթալ յա-  
րիւն: Բայց կենդանի է Տէր  
Աստուած Խորայէլի, զի թէ  
չէիր փութացեալ եւ եկեալ  
ընդ առաջ իմ, ոչ թողուի  
յամենայնէ Նաբազու մին-  
չեւ ցառաւօտն:

որոնք որ յարութիւն կկտ-  
մենան քեզ՝ տէր իմ: Այ-  
ժըմ առ այս ընծաները որ  
քու աղախինդ բերած է՝  
տէր իմ, ու տուր այդ տը-  
զոցը, աղախնոյդ յանցան-  
քին ալ ներէ: Տէր իմ: Քու  
անձդ պատուական գանձի  
պէս պահուի մնայ Աստու-  
ծոյ կենացը հետ, իսկ քու  
թշնամիներդ պարսատիկով  
զարնես մեռցընես ամեն  
ժամանակ:

5. Դաւիթ առաց Արի-  
գեային. Օրհնեալ է Խորա-  
յէլի Տէր Աստուածը, որ  
զքեզ այսօր իմ առջեւս  
յուզարկեց. դուն ալ օրհ-  
նեալ լինիս որ զիս այսօր  
այստեղ արգելեցիր, չըթո-  
ղուցիր որ երթամ արիւն  
անելու: Բայց երգում կա-  
նեմ Խորայէլի Աստուծոյն  
անունովը, որ եթէ շուտով  
առջեւս չելնէիր, Նաբազին  
մէկ բանն ալ ողջ պիտի ըր-  
թողուի մինչեւ առաւօտ:

ՀԱՏԵՇԻՐ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.

Աճապարեաց Արիգեաւ և առ.

Ա՛ռ երկերիւր ամանս զինւոյ.

Հինգ ոչխար հասուցեալ.

Հինգ արդու փոխնդոյ.

Կայթ մի շամիչ.

Պաղատիսա երկերիւր.

Եղի ի վերայ իշոց.

Երթոյք յառաջազոյն քան զիս.

Ես զամ զինի ձեր.

Առն իւրում ոչ եհան իվներ.

Իջանէին ընդ զանիսուլ լերինն.

Զուր ուրեմն պահցի զամենայն  
ինչ նարադու.

Հատոյց ինձ չար երախտեաց իմոց.

Փութացաւ Արիգեաւ և վաղեաց  
յիշոյն.

Անկաւ առաջի Դաւթի ի վերայ  
երեսաց իւրոց.

Երկիր եպագ Արիգեաւ Դաւթի.

Յիս աէր վնաս իմ.

Մի զիցէ զսիրս իւր ի վերայ նա-  
րադայ.

Իվերայ առն ժանտի.

Ըստ անուան նորա և ինքն է.

Ես աղախին քո.

Արտորաց Արիգեան ու առաւ

Երկու հարիւր աման զինի առաւ

Հինգ հատ պատրաստած ոչխար:

Հինգ շամի փոխինդոյ:

Կողով մի կամ քթոց մի շամիչ:

Երկու հարիւր կապ կոխած թուզ:

Էշերու վերայ դրաւ:

Խնձէ առաջ զնացէք:

Ես ձեր ետևէն կուզամ:

Եւր էրկանը չիմացուց:

Կիշնէին լեռան չիմացած կողմէն:

Ուրեմն զուր տեղը նարազու-  
ամէն բաներուն պահպանու-  
թիւն արեցի:

Իմ աղեկութեանս դէմ չարու-  
թիւն արաւ:

Արիգեան շուտ մը էշէն վար ցատ-  
քեց:

Երեսի վերայ ընկաւ Դաւթին առ-  
շէը:

Երկրպագութիւն արաւ Արիգեան  
Դաւթի:

Յանցանքս զիտեմ, Տէր իմ:

Թող սիրոը չկոտրի նարազու-  
վերայ:

Այնպիսի ժանտ մարդու վերայ:

Խնքն ալ իւր անուանը նման է:

Ես քու աղախինդ:

Աւ աեսի զմանկունս քո զոր առա-  
քեցեր.

Առ զօրհնութիւնս զոր երեր աղա-  
խին քո.

Բարձ զվեաս աղախնոյ քոյ.

Եղիցի անձն քո ծրարնալ ի ծը-  
րարի կնաց Տետոն.

Զանձն թշնամեաց քոց պարսա-  
քարեցես.

Աստուած առաքեաց զքեզ այսօր  
ընդ առաջ իմ.

Օրհնեալ լիցիս դու որ արգելեր  
զիս այսօր ասա.

Արգելեր զիս չերթալ յարիւն.

Կենդանի է Տէր Աստուած Խորայ-  
ելի.

Թէ չէիր փութացեալ և եկեալ  
ընդ առաջ իմ.

Ու թողուի յամնայնէ նարազու.

Չաեսայ քու յուղարկան ծառա-  
ներդ.

Ընդունէ աղախնոյդ բերած ընծա-  
ները.

Ներէ աղախնոյդ յանցանքը:

Քու կեանքդ Աստուածոյ կնաց  
ծրարին մեջ պահպանուի:

Քու Թշնամիներդ պարսատիկով  
ընջես:

Աստուած յուղարկեց զքեզ այ-  
սօր իմ առջես:

Օրհնեալ լինիս որ արգելեցեր զիս  
այսօր այսաել,

Չթողուցիր որ ուրիշի արինը  
մտնեմ:

Կորայելի Աստուածը վիսյ թող  
լինի:

Եթէ շուտով չարտորայիր առ-  
ջես գալու:

Նարազու մեկ բանը ողջ չէի ձգեր:

#### ԴԱՍ Գ.

#### ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Հ-ՀՅՄ-Ն-Ն-.

Զի՞նչ արար Արիգեա իրմէ լուաւ  
զոր ինչ առացն նարազ.

Զի՞նչ էառ.

Քանի՞ ամանս զինւոյ.

Պ-Պ-Ա-Հ-Ն-Ն-.

Աճապարեաց:

Նկանակս երկերիւր:

Երկերիւր:

Արդիսի՞ն ոչխարս.

Արշափի փոխինդ.

Եւ չամիչ և պաղատիտս միքան.

Ա՞յլ եղ զիբան.

Ե՞րբ առաքեաց զմանկախն.

Ինքն ժրպէս զնայր.

Ասաց ինչ առն իւրում.

Աւստի՞ իշանէր Դաւիթիթ և արքն իւր.

Զիանդ զանգատ կալաւ Դաւիթ զնաբաղայ.

Զի՞նչ հասոյց նարաղ երախ. տեացն Դաւիթի.

Զի՞նչ արար Արփեա ի տեսանելն զԴաւիթ.

Զար մեծ արտնս արար նմա.

Ա՞յլ երկիր եպադ Արփեա.

Եւ զի՞նչ ասաց.

Արփէս ջանայր զիշուցանել զբասումն նորա.

Զի՞նչ կոչեաց զոյրն իւր.

Զիանդ նկարագրեաց զբարս նորա.

Զի՞նչ ասաց զանձնէն ի չքմեղս լինելով.

Արփէս մատոյց Դաւիթի զընծայսն զոր երեր.

Զիարդ կոչեր զընծայօն.

Արփէս հայցէր զներում.

Հասուցեալս:

Արդու մի:

Կոյթ մի չամիչ, և պաղատիտս երկերիւր:

Ի վերայ հշոց:
